«ՄԱՄՆԱԳԻՏԱԿԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ՈՐԱԿԻ ԱՊԱՀՈՎՄԱՆ ԱԶԳԱՅԻՆ ԿԵՆՏՐՈՆ»
ՀԻՄՆԱԴՐԱՄ

ՄԵՀՐԱԲՅԱՆԻ ԲԺՇԿԱԿԱՆ ՔՈԼԵՋԻ ԻՆՍՏԻՏՈՒՑԻՈՆԱԼ ՀԱՎԱՏԱՐՄԱԳՐՄԱՆ ՓՈՐՁԱԳԻՏԱԿԱՆ ԶԵԿՈՒՅՑ

Երևան – 2021

ՆԱԽԱԲԱՆ

«Մեհրաբյանի անվան բժշկական ինստիտուտ» Սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության քոլեջը (այսուհետ՝ «ՄԲԻ» ՍՊԸ-ի ինստիտուցիոնալ հավատարմագրումն իրականացվել է հաստատության կողմից ներկայացրած դիմումին համաձայն: Ինստիտուցիոնալ հավատարմագրման գործընթացը համակարգվում և իրականացվում է «Մասնագիտական կրթության որակի ապահովման ազգային կենտրոն» հիմնադրամի (ՈԱԱԿ) կողմից:

Իր գործողություններում ՈԱԱԿ-ն առաջնորդվել է «ՀՀ կառավարության 2011թ.-ի հունիսի 30-ի N978-Ն որոշմամբ հաստատված ՀՀ մասնագիտական կրթական ծրագրեր իրականացնող ուսումնական հաստատությունների և դրանց մասնագիտությունների պետական հավատարմագրման» կարգով և 2011 թվականի հունիսի 30-ին հաստատված «ՀՀ մասնագիտական կրթության հավատարմագրման չափանիշները հաստատելու մասին» N959-Ն որոշմամբ: Փորձաքննությունն իրականացրել է «Մասնագիտական կրթության որակի ապահովման ազգային կենտրոն» հիմնադրամի փորձագիտական խմբի ձևավորման կարգ»-ի պահանջներին համապատասխան ձևավորված անկախ փորձագիտական խումբը, որը բաղկացած է 4 տեղացի փորձագետներից:

Ինստիտուցիոնալ հավատարմագրումը միտված է ոչ միայն որակի ապահովման արտաքին գնահատմանը, այլև հաստատության կառավարման և կրթական ծրագրերի որակի շարունակական բարելավմանը: Առանձանահատուկ շեշտադրվել է հաստատության և գործատուների հետ համագործակցությունը և դրա ազդեցությունը կրթության բովանդակության վրա: Զեկույցը պարունակում է «ՄԲԻ» ՍՊԸ քոլեջի ինստիտուցիոնալ կարողությունների փորձագիտական գնահատման արդյունքները՝ ըստ ՀՀ մասնագիտական կրթության հավատարմագրման չափանիշների:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ԳՆԱՀԱՏՄԱՆ ԱՄՓՈՓՈՒՄ 4
ԻՆՍՏԻՏՈՒՑԻՈՆԱԼ ԿԱՐՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՓՈՐՁԱԳԻՏԱԿԱՆ ԳՆԱՀԱՏՈՒՄ՝ ԸՍՏ ՀՀ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ՀԱՎԱՏԱՐՄԱԳՐՄԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐԻ 4
ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ 12
ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ ԸՆԹԱՑՔԸ 12
ԳՆԱՀԱՏՈՒՄ ԸՍՏ ՀԱՎԱՏԱՐՄԱԳՐՄԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐԻ 16
ՀԱՄԱՌՈՏ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅՈՒՆ ՄՈՒՀ-Ի ՎԵՐԱԲԵՐՅԱԼ 16
I. ԱՌԱՔԵԼՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՆՊԱՏԱԿՆԵՐ 18
II. ԿԱՌԱՎԱՐՈՒՄ ԵՎ ՎԱՐՉԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ 20
III. ՄԱՍՆԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԿՐԹԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐ 26
IV. ՈՒՍԱՆՈՂՆԵՐ 32
V. ՊՐՈՖԵՍՈՐԱԴԱՍԱԽՈՍԱԿԱՆ ԵՎ ՈՒՍՈՒՄՆԱՕԺԱՆԴԱԿ ԿԱԶՄ 36
VI. ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԶԱՐԳԱՑՈՒՄ 41
VII. ԵՆԹԱԿԱՌՈՒՑՎԱԾՔ ԵՎ ՌԵՍՈՒՐՍՆԵՐ 45
VIII. ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆ 49
IX. ԱՐՏԱՔԻՆ ԿԱՊԵՐ ԵՎ ՄԻՋԱԶԳԱՅՆԱՑՈՒՄ 53
ԳՆԱՀԱՏԱԿԱՆՆԵՐԸ ԸՍՏ ՀԱՎԱՏԱՐՄԱԳՐՄԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐԻ 62
ՀԱՎԵԼՎԱԾՆԵՐ 63
ՀԱՎԵԼՎԱԾ 1. ՓՈՐՁԱԳԻՏԱԿԱՆ ԽՄԲԻ ԱՆԴԱՄՆԵՐԻ ԻՆՔՆԱԿԵՆՍԱԳՐԱԿԱՆՆԵՐ 63
ՀԱՎԵԼՎԱԾ 2. ՓՈՐՁԱԳԻՏԱԿԱՆ ԱՅՑԻ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑԸ 64
ՀԱՎԵԼՎԱԾ 3. ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՎԱԾ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԻ ՑԱՆԿ 67
ՀԱՎԵԼՎԱԾ 4. ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՎԱԾ ՌԵՍՈՒՐՍՆԵՐ 69
ՀԱՎԵԼՎԱԾ 5. ՄՈՒՀ-Ի ԿԱԶՄԱԿԵՐՊԱԿԱՆ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ 70

ԳՆԱՀԱՏՄԱՆ ԱՄՓՈՓՈՒՄ

ԻՆՍՏԻՏՈՒՑԻՈՆԱԼ ԿԱՐՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՓՈՐՁԱԳԻՏԱԿԱՆ ԳՆԱՀԱՏՈՒՄ՝ ԸՍՏ ՀՀ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ՀԱՎԱՏԱՐՄԱԳՐՄԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐԻ

Փորձաքննությունն իրականցրել է «Մասնագիտական կրթության որակի ապահովման ազգային կենտրոն» հիմնադրամի փորձագիտական խմբի ձևավորման կարգի պահանջներին համապատասխան ձևավորված անկախ փորձագետների խումբը։ Գնահատումը կատարվել է ՀՀ կառավարության 2011թ.-ի հունիսի 30-ի N 959-Ն որոշմամբ հաստատված ինստիտուցիոնալ հավատարմագրման 10 չափանիշներով։

Գնահատում իրականացնելիս փորձագիտական խումբը հաշվի է առել, որ «ՄԲԻ» ՍՊԸ-ն համաձայն իր առաքելության՝ «Միջին մասնագիտական կրթական հաստատություն է, որը նպատակաուղղված է առողջապահության ոլորտում բարձրորակ մասնագետների պատրաստմանը, միջին մասնագիտական կրթական ծրագրերի միջոցով ուսանողների մոտ գիտելիքների ստեղծմանը, պահպանմանը, հմտությունների և կարողությունների ձևավորմանը, սիրո և նվիրվածության զգացումների առաջացմանն ու ամրապնդմանն իր ընտրած մասնագիտության նկատմամբ, ինչպես նաև ժողովրդին ազնվությամբ ծառայելուն։ ՄՈՒՀ-ը ձգտում է դառնալ հաստատություն, որը կունենա կրթության որակի անընդհատ բարելավմանն ու միջազգայնացմանն ուղղված արդյունավետ կառավարում և վարչարարություն, կունենա նորարարության, կրթական նորագույն տեխնոլոգիաների, ուսումնառության և դասավանդման նորագույն մեթոդների վրա հիմնված մրցունակ կրթական ծրագրեր, կկարողանա ապահովել բժշկական միջին մասնագիտական բարձրորակ կրթություն, առաջատարներից մեկը կլինի մատուցող կրթական ծառայություններում, կավելացնի հետազոտական բաղադրիչը միջին մասնագիտական կրթական ծրագրերում»։

Փորձագիտական խումբը նշում է, որ կրթության ոլորտում ՄՈՒՀ-ի ծավալած գործունեությունը և դրան միտված քաղաքականությունն ընդհանուր առմամբ համապատասխանում է հաստատության որդեգրած առաքելությանը և համահունչ է ՈԱԾ-ին։

Քոլեջն իրականացնում է 6 մասնագիտական կրթական ծրագիր։ Ներկայումս ՄՈՒՀ-ի համար գերակա ուղղություններ են՝ «Դեղագործություն», «Ատամնատեխնիկական գործ» և «Բուժական կոսմետոլոգիա» մասնագիտությունները, հաշվի առնելով նաև օտարերկրյա ուսանողներ ներգարավելու քոլեջի պլանները։ Ինչ վերաբերում է մյուս մասնագիտություններին, ապա «Մանկաբարձական գործ» և «Կոսմետիկա և դիմահարդարման արվեստ» մասնագիտություններում վերջին տարիների կտրուկ նվազել է դիմորդների քանակը։ Հարկ է նշել, որ այս առումով ՄՈՒՀ-ը չի իրականցնում աշխատաշուկայի պարբերաբար ուսումնասիրություններ, արդյունքում վտանգվում է առանձին մասնագիտությունների կրթական ծրագրերի արդյունավետությունը։ Փորձագիտական խումբը դրական է համարում, որ քոլեջը քայլեր է ձեռնարկում ՄԿԾ-ների բարելավման ուղղությամբ, այսպես՝ ուսանողների փոխանակային ծրագրերի իրականացման համար իրականցվել է «Քույրական գործ» ՄԿԾ-ի բենչմարքինգ։ Բենչմարքինգի գործընկեր ուսումնական հաստատությունների ծրագրերի համադրման արդյունքում դուրս են բերվել ուժեղ և թույլ կողմերը, սակայն անհանգստացնող է, որ արդյունքում ստացված տվյալների հիման վրա չեն կատարվել հստակ փոփոխություններ։ Փորձագիտական խմբի կողմից դրական է գնահատվել, որ «Ատամնատեխնիկական գործ» ՄԿԾ-ի բենչմարքինգի արդյունքում ամփոփիչ ատեստավորման մեջ ներդրվել է գործնական բաղադրիչը, և ուսանողը քննությանը ներկայացնում է իր պատրաստած աշխատանքները։ Նպատակահարմար է, որ այս մոտեցումը շարունակական բնույթ կրի և կիրառելի դառնա այլ ՄԿԾ-ներում։

2006թ.-ից ՄՈՒՀ-ը հրապարակում է միջազգային բժշկական տեղեկագիր, ուր տպագրվում են առողջապահության բնագավառի գիտնական-հետազոտողների գիտական աշխատանքները: Այս առումով փորձագիտական խումբը մտահոգիչ է համարում, որ այդ հետազոտական հոդվածների ուղղությունները արտացոլված չեն համապատասխան ՄԿԾ-ներում: Դասախոսական կազմը ուսանողների հետ համահեղինակությամբ հոդվածներ են տպագրել, որոնք նույնպես չեն ներդրվել համապատասխան մասնագիտական մոդուլներում: Այս համատեքստում փորձագիտական խումբը դուրս է բերել, որ ուսանողներին հանձնարարված ռեֆերատները, որոնք ՄՈՒՀ-ը դիտարկում է որպես հետազոտական բաղադրիչ պարունակող ինքնուրույն աշխատանքներ, հիմնականում կրկնում են դասընթացի թեմաները և դրանց կատարման նկատմամբ վերլուծական բաղադրիչի հստակ պահանջներ քոլեջը չի առաջադրում:

Գովելի է, որ ՄՈՒՀ-ն իրականում ձգտում է ընդլայնել իր միջազգային և արտաքին գործունեությունը, ունի տարբեր համագործակցություններ, պայմանագրեր, իրականացնում է բենչմարքինգ, սակայն միջազգային և արտաքին գործունեությունը ընդլայնելու նպատակով չի իրականացրել ուսումնասիրություններ և, խոշոր հաշվով, չի գնահատվել միջազգային կապերի ընդլայնման ռիսկը: Այստեղ խոսքը վերաբերում է և՛ ֆինանսական ռիսկերին, և՛ նյութատեխնիկական ռեսուրսներով ապահովվածության ռիսկին, և՛ օտարալեզու մասնագետներ ներգրավելու ռիսկին:

Փորձագիտական խումբը գտնում է, որ ներկա պայմաններում ՄՈՒՀ-ի ռեսուրսներն ընդհանուր առմամբ ապահովում են կրթական ծրագրերի իրականացումը: Դրական է գնահատվում, որ ՄՈՒՀ-ն իր գործունեությունը ծավալում է իր սեփական տարածքներում: Մասնագիտական լսարանները/կաբինետները հիմնականում բարվոք վիճակում են, սակայն լրացուցիչ լսարանների անհրաժեշտություն է զգացվում, հատկապես, որ ՄՈՒՀ-ում ուսումնական գործընթացը կազմակերպվում է 2 հերթով: Բացի դա, ՄԿԾ-ներով սահմանված գործնական և լաբորատոր պարապմունքները կազմակերպելու համար քոլեջը օգտվում է գործընկերների ռեսուրսներից: Դրական ձեռքբերում լինելով հանդերձ, գնահատված չէ այն ռիսկը, որ գործընկերների հետ համագործակցությունը չշարունակելու պարագայում կարող է վտանգվել ՄՈՒՀ-ի կրթական ծրագրերի և հետազոտությունների իրականացումը:

«ՄԲԻ» ՍՊԸ-ն, որպես առևտրային կազմակերպություն, շահույթ ստանալու նպատակ է հետապնդում: ՄՈՒՀ-ի եկամուտները ձևավորվում են հիմնականում ուսանողների վարձավճարներից, նաև եկամուտները կարող են դիվերսիֆիկացվել քոլեջի մասնակիցների կողմից հիմնած «Մեհրաբյան գիտաուսումնական կենտրոն» ՀԿ-ի միջոցների հաշվին: 2015-2019թթ. նվազել է ՄՈՒՀ-ի ուսանողների քանակը, համապատասխանաբար նվազել են նաև ՄՈՒՀ-ի եկամուտները: Սակայն քոլեջը ստացված եկամուտներին համարժեք իր ծախսերը ֆինանսավորելու համար չի գնացել ուսման վարձերը բարձրացնելու կամ աշխատակիցների կրճատման ճանապարհով: Այս առումով պետք է դրական գնահատել, որ Հիմնադիրների խորհրդի որոշմամբ մինչև 2020թ. ՄՈՒՀ-ի գործունեության արդյունքում ձևավորված շահույթը չի բաշխվել մասնակիցների միջև: Ստացվում է՝ չբաշխված շահույթը այս պարագայում լրացուցիչ եկամտի աղբյուր է և որոշ առումներով նպաստել է ինքնածախսածածկման խնդրի լուծմանը: Այդուհանդերձ, ՄՈՒՀ-ը միտված է ըստ մասնագիտությունների բարձրացնել ուսման վարձերը, ինչի արդյունքում կարող են ավելանալ հաստատության եկամուտները: Փորձագիտական խումբը նշում է, որ քոլեջի ֆինանսական ռեսուրսների բաշխման քաղաքականությունը չի բխում ՌԾ-ով սահմանված առաջնահերթություններից, հետազոտություններին և ՄՈՒՀ-ի միջազգայնացման խնդիրների լուծմանը չեն տրամադրվում բավականաչափ միջոցներ: Այստեղ հարկ է նշել, որ քոլեջը պլանավորել է ներգրավել միջազգային օտարերկրյա ուսանողներ, սակայն փորձագիտական խումբը մտահոգված է, որ այդ ուսանողների կրթական կարիքների վերաբերյալ անհրաժեշտ ուսումնասիրություններ և վերլուծություններ չեն իրականացվել:

ՄՈՒՀ-ում պրոֆեսորադասախոսական անձնակազմը համալրված է երկար տարիների մանկավարժական ստաժ ունեցող փորձառու մասնագետներով (միջին աշխատանքային ստաժը 39,2 տարի է)։ Ճիշտ է, քոլեջը դասավանդող դասախոսների միջին տարիքը 65-ից նվազեցրել է 57-ի, սակայն ակնառու է, որ ՄՈՒՀ-ը դասախոսական անձնակազմի երիտասարդացման խնդիր ունի և, կարծես, քոլեջը ներկայումս գործուն քայլեր չի իրականացնում այս առումով։ Փորձագիտական խումբը մտահոգություն է հայտնում անձնակազմի սակավաթիվ լինելու համար, այսպես՝ ՄՈՒՀ-ի դասախոսները հիմնականում դասավանդում են 3-6, երբեմն էլ՝ 8 մասնագիտական մոդուլներ։ Բացի այդ, առկա է անհամապատասխանություն մասնագիտական մոդուլ դասավանդող դասախոսի բազային կրթության և մոդուլի բովանդակության միջև։ Քոլեջում իրականացվում են դասալսումներ, սակայն դրանցից դուրս բերված խնդիրներ և կարիքներ չեն բացահայտվել։ Փորձագիտական խումբն իր դիտարկումներում առանձնացրել է, որ քոլեջի վարչական անձնակազմի բոլոր պարտականությունները նույնպես կատարում են պրոֆեսորադասախառսական անձնակազմի անդամները։ Վերոնշյալի համատեքստում վտանգվում են ՄՈՒՀ-ի ռազմավարական նպատակները։

Ընդհանուր առմամբ, ՄՈՒՀ-ում ռազմավարական կառավարումն ու պլանավորումը արդյունավետորեն չեն իրականացվում։ Ճիշտ է, ՄՈՒՀ-ը մշակել և հաստատել է կառավարման գործընթացներն ապահովող ընթացակարգեր, կանոնակարգեր, այնուամենայնիվ կառավարչական որոշումների կայացման հիմքում չեն դրվել հստակ վերլուծված և գնահատված տվյալներ։ Փորձագիտական խումբը բացասական է գնահատում, որ կարճաժամկետ պլանները չեն կազմվում երկարաժամկետ պլանի առաջնահերթություններով։ Դրանց մշտադիտարկման համար կազմվող հաշվետվություններն ընդհանուր առմամբ նկարագրողական բնույթի են և որակական վերլուծություններ չեն պարունակում։ Համապատասխան գնահատականներն ու բարելավման ենթակա արդյունքներն էլ, բնականաբար, դուրս չեն բերվել։ Ստացվում է, որ ՄՈՒՀ-ն ունի երկարաժամկետ և կարճաժամկետ պլաններ, սակայն չի կարողանում դրանք աշխատեցնել այնքանով, որ հնարավոր լինի դրանց արդյունքներով գնահատել քոլեջի ծավալած կրթական գործունեության արդյունավետությունը, ուստի կառավարման համակարգի արդյունավետությունն ամբողջությամբ վտանգված է։

ՄՈՒՀ-ն իր մասնագիտությունների և նրանց կրթական ծրագրերի որակի ապահովման համար մշակել է որակի ապահովման քաղաքականություն և իրականացման ընթացակարգեր։ ՄՈՒՀ-ում հիմնական գործընթացները գտնվում են պլանավորման և իրականացման փուլում, պարբերաշրջանը դեռևս ավարտված չէ, ուստի առկա չեն քանակական և որակական վերլուծություններ, գնահատականներ։ Պետք է նշել, որ գնահատումներ են իրականացվել ՌԾ-ի կատարողականով, մինչդեռ փորձագիտական խումբը գտնում է, որ այդ գնահատականներն ամբողջությամբ չեն կարող արտահայտել ՌԾ-ի կատարման արդյունքները, որովհետև դրանք չափելիության առումով խնդրահարույց են։ ՄՈՒՀ-ը ներկայումս խնդիր է դրել բարելավել որակի ապահովման գործող մեխանիզմներն ու գործիքները՝ հարցումների, ՈԱ բենչմարքինգի, դասալսումների միջոցով։ Փորձագիտական խումբը, դրանցից յուրաքանչյուրին անդրադառնալով, նշում է, որ հարցումներից դուրս բերվող խնդիրները չեն վերաբերում ուսումնական գործընթացին, ՈԱ բենչմարքինգ դեռևս չի իրականացվել, դասալսումների արդյունքում վերհանված խնդիրները չեն վերլուծվել և ներդրվել ՄԿԾ-ների բարելավման հիմքում։ Հաստատության ուսումնական գործընթացների շարունակական բարելավումները դեռևս տեսանելի չեն։

Փորձագիտական խումբը դրական է գնահատում ՄՈՒՀ-ի որդեգրած քաղաքականությունը արտաքին և ներքին շահակիցների առջև հաշվետվողականության ապահովման ուղղությամբ։ Գործատուներին և շրջանավարտներին ներգրավում է մանկավարժական խորհրդի նիստերին, ուր նրանք կարող են հանդես գալ առաջարկություններով։ Քոլեջում պարբերաբար ներկայացվում են տարբեր հաշվետվություններ, սակայն փորձագիտական խումբը

արձանագրում է, որ ներկայացված հաշվետվությունների ձևաչափի վերանայման կարիք կա՝ հատկապես վերլուծությունների բացակայության առումով։

ՄՈՒՀ-ը կնքել է համագործակցության պայմանագրեր տեղական և միջազգային հաստատությունների և կառույցների հետ։ Փորձագիտական խումբը դրականորեն արձագանքում է, որ տեղական կառույցները հիմնականում ծառայում են գործնական պարապմունքների և պրակտիկաների կազմակերպման բազաներ։ Քոլեջը համագործակցում է զբաղվածության գործակալության հետ և արդյունքում որոշ շրջանավարտներ տեղավորվել են աշխատանքի։ Միջազգային համագործակցության նպատակով քոլեջն ունի կնքած պայմանագրեր նաև արտասահմանյան հաստատությունների հետ։ Միջազգային գործընկերներին առավելապես մեծ հետաքրքրություն են ներկայացնում «Քույրական գործ», «Ատամնատեխնիկական գործ» մասնագիտությունները։ Փորձագիտական խումբը գտնում է, որ դասախոսների և ուսանողների շրջանում օտար լեզվի իմացության մակարդակի բարձրացման խնդիր է առկա, հատկապես այն պարագայում, երբ ՄՈՒՀ-ը ձգտում է միջազգայանացման։

Հաստատության ուժեղ կողմերն են.

1. ՄՈՒՀ-ի ռազմավարական նպատակների և խնդիրների հստակությունը։
2. ՄԿԾ-ների բենչմարքինգը (Քույրական գործ, Ատամնատեխնիկական գործ)։
3. ՈՒսանողներին գործնական հմտություններ տրամադրելու մեխանիզմները։
4. Գնահատման բազմագործոնային համակարգը։
5. ՈՒսանողների հավաքագրման հստակ մեխանիզմները։
6. Կրթական գործունեության իրականացման համար սեփական տարածքները։
7. Գործընկերների հետ համատեղ ռեսուրսների օգտագործումը։
8. Անվտանգ և ապահով կրթական միջավայրի առկայությունը։
9. Ներդրված հաշվետվողականության համակարգը։
10. Համագործակցության լայն շրջանակը։

Հաստատության թույլ կողմերն են.

1. Ռազմավարական կառավարման անարդյունավետությունը։
2. Կառավարման համակարգում պլանավորման անկատարությունը։
3. Երկարաժամկետ և կարճաժամկետ պլանների մշտադիտարկման քաղաքականության բացակայությունը։
4. Դասախոսների և ուսանողների կարիքների վերհանման հստակ մեխանիզմների բացակայությունը։
5. Հավաստի տվյալների հիման վրա որոշումների կայացման մեխանիզմի բացակայությունը։
6. ՄԿԾ-ների ոչ պարբերաբար վերանայումն ու բարելավումը։
7. ՄԿԾ-ների բարելավման և իրականացման գործընթացում արտաքին շահակիցների մասնակցության բացակայությունը։
8. Հետազոտական աշխատանքներում ուսանողների սակավ մասնակցությունը։
9. Պրոֆեսորադասախոսական անձնակազմի ծանրաբեռնվածությունը։
10. Պրոֆեսորադասախոսական անձնակազմում երիտասարդ դասախոսների սակավությունը։
11. Դասախոսների մասնագիտական վերապատրաստումների ոչ պարբերաբար իրականացումը։
12. Միջազգային ուսանողների կրթական կարիքների գնահատման բացակայությունը։

13. Կրթական ծրագրերի և հետազոտությունների միջև թույլ կապը։
14. Հաշվետվողականության մեջ վերլուծական բաղադրիչի բացակայությունը։
15. ՈԱ գործընթացների պլանավորված և արդյունավետ չլինելը։

Հիմնական խորհրդատվություններ.

Առաքելությունը և նպատակները

1) Ներդնել ՌԾ-ի կատարողականի գնահատման քանակական և որակական ցուցիչները։
2) Ներդնել և իրագործել ՌԾ-ի կատարողականի մշտադիտարկման մեխանիզմներ։
3) Ներդնել ՄՈՒՀ-ի ներքին և արտաքին շահակիցների ՌԾ մշակման ու իրագործման մասնակցության արդյունավետ մեխանիզմներ։
4) Ընդլայնել արտաքին շահակիցների շրջանակը։

Կառավարումն ու վարչարարությունը

5) Բարելավել ՄՈՒՀ-ի կառավարման համակարգը՝ նպաստելով արտաքին շահակիցների ներգրավմանը կառավարման որոշումների կայացման գործում։
6) Մշակել և ներդնել երկարաժամկետ, միջնաժամկետ, կարճաժամկետ պլանների մշտադիտարկման քաղաքականություն և մեխանիզմներ։
7) Լավարկել և դարձնել իրագործելի ռազմավարական պլանավորումը։
8) Ներդնել կառավարչական անձնակազմի գործունեության արդյունավետության գնահատման մեխանիզմներ։
9) Որոշումներ ընդունելիս հիմքում ունենալ հիմնավոր տվյալներ։
10) Բարելավել հաշվետվողականության մեխանիզմը, համապատասխանեցնել երկարաժամկետ և կարճաժամկետ պլանավորմանը, ինչպես նաև դարձնել դրանք որակական։
11) Ներդնել տվյալների հավաքագրման արդյունավետ մեխանիզմներ

Մասնագիտության կրթական ծրագրերը

12) Իրականացնել բոլոր ՄԿԾ-ների պարբերական մշտադիտարկում և բարելավում, պետական կրթական չափորոշիչների և աշխատաշուկայի պահաջներին փոփոխություններին համահունչ, ինչպես նաև հիմնվելով իրականացված բենչմարքինգի արդյունքների վերլուծության վրա։
13) Բոլոր ՄԿԾ-ներում իրականացնել պրե- և կոռեկվիզիտ առարկաների հորիզոնական և ուղղահայաց ինտեգրում։
14) Պլանավորել և իրականացնել գիտելիքների, կարողությունների և հմտությունների դասավանդման և ուսումնառության նոր մեթոդների ներդրմանն ուղղված միջոցառումներ, հատուկ ուշադրություն դարձնելով ուսումնառության ինտերակտիվ մեթոդների ներդրմանը և ինքնուրույն աշխատանքի կատարման հանձնարարականներին։
15) Մշակել գործուն մեխանիզմներ արտաքին շահակիցներին (գործատուներին) ՄԿԾ-ների վերանայման գործընթացներում անմիջական ներգրավման համար (գործատու-ՄԿԾ պատասխանատու անմիջական կապի ապահովում)։

16) Բարելավել գնահատման համակարգը և գործիքակազմը (գնահատման մեթոդների ընտրություն ըստ ակնկալվող վերջնարդյունքի), առանձնահատուկ ուշադրություն դարձնելով գործնական ունակությունների և պրակտիկ կարողությունների բաղադրիչի գնահատմանը:

Ուսանողները

17) Մշակել մեխանիզմներ՝ ՈՒԽ-ի գործընթացներում ուսանողների ակտիվ ներգրավվման համար:
18) Մշակել և իրագործել ուսանողներին հետազոտական աշխատանքներին ներգրավելու և ուսանողներին մոտիվացնելու նոր մեխանիզմներ, ինչպես նաև ուսանողների մոտ վերլուծական կարողություններ ձևավորող հանձնարարություններ:
19) Կատարելագործել ուսանողների կարիքների վերհանման հարցաթերթիկների բովանդակությունը՝ ներառելով ուսանողների կրթական կարիքների և խորհրդատվական ծառայությունների վերաբերյալ հարցեր:

Պրոֆեսորադասախոսական և ուսումնաօժանդակ կազմը

20) Քայլեր ձեռնարկել դասախոսական անձնակազմի մանկավարժական և մասնագիտական պարբերական վերապատրաստումների ապահովման ուղղությամբ, հետևողական վերահսկելով դրանց պլանավորումը, իրականացումը և արդյունքների գնահատումը:
21) Մշակել և ներդնել դասախոսական անձնակազմի, հատկապես, երիտասարդ կադրերի խրախուսման գործուն մեխանիզմներ:
22) Կատարելագործել դասախոսների գնահատման և կարիքների վերհանման գործիքակազմը (հարցումների, դասալսումներ), այնպես, որ իրականացվող միջոցառումները նպաստեն առկա խնդիրների օբյեկտիվ վերհանմանը:
23) Համալրել ուսումնաօժանդակ անձնակազմը գործնական, լաբորատոր աշխատանքներին մասնակցող (օրինակ՝ օգտագործելով ՄՈՒՀ-ի շրջանավարտների ռեսուրսը) մասնագետներով:
24) Քայլեր ձեռնարկել դասախոսական անձնակազմի փոխարինելիության ապահովման ուղղությամբ:

Հետազոտությունը և զարգացումը

25) Մշակել և ներդնել պրոֆեսորադասախոսական կազմի և ուսանողների հետազոտական գործունեության խրախուսման մեխանիզմներ:
26) Մշակել և ներդնել ֆինանսական միջոցների բաշխման քաղաքականություն հետազոտական գործունեության խրախուսման նպատակով:
27) Քոլեջի բոլոր ՄԿԾ-ի ուսանողների համար ստեղծել անհրաժեշտ հավասար պայմաններ հետազոտական աշխատանքներ կատարելու համար
28) Մշակել և ներդնել ըստ ՌԾ նպատակի հետազոտական գործունեության գործուն քաղաքականություն և իրագործելի պլան:
29) Մշակել և իրագործել հետազոտական գործունեության և ուսումնական գործընթացի փոխկապակցման գործուն մեխանիզմներ:
30) Ներդնել հանձնարարականների մեխանիզմ՝ նպաստելով ուսանողների մոտ վերլուծական ու հետազոտական հմտությունների ձևավորմանը:

31) Բարելավել ուսանողներին տրվող թեմաները՝ ներառելով նաև թեմաներ աշխատաշուկայից:

Ենթակառուցվածքը և ռեսուրսները

32) Բարելավել շենքային պայմանները, ավելացնել մասնագիտական լսարանները/կաբինետները:
33) Վերազինել, համալրել մասնագիտական լաբորատորիաները:
34) Կայուն հիմքերի վրա դնել գործատուների հետ ռեսուրսների օգտագործման համատեղ ռազմավարությունը:
35) Ֆինանսական ռեսուրսների բաշխումը համապատասխանեցնել ՌԾ-ի նպատակներին:
36) Ներդնել փաստաթղթավորման ավտոմատացված համակարգ:

Հասարակական պատասխանատվությունը

37) Հստակեցնել ՄՈՒՀ-ի անվանումը արտաքին շահակիցներին ներկայացվող գործիքակազմում՝ առցանց հարթակներ, տպագրվող նյութեր, պայմանագրեր և այլն:
38) Վերանայել հաշվետվողականության ներկայացման ձևաչափերը, որպեսզի այնտեղ հստակ արտացոլվի նպատակ, խնդիր, կատարված միջոցառումներ, դրանց կատարողականի գնահատում, խնդիրների վերհանում և հետագա միջոցառումների պլանավորում կապը:
39) Նեղնել հասարակության հետ հետադարձ կապի ապահովման մեխանիզմներ:
40) Մշակել հասարակությանը գիտելիքների փոխանցման կայուն մեխանիզմներ:
41) Հստակեցնել և համալրել առցանց հարթակներում ՄՈՒՀ-ի վերաբերյալ օբյեկտիվ տեղեկատվությունը:

Արտաքին կապերը և միջազգայնացումը

42) Պրակտիկայի կազմակերպման, աշխատանքի տեղավորման և արտաքին կապերի միջազգայնացման բաժնի հաշվետվության մեջ ներառել կատարած աշխատանքների վերլուծությունը և գնահատումը ներկա մարտահրավերների պայմաններում:
43) Մշակել և ներդնել դասախոսական կազմի և ուսանողության շարժունությանը նպաստող մեխանիզմներ:
44) Ներդնել բենչմարքինգի քաղաքականության արդյունավետությունը բարձրացնող մեխանիզմներ:
45) Մշակել և իրագործել դասախոսների և ուսանողների մոտ օտար լեզվի /անգլերեն/ իմացության բարձրացմանն ուղղված միջոցառումներ:
46) Ներդնել գործատուների և միջազգային գործընկերների հետ համագործակցության ամրապնդմանն ուղղված մեխանիզմներ:
47) Միջազգային ուսանողների ներգրամն համար կատարել առկա կարիքների գնահատում և հստակ պլանավորել իրականացվելիք միջոցառումները:

Որակի ներքին ապահովման համակարգը

48) Հստակ պլանավորել ՈԱ գործընթացները՝ հիմնվելով ՌԾ-ով և ՈԱ ընթացակարգերով սահմանված նպատակներին հասնելու համար։
49) ՈԱ գործընթացներում ներդնել ներքին և արտաքին շահակիցների մասնակցությունը հավաստող մեխանիզմներ։
50) Բարելավել տվյալների հավաքագրման, այդ թվում հարցումների մեխանիզմները՝ ներառելով ՄՈՒՀ-ի բոլոր ոլորտները։
51) Ներդնել խնդիրների վերհանման այլընտրանքային մեխանիզմներ։
52) Կարողությունների զարգացման հնարավորություններ ստեղծել ՈԱ պատասխանատուների համար։
53) Բարելավել ՈԱ քաղաքականության արդյունավետությունը։
54) Ներդնել լավագույն փորձի դուրսբերման և տարածման մեխանիզմներ։
55) ՄՈՒՀ-ի բոլոր գործընթացներում ներդնել վերլուծական բաղադրիչը և ապահովել դրանց թափանցիկությունը։

Արմենուհի Մհերյան

12 փետրվար 2021թ.

ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ

«Մեհրաբյանի անվան բժշկական Ինստիտուտ» ՍՊԸ քոլեջի ինստիտուցիոնալ կարողությունների արտաքին գնահատումն իրականացվել է փորձագիտական խմբի հետևյալ անդամների կողմից.

1. **Արմենուհի Մհերյան,** Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարանի «Ֆինանսներ» ամբիոնի դասախոս, տնտեսագիտության թեկնածու, դոցենտ:
2. **Շուշանիկ Աֆրիկյան**, Երևանի պետական Մ. Հերացու անվան բժշկական համալսարան, Ֆարմացիայի ամբիոնի դոցենտ
3. **Վարդուհի Ավետիսյան,** ՀՀ ԿԳՄՄՆ Երևանի հայ-ամերիկյան §Էրեբունի¦պետական բժշկական քոլեջ ՊՈԱԿ-ում որպես ուսումնական աշխատանքների գծով տնօրենի տեղակալ
4. **Լիլիթ Մկրտչյան,** Հայաստանի ֆիզիկական կուլտուրայի և սպորտի պետական ինսիտուտի Սպորտային մանկավարժություն և կառավարում (Գեղարվեստական մարմնամարզություն) բաժնի ուսանող*:*

Փորձագիտական խմբի կազմը համաձայնեցվել է ուսումնական հաստատության հետ:

Փորձագիտական խմբի աշխատանքները համակարգել է ՈԱԱԿ Ծրագրային և ինստիտուցիոնալ փորձաքննության բաժնի մասնագետ Գայանե Անանյանը:

Փորձագիտական խմբի բոլոր անդամները, այդ թվում համակարգողը ստորագրել են գաղտնիության պարտավորագրեր:

ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ ԸՆԹԱՑՔԸ

Դիմում պետական հավատարմագրման համար

Պետական ինստիտուցիոնալ հավատարմագրում անցնելու համար ՄԲԻ ՍՊԸ-ի քոլեջը 14.05.2020թ.-ին ներկայացրել է սահմանված ձևաչափի դիմում-հայտ՝ լիցենզիայի և հրամանների կրկնօրինակներով:

ՈԱԱԿ-ի քարտուղարություն ուսումնասիրել է դիմում-հայտում ներկայացված տվյալները և կից փաստաթղթերը:

Դիմում-հայտի ընդունման մասին որոշման կայացումից հետո (01.08.2020թ.) ՄՈՒՀ-ի և ՈԱԱԿ-ի հետ կնքվել է երկողմ պայմանագիր:

ՄՈՒՀ-ը ներկայացրել է ինստիտուցիոնալ կարողությունների ինքնավերլուծությունը հայերեն տարբերակով և ուղեկցող փաստաթղթերի փաթեթը:

Քոլեջի ինքնավերլուծությունն իրականացրել է ՄՈՒՀ-ի տնօրենի հրամանով ձևավորված աշխատանքային խումբը:

Ինքնավերլուծություն

ՄԲԻ ՍՊԸ-ի քոլեջի ինստիտուցիոնալ կարողությունների ինքնավերլուծությունը ներկայացվել է 25.08.2020թ.-ին: Ինքնավերլուծությունն իրականացվել է ՄՈՒՀ-ի ութ ներկայացուցիչների՝ դասախոսների, ուսումնաօժանդակ, ղեկավար կազմի կողմից և մեկ ուսանող ներկայացուցչի: Ինքնավերլուծության գործընթացին արտաքին շահակիցները շահակիցները չեն մասնակցել: Յուրաքանչյուր չափանիշ վերլուծվել է 2 աշխատակցի կողմից՝ հաշվի առնելով աշխատակցի աշխատանքային ուղղվածությունը և չափանիշի պահանջները:

Ինքնավերլուծական զեկույցը հիմնականում եղել է նկարագրական և ընդհանրական, որը երբեմն հնարավորություն չի տվել փորձագետներին նախնական գնահատման ժամանակ հասկանալ և ճիշտ գնահատել քոլեջում տիրող իրական վիճակը:

Նախապատրաստական փուլ

ՄՈՒՀ-ի կողմից ինստիտուցիոնալ կարողությունների զեկույցը և կից փաստաթղթերը ներկայացնելուց հետո ՈԱԱԿ համակարգողն ուսումնասիրել է դրանք՝ ՈԱԱԿ-ի պահանջներին համապատասխանությունը ստուգելու նպատակով:

Ինքնավերլուծությունը և կից բոլոր փաստաթղթերը նախնական գնահատման նպատակով տրամադրվել են փորձագիտական խմբին, որի կազմը նախօրոք համաձայնեցվել էր քոլեջի հետ և հաստատվել ՈԱԱԿ-ի տնօրենի հրամանով:

Փորձագիտական խմբին՝ աշխատանքներին նախապատրաստելու և գործընթացների արդյունավետությունն ապահովելու նպատակով իրականացվել են վերապատրաստումներ հետևյալ թեմաներով՝

1. փորձագիտական խմբի անդամների հիմնական գործառույթները,
2. հանդիպումների անցկացման և հարցապնդումների էթիկան և տեխնիկան,
3. ՄԿՈՒ ոլորտի առանձահատկությունների սահմանում և հավատարմագրման չափանիշների մեկնաբանում միջին մասնագիտական ոլորտին համապատասխան,
4. նախնական գնահատումը որպես փորձագիտական զեկույցի նախապատրաստման փուլ, զեկույցին ներկայացվող հիմնական պահանջները:

Փորձագիտական խումբը, ուսումնասիրելով քոլեջի ինքնավերլուծությունը և ուղեկցող փաստաթղթերի փաթեթը, իրականացրել է նախնական գնահատում ըստ ձևաչափի՝ պատրաստելով լրացուցիչ ուսումնասիրման ենթակա անհրաժեշտ փաստաթղթերի, ինչպես նաև խնդիրների և հարցերի ցանկը՝ նշելով նաև համապատասխան ստորաբաժանումները կամ թիրախային խմբերը: Նախատեսված ժամկետներում փորձագիտական խումբն ամփոփել է նախնական գնահատման արդյունքները, և ինստիտուցիոնալ և ծրագրային բաժնի ղեկավարը կազմել է փորձագիտական այցի պլան-ժամանակացույց: Առաջնորդվելով ՈԱԱԿ-ի Փորձաքննության իրականացման ձեռնարկով՝ ժամանակացույցում ներառվել են փորձագետների կողմից նախատեսվող հանդիպումները բոլոր խմբերի հետ, բաց և փակ հանդիպումներ, փաստաթղթերի ուսումնասիրություն, զուգահեռ հանդիպումներ և այլն: ՈԱԱԿ-ը քոլեջի փորձագիտական այցերի ընթացքում որպես նորույթ ավելացրել է երկու զուգահեռ հանդիպումներ, զուգահեռ հանդիպումների ընթացքում փորձագիտական խումբը բաժանվում է՝ յուրաքանչյուր փորձագետ ըստ իր մասնագիտական ուղղվածության: Յուրաքանչյուր փորձագետ (բացի ուսանող փորձագետից, նա միացել է մյուս փորձագետներից մեկին) հնարավորություն է ունեցել առանձին երկու մասնագիտական հանդիպումներ ունենալ քոլեջի կողմից ներկայացված կրթական ծրագրում դասավանդող դասախոսների, կրթական ծրագրի պատասխանատուի և ուսանողների հետ: Նախքան մասնագիտական հանդիպումները փորձագետներն իրենց մասնագիտության շրջանակներում ուսումնասիրել են մոդուլների շրջանակներում ուսանողներին տրվող հանձնարարականները՝ հասկանալու, թե այդ հանձնարարականները որքանով են միտված մոդուլում սահմանված արդյունքի ձեռքբերմանը:

Քանի որ փորձագիտական այցերը եղել են առցանց և փորձագիտական խումբը չէր կարող այցեր կատարել հաստատության ստորաբաժանումներ, այդ իսկ պատճառով ժամանկացույցում ներառված են եղել նաև հանդիպումներ, որի մասնակիցներին կարող էր ընտրել փորձագիտական խումբը, այս հանդիպումները թույլ են տվել փորձագետներին լրացնել այն տեղեկատվությունը, որը, ըստ փորձագետների, թերի կամ ոչ միանշանակ է եղել:

Նախանական այց

Քոլեջի նախնական այցը կատարվել է առցանց միջավայրում երկու շաբաթ առաջ փորձագիտական այցից, հանդիպմանը ներկա են գտնվել ՈԱԱԿ համակարգողները,

ինստիտուցիոնալ և ծրագրային փորձաքննության բաժնի ղեկավարը: Հանդիպման ընթացքում քոլեջին են ներկայացվել և նրանց հետ համաձայնեցվել փորձագիտական այցերի պլան-ժամանակցույցը, ներկայացվել է լրացուցիչ ուսումնասիրության փաստաթղթերի ցանկը և համավարակի պայմաններում առցանց փորձագիտական այցերի նախապատրաստական աշխատանքների կազմակերպման առանձնահատկությունները (քոլեջի կողմից տեսանյութերի տրամադրում, որտեղ կերևա քոլեջի հիմնական ռեսուրսային բազան՝ լսարաններ, լաբորատորիաներ, գրադարաներ և այլն, քոլեջի կողմից փորձագետների կողմից պահանջված ուսումնասիրվող փաստաթղթերի առցանց տարբերակի ապահովում պատշաճ ժամկետներում, առցանց միջավայրում փարձագիտական այցերի տեխնիկական կանոնների ապահովում՝ տեսախցիկների միացված լինելը, մեկ ընդհանուր տեսախցիկի պարագայում ողջ սենյակը տեսնելու հնարավորությունը, սենյակում բացի թիրախային խնմբերից այլ անձանց առկայության բացառումը և այլն):

Փորձագիտական այց

COVID 19 համավարակով և պատերազմական իրավիճակով պայմանավորած ՄՈՒՀ-ը ժամանակացույցով նախատեսված ժամկետներից 2 շաբաթ ուշացումով, ըստ ՈԱԱԿ-ի կողմից սահմանած ձևաչափի, փորձագիտական այցը տեղի է ունեցել 2020թ նոյեմբերի 9-12-ն ընկած ժամանակահատվածում: Ժամանակացույցով նախատեսված այցից երկու օր առաջ (06.11.2020թ.) փորձագիտական խմբի բոլոր անդամները, համակարգողը, ՈԱԱԿ ինստիտուցիոնալ և ծրագրային փորձաքննության բաժնի ղեկավարը ունեցել են փակ հանդիպում առցանց միջավայրում: Հանդիպման նպատակն էր դուրս բերել քոլեջի ուժեղ և թույլ կողմերն ըստ չափորոշիչների, հստակեցնել թիրախային խմբերին տրվող հարցադրումները, քննարկել առցանց միջավայրում իրականացվող հանդիպումների ընթացակարգը և հետագա քայլերը:

Փորձագիտական այցը սկսվել և ավարտվել է քոլեջի տնօրենի հետ հանդիպումներով:

Հարցերի պարզաբանման նպատակով կազմակերպված ֆոկուս խմբային հանդիպումների՝ դասախոսներ, ուսանողներ և շրջանավարտներ մասնակիցներն ընտրվել են պատահականության սկզբունքով նախօրոք տրամադրված ցանկից (գործատուների և ամբիոնների վարիչների սակավ լինելու հանգամանքով պայմանավորված ներառվել են բոլորը): Իրականացվել են ըստ ժամանակացույցի նախատեսված բոլոր հանդիպումները, ըստ նախատեսվածի, փորձագիտական խումբն իրականացրել է նաև դասալսումներ: Այցի ընթացքում փորձագիտական խումբը փաստաթղթերի ուսումնասիրություն, ռեսուրսների դիտարկում և ֆոկուս խմբային հանդիպումներ է իրականացրել առցանց միջավայրում:

Տարբեր հանդիպումների ընթացքում հավաքագրված տեղեկատվությունը, ինչպես նաև փաստաթղթերի ուսումնասիրության և քննարկումների հիմնական արդյունքներն ամփոփվել են ինչպես ամնեն հանդիպման ավարտին, այնպես էլ ամեն օրվա վերջում այցի ավարտին կազմակերպված ամփոփիչ քննարկման և գնահատման ժամանակ:

Չափանիշների վերաբերյալ վերջնական եզրակացության փորձագիտական խումբը հանգել է բոլոր անդամների քննարկումների և վերլուծությունների արդյունքում՝ մշտապես կիրառելով կոնսենսուսի սկզբունքը:

Փորձագիտական զեկույց

Փորձագիտական խումբը նախնական գնահատումն իրականացրել է քոլեջի ներկայացրած ինքնավերլուծության, դրան կից փաստաթղթերի ուսումնասիրության, քոլեջի կողմից ներկայացրած ռեսուրսների նկարահանման և փորձագիտական այցի դիտարկումների հիման վրա՝ պարբերաբար կազմակերպվող քննարկումների արդյունքում: Քննարկումներից հետո դուրս բերված դիտարկումների հիման վրա խմբի ղեկավարը և ՈԱԱԿ-ի համակարգողը պատրաստել են փորձագիտական զեկույցի նախնական տարբերակը, որը համաձայնեցվել է փորձագետների հետ հունվարի 8-ին:

Զեկույցի վերաբերյալ իր դիտողություններն ու մեկնաբանություններն քոլեջն ուղարկել է ՈԱԱԿ 29.01.2021թ.: Քոլեջն իր դիտողություններն ու մեկնաբանությունները ներկայացրել է հայերեն լեզով, որոնք տրամադրվել են փորձագետներին: Դիտողությունների վերաբերյալ 2021թ. Փետրվարի 8-ին ՈԱԱԿ-ը կազմակերպել է քոլեջի և փորձագիտական խմբի ներկայացուցիչների հանդիպում, որի ժամանակ էլ ներկայացվել է խմբի պատասխանը: Հաշվի առնելով քոլեջի մեկնաբանությունները փորձագիտական խումբը կազմել է զեկույցի վերջնական տարբերակը, որը խմբի կողմից հաստատվել է 11.02.2021թ-ին.:

_____

Գայանե Անանյան
12 փետրվար 2021թ.

ԳՆԱՀԱՏՈՒՄ ԸՍՏ ՀԱՎԱՏԱՐՄԱԳՐՄԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐԻ
ՀԱՄԱՌՈՏ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅՈՒՆ ՄՈՒՀ-Ի ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Մեհրաբյանի անվան բժշկական ինստիտուտ» Սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության քոլեջի հիմնական առաքելությունն է. առողջապահության ոլորտում, աշխատաշուկայի պահանջներին համահունչ, միջին մասնագիտական կրթական ծրագրերի միջոցով բարձրորակ մասնագետների (բուժքույր (բուժեղբայր), մանկաբարձ, դեղագործ, բուժքույր (բուժեղբայր) կոսմետոլոգ, ատամնատեխնիկ, կոսմետոլոգ) պատրաստումը, ուսանողների մոտ անհրաժեշտ գիտելիքների ստեղծումը, պահպանումը, հմտությունների և կարողությունների ձևավորումը, մասնագիտության նկատմամբ սիրո ու նվիրվածության զգացումների առաջացումն ու ամրապնդումը, իր ժողովրդին ազնվությամբ և նվիրվածությամբ ծառայելը:

ՄՈՒՀ-ի առաքելությունն է կրթության զարգացման ոլորտում պետական և հանրային անհրաժեշտությամբ պայմանավորված ռազմավարական ծրագրի շրջանակներում առողջապահության ոլորտում գիտելիքների ստեղծումը, փոխանցումը և տարածումը: Ինչպես երևում է քոլեջի առաքելության ձևակերպումից, այն համապատասխանում է ՀՀ կառավարություն 2016 թվականի հուլիսի 7-ի N 714-Ն որոշմամբ հաստատված ՀՀ որակավորումների ազգային շրջանակին:

«Մեհրաբյանի անվան բժշկական ինստիտուտ» Սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունը (այսուհետ՝ «ՄԲԻ» ՍՊԸ), որի մեջ գործում է բժշկական քոլեջը (այսուհետ՝ քոլեջ), 1997 թվականից գործող Մեհրաբյանի անվան բժշկական ուսումնարանի իրավահաջորդն է: 2004 թվականին քոլեջի բազայի վրա ստեղծվել է բժշկական ինստիտուտ՝ ունենալով միայն մեկ՝ ստոմատոլոգիական ֆակուլտետ: Հետագայում՝ 2006 թվականին ինստիտուտում բացվել է նաև երկրորդ՝ դեղագիտական ֆակուլտետը:

30.12.2015թ. N 1081-Ա/Ք հրամանով Մեհրաբյան բժշկական կրթօջախի բարձրագույն ուսումնական հաստատությունը՝ բժշկական ինստիտուտը, փակվեց և մնաց միջին մասնագիտական ուսումնական հաստատությունը՝ բժշկական քոլեջը:

Ներկայումս «Մեհրաբյանի անվան բժշկական ինստիտուտ» Սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության բժշկական քոլեջը (այսուհետ՝ ՄՈՒՀ) ժառանգել և տիրապետում է բժշկական ինստիտուտի ամբողջ տեխնիկա-տնտեսական և պրոֆեսորա-դասախոսական բազային:

Քոլեջի առաքելությունից բխող կրթական գործունեությունը տարածվում է որակավորումների ազգային շրջանակի 5-րդ մակարդակի վրա: Ըստ այդմ, քոլեջը շնորհում է վեց որակավորումհետևյալ միջին մասնագիտական կրթական ծրագրերով.

- Ատամնատեխնիկական գործ,
- Մանկաբարձական գործ,
- Քույրական գործ,
- Դեղագործություն,
- Բուժական կոսմետոլոգիա,
- Կոսմետիկա և դիմահարդարման արվեստ,

Ռազմավարական ծրագրում ամրագրված նպատակն իրականացնելու համար ՄՈՒՀ-ն ունի դասավանդման և ուսումնառության մեթոդների ընտրության քաղաքականության կարգ: Դասավանդման և ուսումնառության մեթոդի նախնական ընտրությունն իրականացնում է ծրագրի հեղինակը, իսկ ցիկլային առարկայական հանձնաժողովներն ընտրում են առարկայական ծրագրի վերջնարդյունքին համապատասխան դասավանդման և ուսումնառության մեթոդները: Գնահատումը չպետք է սահմանափակվի միայն գիտելիքի ստուգմամբ՝ դրա պարզ վերարտադրության միջոցով: Որպես վերջնարդյունք, նախատեսված

է գործնական հմտության ձևավորում, ապա պետք է գնահատվի որոշակի գործողություններ իրականացնելը իրավիճակային խնդիրների լուծման, դերային խաղերում դրսևորած արդյունքների, իրական կամ պայմանական իրավիճակներում սահմանափակ կամ բաց տեղեկությունների պայմաններում դրսևորած արդյունքների հիման վրա: Ըստ ընտրված քաղաքականության՝ ուսանողների գիտելիքների ստուգման և գնահատման համար ՄՈՒՀ-ում սահմանված են քննությունների և ստուգարքների գրավոր և բանավոր ձևեր: Յուրաքանչյուր դասընթացի դասավանդողը ուսանողին ծանոթացնում է դասընթացին ուղղված գնահատման համակարգին և դրա բաղադրիչներին:

Քոլեջի հետազոտական աշխատանքների վերաբերյալ գիտական խորհրդում որոշում է ընդունվել ապահովելու կոլեկտիվի մասնակցությունը տարբեր հայտային ծրագրերին և հետազոտական աշխատանքներում ընդգրկելու ինչպես դասախոսական կազմին, այնպես էլ ակտիվ ուսանողությանը:

ՄՈՒՀ-ի զարգացմանը և միջազգայնացմանը նպաստող միջավայր ստեղծելու նպատակով ՄՈՒՀ-ում գործում է Պրակտիկայի կազմակերպման, աշխատանքի տեղավորման և արտաքին կապերի միջազգայնացման բաժին, որն իրականացնում է կապերի հաստատում, համագործակցություն արտասահմանյան մի շարք պետական և մասնավոր կազմակերպությունների հետ, ինչպես նաև ՄՈՒՀ-ի միջազգային կապերն ու համագործակցությունը կրթության, գիտության և խորհրդատվության ոլորտներում:

«Մեհրաբյանի անվան բժշկական ինստիտուտ» ՍՊԸ բժշկական քոլեջի որակի ապահովման ընդհանուր քաղաքականությունը միտված է ՄՈՒՀ-ի առաքելության և Ռազմավարական ծրագրով սահմանված նպատակների ու խնդիրների իրականացմանը:

Աղբյուր. *վերոնշյալ տիրույթներում փաստերի դուրս բերման աղբյուր են հանդիսանում ՄՈՒՀ-ի կողմից տրամադրված փաստաթղթերը (օր.՝ ինքնավերլուծություն, ռազմավարական ծրագիր):*

I. ԱՌԱՔԵԼՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՆՊԱՏԱԿՆԵՐ

ՉԱՓԱՆԻՇ: ՄՈՒՀ-ի վարած քաղաքականությունն ու ծավալած գործունեությունը համապատասխանում են հաստատության որդեգրած առաքելությանը, որը համահունչ է ՀՀ կրթության որակավորումների ազգային շրջանակին:

Փաստեր

«Մեհրաբյանի անվան բժշկական ինստիտուտ» ՍՊԸ բժշկական քոլեջն իր առաքելությունը ձևակերպել է 2015-2020 թթ. Ռազմավարական ծրագրում: Առաքելության համաձայն՝ ««Մեհրաբյանի անվան բժշկական ինստիտուտ» ՍՊԸ բժշկական քոլեջը միջին մասնագիտական կրթական հաստատություն է, որը նպատակաուղղված է առողջապահության ոլորտում բարձրորակ մասնագետների պատրաստմանը, միջին մասնագիտական կրթական ծրագրերի միջոցով ուսանողների մոտ գիտելիքների ստեղծմանը, պահպանմանը, հմտությունների և կարողությունների ձևավորմանը, սիրո և նվիրվածության զգացումների առաջացմանն ու ամրապնդմանն իր ընտրած մասնագիտության նկատմամբ, ինչպես նաև ժողովրդին ազնվությամբ ծառայելուն»: Ըստ հաստատության առաքելության՝ ՄՈՒՀ-ն իր գործունեությունը ծավալում է Որակավորումների ազգային շրջանակի կրթության 5-րդ մակարդակին համապատասխան և տրամադրում է միջին մասնագիտական կրթություն:

«ՄԲԻ» ՍՊԸ բժշկական քոլեջն իր ռազմավարական առաջնահերթություններն իրագործելու նպատակով 2015-2020թթ. Ռազմավարական ծրագրով հստակ սահմանել է թվով ութ նպատակ, քսանմեկ խնդիր: Քոլեջը ձգտում է դառնալ հաստատություն, որը կունենա կրթության որակի անընդհատ բարելավմանն ու միջազգայնացմանն ուղղված արդյունավետ կառավարում և վարչարարություն, նորարարության, կրթական նորագույն տեխնոլոգիաների, ուսումնառության և դասավանդման նորագույն մեթոդների վրա հիմնված մրցունակ կրթական ծրագրեր, կկարողանա ապահովել բժշկական միջին մասնագիտական բարձրորակ կրթություն, առաջատարներից մեկը կլինի մատուցվող կրթական ծառայություններում, կավելացնի հետազոտական բաղադրիչը միջին մասնագիտական կրթական ծրագրերում: Փորձագիտական առցնաց այցից և փաստաթղթերի ուսումնասիրություններից պարզ դարձավ, որ ՌԾ-ի պլան ժամանակացույցով նախատեսված գործողությունները հիմնականում չեն բխում վերոնշյալ նպատակներից: ՄՈՒՀ-ը չի իրականացրել ՌԾ-ով սահմանված նպատակների և խնդիրների իրագործման արդյունավետության գնահատում: Հստակ չէ, թե նոր ՌԾ-ում ինչ առաջնահերթություններ կարող են սահմանվել:

Փորձագիտական վերլուծությունները ցույց տվեցին, որ ձևակերպված նպատակներն ու խնդիրները արտացոլում են ՄՈՒՀ-ում իրականացվող հիմնական գործընթացները: Ըստ ՄՈՒՀ-ի 2015-2020թթ. ՌԾ-ով նախատեսված խնդիրների քայլերի բովանդակության, կատարման ժամկետների և պատասխանատուների, առկա են նաև ՌԾ-ի կատարողականի գնահատականները /լավ, բավարար, միջին, ավարտված չէ/:

«ՄԲԻ» ՍՊԸ բժշկական քոլեջը, որպես առևտրային կազմակերպություն, մշակել է 2020-2025 ուս.տարիների բիզնես պլան, ուր ներկայացված է մասնագիտական ուսումնական հաստատության նկարագիրը, ծառայության նկարագիրը, այն կազմված է մարքեթինգային պլան, աշխատանքային պլան, ֆինանսական պլան բաժիններից: ՄՈՒՀ-ում մշակվել են նաև կարճաժամկետ ռազմավարական ծրագրեր /տնօրենի, առանձին ստորաբաժանումների և այլն/, ցիկլային հանձնաժողովների աշխատանքային պլաններ:Ուսումնասիրությունների արդյունքում պարզ դարձավ, որ վերոնշյալ կարճաժամկետ ռազմավարական ծրագրերը մեկ տարվա կտրվածքով աշխատանքային պլաններ են:

Քոլեջի ներկայացրած Ինքնավերլուծությունում նշված ներքին և արտաքին շահակիցներն են՝ պետությունը, հասարակությունը, դիմորդները /սովորողները/, շրջանավարտները, անձնակազմը, գործընկերները և գործատուները: Ըստ Ինքնավերլուծության՝ ՄՈՒՀ-ի 2015-2020թթ. ՌԾ-ի մշակման գործընթացներում ներառվել են շահակիցների կարիքները, վերջիններիս դիտարկումներն ու առաջարկությունները: Ներքին և արտաքին շահակիցների

կարիքները վեր են հանվել ուսանողների, դասախոսների, գործատուների և շրջանավարտների հետ քննարկումների, ուսանողների և դասախոսների շրջանում անցկացված հարցումների արդյունքում: Փորձագիտական առցնաց այցից պարզ դարձավ, որ ՄՈՒՀ-ի արտաքին շահակիցները հիմնականում դասավանդում են քոլեջում կամ քոլեջի շրջանավարտ են, ուստի նրանք ևս ներքին շահակիցներ են: Առցնաց այցից պարզ դարձավ, որ հարցումներն ու քննարկումները անցկացվել են, սակայն դրանք չեն վերլուծվել և ՌԾ-ում դրանց ներդրման փաստեր առկա չեն:

ՄՈՒՀ-ի Ինքնվերլուծությունում Չափանիշ 1-ով նկարագրվող տիրույթում որպես հաստատության թույլ կողմ է ներկայացվել արտաքին շահակիցների հետ հարցումների և հանդիպումների կազմակերպման պասիվությունը: Առցանց տարբերակով հաստատություն առցնաց այցի ընթացքում ևս պարզ դարձավ, որ ՌԾ-ում ներկայացված չեն արտաքին շահակիցների դիտարկումների ու առաջարկությունների հստակ արդյունքներ: Բացի դա, արտաքին շահակիցներից միջազգային գործընկերների կարծիքներ և առաջարկություններ ևս առկա չեն:

ՄՈՒՀ-ն ունի 2015-2020թթ. ՌԾ-ի պլան ժամանակացույց: Այն իրենից ներկայացնում է ՄՈՒՀ-ի ռազմավարական ծրագրով նախատեսված քայլերի բովանդակությունը, կատարման ժամկետները և պատասխանատուները: Ըստ ինքնավերլուծության, հաստատությունն այն համարում է ՌԾ-ի մշտադիտարկման գործիք: Հարկ է նշել, որ ըստ ՌԾ-ի պլան ժամանակացույցի ընթացիկ վերլուծություններ /մշտադիտարկումներ/ չեն իրականացվել: Փորձագիտական խմբի առցնաց այցից պարզ դարձավ, որ ՄՈՒՀ-ն այն նախատեսում է իրականացնել ՌԾ-ի ավարտից հետո՝ վեց ամսվա ընթացքում:

Փաստաթղթերի ուսումնասիրություններից պարզ դարձավ, որ ՄՈՒՀ-ում, բացի 2015-2020թթ. ՌԾ-ի պլան ժամանակացույցից, առկա է նաև 2015-2020թթ. ՌԾ-ի կատարողականը: Դրանում, բացի ՌԾ-ի պլան ժամանակացույցի բաժիններից, ներառված են նաև ակնկալվող արդյունքը, կատարման ցուցիչները և դրանց գնահատականները: Առցնաց այցից պարզվեց, որ ՌԾ-ի պլան ժամանակացույցով նախատեսված գործողությունները գնահատվել են ՌԾ կատարողականով 06.03.2020թ.-ին: Գնահատականներն իրենցից ներկայացնում են՝ լավ, միջին, բավարար, ավարտված չէ: Ըստ կատարման ցուցիչների հստակ չէ՝ գնահատականներից յուրաքանչյուրը որ դեպքում է դրվում: Բացի դա, առկա է քոլեջի 2015-2020թթ. ՌԾ-ի իրականացման հաշվետվություն, ուր ներկայացված են հաշվետու ժամանակահատվածի ընթացքում ՄՈՒՀ-ի կատարած աշխատանքները: Այդուհանդերձ, հաշվետվությունում չիրագործված ՌԾ-ի նպատակների պատճառները վերլուծված չեն: Փորձագիտական առցնաց այցի ընթացքում պարզվեց, որ ՄՈՒՀ-ը ՌԾ-ի կատարողականի արդյունքներով դեռևս նոր ՌԾ-ի պլանավորում չունի /ՌԾ-ի նախնական տարբերակ/: Բացի դա, ՄՈՒՀ-ը ՌԾ-ի գնահատում նախատեսում է իրականացնել 2020թ.-ի ավարտից հետո:

Դատողություններ: Փորձագիտական խումբը դրական է համարում, որ «ՄԲԻ» ՍՊԸ բժշկական քոլեջն ունի ՄՈՒՀ-ի հիմնական գործունեությունն արտահայտող հստակ և ընկալելի ձևակերպած առաքելություն: Ընդհանուր առմամբ դրական է դիտվում, որ ՄՈՒՀ-ի վարած քաղաքականությունն ու կրթական ոլորտում ծավալած գործունեությունը համապատասխանում են սահմանված առաքելությանը: Այդուհանդերձ, ՄՈՒՀ-ի առաքելությունից բխող նպատակներն ու խնդիրները իրատեսական չեն այն առումով, որ ՌԾ-ի պլան ժամանակացույցով սահմանված գործողությունները չեն նպաստում սահմանված նպատակների իրականացմանը: Վերոնշյալը կարող է վնասել ՄՈՒՀ-ի առաքելության արդյունավետ իրականացմանը:

Քանի որ ՄՈՒՀ-ի արտաքին շահակիցները գործատու դասախոսներ են ու շրջանավարտներ, որոնք նաև ներքին շահակիցներ են, ինչը խոչընդոտում է օբյեկտիվ իրավիճակի դուրս բերմանը:

Հատկանշական է, որ ՄՈՒՀ-ն իր ռազմավարական առաջնահերթություններից առանձնացնում է միջազգային և արտաքին գործունեության ընդլայնումը, հետազոտական ուղղվածության զարգացումը, նորագույն տեխնոլոգիաների ներդնումը: Այդուհանդերձ,

մտահոգիչ է, որ միջազգային և արտաքին գործունեությունն ընդլայնելու նպատակով ՄՈՒՀ-ը չի իրականացրել համապատասխան ուսումնասիրություններ: Բացի դա, առկա չեն հետազոտության զարգացմանն ուղղված հստակ քայլեր, ուսումնական գործընթացում նորագույն տեխնոլոգիաների ներդրման հիմքեր ևս առկա չեն:ՈՒստի սահմանված վերոնշյալ նպատակները հիմնականում իրականցված չեն, ինչը վտանգում ՌԾ-ի առաջնահերթությունների իրագործելիությունը:

Թեև ՌԾ կատարողականում ռազմավարական ծրագրի իրագործելիության, առաջընթացի գնահատման համար սահմանված ցուցիչներն ունեն գնահատականներ, այդուհանդերձ, այդ գնահատականները չունեն հիմնավորումներ այն առումով, թե չափելիության առումով ինչպես են ստացել լավ, միջին կամ բավարար ձևակերպումը: Արդյունքում ՌԾ-ի նպատակների իրականացման նկատմամբ ընթացիկ մշտադիտարկման և գնահատման բացակայությունը կարող են վտանգվել և խոչընդոտել նոր ՌԾ-ի նպատակների, առաջնահերթությունների սահմանմանը և խնդիրների բացահայտմանը: Քանի որ գնահատականները հստակ չեն արտացոլում դրված խնդիրների կատարման աստիճանը, չեն առանձնանում բարելավման ենթակա արդյունքները: Մտահոգիչ է, որ ՌԾ-ի իրականացման հաշվետվությունում ևս առկա չեն խնդիրների վերլուծությունները, որոնց հետևանքով ՌԾ-ի մի շարք նպատակներ արդյունավետորեն չեն իրականացվել: Այն վտանգում է հաջորդ ՌԾ-ում իրատեսական նպատակների սահմանմանը: Բացի դա էլ, քոլեջը նախատեսում է ՌԾ -ով գործողությունների կատարման ժամանակացույցի մոնիթորինգ իրականացնել ժամանակացույցի ավարտից հետո, ինչը կարող է վտանգել քոլեջի գործունեության ընթացիկ գնահատումը:

Եզրահանգում: Հաշվի առնելով, որ «Մեհրաբյանի անվան բժշկական ինստիտուտ» ՍՊԸ բժշկական քոլեջի ծավալած գործունեությունը համապատասխանում է ՄՈՒՀ-ի սահմանած առաքելությանը, համահունչ է ՀՀ Որակավորումների ազգային շրջանակին, քոլեջի նպատակներն ու խնդիրներն ընդհանուր առմամբ արտացոլում են շահակիցների կարիքները, ՄՈՒՀ-ի առաքելության և նպատակների իրականացման համար առկա են գործունեության գնահատման որոշ մեխանիզմներ, ուստի փորձագիտական խումբը գտնում է, որ «Մեհրաբյանի անվան բժշկական ինստիտուտ» ՍՊԸ բժշկական քոլեջը բավարարում է Չափանիշ 1-ի պահանջներին:

Եզրակացություն: Փորձագիտական խումբը «Մեհրաբյանի անվան բժշկական ինստիտուտ» ՍՊԸ բժշկական քոլեջի ինստիտուցիոնալ կարողությունների համապատասխանությունը ՉԱՓԱՆԻՇ 1-ի պահանջներին գնահատում է **բավարար:**

II. ԿԱՌԱՎԱՐՈՒՄ ԵՎ ՎԱՐՉԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

ՉԱՓԱՆԻՇ: ՄՈՒՀ-ի կառավարման համակարգը, վարչական կառույցները և դրանց գործունեությունն արդյունավետ են և միտված են հաստատության առաքելության ու նպատակների իրականացմանը՝ պահպանելով կառավարման էթիկայի կանոնները:

Փաստեր

«ՄԲԻ» ՍՊԸ բժշկական քոլեջը իրավաբանական անձի կարգավիճակ ունեցող առևտրային կազմակերպություն է, որի գործունեության նպատակը շահույթի ստացումն է: ՄՈՒՀ-ի նպատակն է տրամադրել միջին մասնագիտական կրթություն՝ առողջապահության ոլորտում բարձրորակ մասնագետներ պատրաստելու նկատառումով:

«ՄԲԻ» ՍՊԸ -ում կառավարումն իրականացվում է համաձայն ՀՀ-ում գործող օրենքների, ՄՈՒՀ-ի կանոնադրության: Քոլեջը կառավարվում է հիմնադիրների խորհրդի, մանկավարժական խորհրդի, տնօրենի կողմից: ՄՈՒՀ-ում կառավարչական գործընթացները կարգավորվում են ՄՈՒՀ-ի կառավարման մարմինների գործառույթների և լիազորությունների շրջանակում հաստատված իրավական ակտերով /կանոնադրություններ, կանոնակարգեր,

ընթացակարգեր/։ Կառավարման բարձրագույն մարմինը Հիմնադիրների խորհուրդն է, որը հաստատում է ռազմավարական և տարեկան ծրագրերը, ՄՈՒՀ-ի կառուցվածքը, եկամուտների և ծախսերի տարեկան բյուջեն, ֆինանսական հաշվետվությունները, լսում և գնահատում է տնօրենի տարեկան հաշվետվությունը։ ՄՈՒՀ-ում գործում է մանկավարժական խորհուրդ, որը պլանավորում և համակարգում է ուսումնամեթոդական և գիտահետազոտական գործունեության կառավարման և կազմակերպման հարցերը, ցիկլային հանձնաժողովների ներկայացմամբ ընդունում է որոշումներ և այլ գործառույթներ։ ՄՈՒՀ-ում գործում է նաև մեթոդական խորհուրդը՝ համակարգելով ցիկլային հանձնաժողովների աշխատանքը։ Քոլեջում գործում է նաև ուսանողական խորհուրդը, որը ուսանողության ինքնակառավարման մարմին է, ապահովում է ուսանողների շահերի պաշտպանությունը։

ՄՈՒՀ-ի ընթացիկ գործունեության ղեկավարումն իրականացնում է տնօրենը՝ ղեկավարելով ՄՈՒՀ-ի կրթական, գիտական, տնտեսական, ֆինանսական, միջազգային և այլ գործունեությունը։ Տնօրենը ՄՈՒՀ-ի անունից կնքում գործարքներ, ապահովում Հիմնադիրների խորհրդի կողմից ընդունված որոշումների իրագործումը, իրականացնում է ՀՀ օրենքներով և ՄՈՒՀ-ի կանոնադրությամբ սահմանված այլ լիազորություններ, տնօրինում է քոլեջի ֆինանսները։ Ըստ Ինքնավերլուծության՝ կառավարումն իրականացվում է միանձնյա և կոլեգիալ կառավարման սկզբունքների համակցմամբ։ Փորձագիտական խմբի առցնաց այցից պարզ դարձավ, որ ՄՈՒՀ-ը չի իրականցրել կառավարման համակարգի գնահատում։

ՄՈՒՀ-ի կառավարման բոլոր մակարդակներում կառավարման և որոշումների կայացման գործընթացների թափանցիկությունը բարձրացնելու նպատակով նախատեսվում է բոլոր նիստերի օրակարգերը, ընդունվող որոշումների նախագծերը տեղադրել ՄՈՒՀ-ի ֆեյսբուքյան էջում։ Փորձագիտական առցնաց այցը ներառող ժամանակահատվածում այդ փաստաթղթերը առկա չէին։

ՄՈՒՀ-ն ունի ֆինանսական ռեսուրսների ձևավորման և բաշխման իր քաղաքականությունը։ Հիմնադիրների խորհրդի 06.05.2013թ. N 29 արձանագրությամբ հիմնադիրների կողմից որոշվել է 2013թ. ֆինանսական տարվանից մինչև 2020թ. ստացված շահույթը չբաշխել ընկերության մասնակիցների միջև։ 2020-2025 ուս.տարիների Բիզնես պլանի ֆինանսական պլան բաժնում ներկայացված են չբաշխված շահույթի օգտագործման ուղղությունները՝ ՄՈՒՀ-ի մասնաշենքերի, լաբորատորիաների, լսարանների վերանորոգում, կահավորում, սեփական տարածքներում կենտրոնացված ջեռուցման համակարգի ներդնում, նոր պայմանագրերի կնքում, գրադարանային համակարգի ավելացում և այլն։

Փորձագիտական վերլուծությունները ցույց են տվեցին, որ առկա ֆինանսական ռեսուրսների բաշխման մոտեցումները համահունչ չեն ՌԾ-ով սահմանված առաջնահերթություններին՝ մասնավորապես՝ միջազգայնացմանը և հետազոտական բաղադրիչի զարգացմանը։ ՄՈՒՀ-ի 2020-2025 ուս.տարիների բեզնես պլանում ներկայացվել են քոլեջի ֆինանսական ռեսուրսների բաշխման տոկոսային համամասնություններ, ուր գիտության և հետազոտության ծախսերը կազմում են 2 տոկոս, որից՝ հրատարակումներ՝ 0,5 տոկոս, լաբորատոր սարքավորումների և նյութերի ձեռքբերում՝ 1 տոկոս, հետազոտությունների խրախուսման ծախսեր՝ 0,5 տոկոս։ Ինչ վերաբերում է միջազգայնացմանը, ապա հստակ տարանջատված չեն դրանց հատկացվող ծախսերը։

Փորձագիտական առցնաց այցից պարզ դարձավ, որ ՄՈՒՀ-ի կազմակերպական կառուցվածքը ենթարկվել է փոփոխության։ Կազմակերպական կառուցվածքում ներգրավված ստորաբաժանումների քարտեզով Որակի կենտրոնը հաշվետու է Հիմնադիրների խորհրդին, նախկինում հաշվետու է եղել տնօրենին։ Առցնաց այցից պարզ դարձավ, որ հաստատության ՌԾ-ի առաջնահերթություններ համարվող հետազոտութան զարգացման, կրթական ոլորտում նորագույն տեխնոլոգիաների ներդրման առումով պատասխանատվությունները հստակ առանձնացված չեն։ Կազմակերպական կառուցվածքի փոփոխության հիմքում առկա չեն հիմնավոր վերլուծություններ և գնահատականներ։

ՄՈՒՀ-ի կազմակերպչական կառուցվածքի վերլուծության արդյունքում պարզ դարձավ, որ ուսումնական հաստատության վարչական անձնակազմի բոլոր պարտականությունները (տնօրեն, ուսումնական մասի պատասխանատու, ՈԱԿ-ի համակարգող, բոլոր ստորաբաժանումների համակարգողներ, ցիկլային հանձնաժողովների նախագահներ, ՄԿԾ-ների պատասխանատուներ) նույնպես կատարում են պրոֆեսորադասախոսական անձնակազմի անդամները: Մեկ մասնագետը միաժամանակ կատարում է մի քանի վարչական պարտականություն:

Փորձագիտական վերլուծությունները ցույց տվեցին, որ ՄՈՒՀ-ում կառավարչական գործընթացները հիմնվում են էթիկայի սկզբունքների պահպանմամբ, որոնք ներկայացված են ՄՈՒՀ-ի կողմից կազմված էթիկայի կանոնագրքում:

Մանկավարժական խորհրդի կանոնակարգով քոլեջի ղեկավարությունը և պրոֆեսորադասախոսական կազմը ՄՈՒՀ-ի մանկավարժական խորհրդում ներկայացված են ամբողջությամբ, 25 տոկոսը ուսանողներ են: Փորձագիտական խմբի առցնաց այցից պարզ դարձավ, որ խորհուրդներում, կախված քննարկվող հարցերից, ըստ կանոնակարգի հրավիրվում են նաև գործատուներ և շրջանավարտներ: Սակայն գործընկեր կազմակերպությունների կարծիքների ու առաջարկների ներդրման դեպքեր առկա չեն, իսկ ուսանողներն ու դասախոսները ակտիվ մասնակցություն չունեն իրենց առնչվող որոշումների կայացմանը:

ՄՈՒՀ-ում, որպես երկարաժամկետ պլանավորում, մշակվել և գործում է 2015-2020թթ. ռազմավարական ծրագիրը: Առկա է 2015-2020 թթ. ռազմավարական ծրագրի ՌԾ-ի պլան ժամանակացույցը և կատարողականը: Որպես կարճաժամկետ պլանավորում, առկա են կարճաժամկետ ռազմավարական պլանները /տարեկան աշխատանքային պլաններ/: ՄՈՒՀ-ը մշակել է նաև 2020-2025 ուս. տարիների բիզնես պլան: Փորձագիտական վերլուծությունները փաստում են, որ ՄՈՒՀ-ում փաստացի արդյունավետ չի իրականացվում ռազմավարական կառավարում և պլանավորում /Ռազմավարական կառավարման գործիքակազմ փաստացի առկա չէ/[1]:

Ինքնավերլուծությունում նշվում է, որ ՄՈՒՀ-ի գործունեության բոլոր ոլորտներում պլանավորումն իրականացվում է երկարաժամկետ, միջնաժամկետ, կարճաժամկետ մակարդակներում, որոնցից յուրաքանչյուրն ունի կենսագործման և մշտադիտարկման իր մեխանիզմները: Փորձագիտական վերլուծությունները ցույց տվեցին, որ կարճաժամկետ պլանները չեն բխում երկարաժամկետ պլանից: Այսպես՝ ցիկլային հանձնաժողովների նախագահների 2019-2020 ուս. տարիների աշխատանքային պլանները ներառում են աշխատանքի բովանդակություն, կատարման ժամկետներ, պատասխանատուներ բաժինները, որոնք համադրելի չեն ՌԾ-ով առաջադրված խնդիրների հետ: Պրակտիկայի կազմակերպման, աշխատանքի տեղավորման և արտաքին միջազգայնացման կենտրոնի աշխատանքների համակարգման 2019-2020 ուս.տարիների կարճաժամկետ ռազմավարական ծրագիրը ևս համահունչ չէ ՌԾ-ով սահմանված միջազգային և արտաքին գործունեության ընդլայնման խնդիրներից բխող կատարվելիք քայլերին և սպասվող արդյունքներին: Այսպես, օրինակ՝ ՌԾ-ով նախատեսված է ավելացնել օտար լեզուներին տիրապետող աշխատակիցների և ուսանողների թիվը, խթանել ՄՈՒՀ-ի շահակիցների մասնակցությունը միջազգային ծրագրերին, ուսանողների պորտֆոլիո համակարգի կիրառում, ՄՈՒՀ-գործատու համագործակցության և որակի փոխադարձ գնահատման համակարգի ներդնում, մինչդեռ կարճաժամկետ ծրագրում դրանց իրականացման վերաբերյալ պլանավորումներ չեն կատարվել:ՄՈՒՀ-ում միջազգային ուսանողների ներգրավման և նրանց կրթական միջավայրի ապահովման համար պլանավորումներ ևս առկա չեն: Տնօրենի 2019-2020 ուս. տարիների կարճաժամկետ ռազմավարական ծրագրի հիմքում դրված չեն 2018-2019թթ. տնօրենի տարեկան հաշվետվությունում վեր հանված որոշ խնդիրները: Երկարաժամկետ և

[1] Տեքստը վերաշարադրվել է հաստատության դիտողությունների և առաջարկությունների քննարկման արդյունքնում:

կարճաժամկետ պլանները չունեն կատարման արդյունքների որակական վերլուծություններ:

Կարճաժամկետ գործառնական պլանավորում իրականացվում է ՄՈՒՀ-ի գործունեության բոլոր ուղղություններով՝ ուսումնագիտական գործընթացի, ֆինանսական, մարդկային ռեսուրսների, գույքի, կրթական ծրագրերի և այլն, ինչը, ըստ Ինքնավերլուծության, հստակորեն պետք է արտահայտվի տնօրենի տարեկան հաշվետվություններում: Այդ հաշվետվությունները հիմնականում նկարագրողական են, ներկայացնում են տեղեկատվություն ուսանողների առաջադիմության, համագործակցության պայմանագրերի, միջազգային միջոցառումների, գործընկերների հնչեցրած կարծիքների վերաբերյալ: Մինչդեռ փորձագիտական վերլուծությունները ցույց տվեցին, որ այդ հաշվետվություններում ներկայացված հարցերը ընդհանուր առմամբ չեն բխում ՌԾ-ից և ՌԾ-ի պլան ժամանակացույցից: 2018-2019թթ. տնօրենի տարեկան հաշվետվությունում ներկայացված է դիմորդների քանակի նվազման խնդիրը, նշվել է ուսանողների տեսական, գործնական աշխատանքներում տեղ գտած խնդիրների մասին, սակայն ՄՈՒՀ-ի 2020թ. կարճաժամկետ պլաններում հստակ պլանավորումներ առկա չեն այդ խնդիրներին լուծումներ տալու կապակցությամբ: Այս համատեքստում՝ գործառնական պլանավորման մեխանիզմները ևս հստակ չեն աշխատում:

Ըստ Ինքնավերլուծության՝ քոլեջում պլանավորված գործողությունների իրականացման և մշտադիտարկման համար կիրառվում է հաշվետվությունների մեխանիզմը: Տարեկան հաշվետվություններ ներկայացնում են տնօրենը, կառուցվածքային բոլոր ստորաբաժանումները: Փորձագիտական վերլուծությունները փաստում են, մշտադիտարակման նպատակով կիրառվող հաշվետվությունները որակական վերլուծություններ և գնահատականներ չեն պարունակում, ուստի տեսանելի չեն բարելավման ենթակա արդյունքները:

ՄՈՒՀ-ի ղեկավարությունը 2012թ. իրականացրել է աշխատաշուկայի կաիքների ուսումնասիրություն, ստացել է «Քույրական գործ» և «Բուժական կոսմետոլոգիա» մասնագիտությունների համար գործունեության թույլտվություն: Առցնաց այցի ընթացքում պարզվեց, որ շուկայի ուսումնասիրությունները շարունակական բնույթ չեն կրում, չեն ուսումնասիրվել միջազգային ուսանողներ ներգարավելու հնարավորությունները: Այցից պարզ դարձավ, որ ՄՈՒՀ-ը քոլեջի գործունեությայն վրա ազդող ամբողջական ուսումնասիրություններ և վերլուծություններ չի իրականացնում:

2018թ.-ից հստակեցվել է հարցումների անցկացման ընթացակարգը: Առցնաց այցից պարզ դարձավ, որ անցկացված հարցումները հիմնականում խնդիրներ վեր հանող չեն, արդյունքում հիմնավոր վերլուծություններ և գնահատումներ դրված չեն որոշումների կայացման հիմքում: Փորձագիտական վերլուծության արդյունքում պարզ դարձավ, որ քոլեջում խնդիրների վեր հանման, դրանց առաջացման պատճառների բացահայտման, տվյալների վերլուծության, արդյունավետ լուծումների և կայացրած համապատասխան որոշումների միջև կապը հստակ չի երևում[2]:

Ինքնավերլուծությունում նշվում է, որ կառավարման և վարչարարության որակի ապահովման գործընթացն իրականացվում է որակի կառավարման սկզբունքով՝ պլանավորում, իրականացում, գնահատում, բարելավում պարբերաշրջանով: Փորձագիտական խմբի առցնաց այցից կարելի է փաստել, որ ՄՈՒՀ-ում հիմնական գործընթացները գտնվում են պլանավորման և իրականացման փուլում, օրինակ պլանավորման-իրականցման փուլում են օտարերկրյա ուսանողների ներգրավման գործընթացը, հետազոտությունների զարգացման գործընթացը, նորագույն տեխնոլոգիաների ներդրումը ուսումնական գործընթացում, ՌԾ-ն, տարեկան կարճաժամկետ ծրագրերը, ՈԱ գործընթացների ներդրումը: Պարբերաշրջանը դեռևս ավարտված չէ, առկա չեն քանակական, որակական վերլուծություններ ու գնահատականներ:

[2] Տեքստը վերաշարադրվել է հաստատության դիտողությունների և առաջարկությունների քննարկման արդյունքնում:

Գնահատման փուլում է գտնվում հաստատության ՌԾ-ն, այդուհանդերձ առկա չեն քանակական և որակական գնահատականներ։

Քոլեջում հարցումները կանոնակարգվել են 2018-2019 ուս.տարվանից և փորձագիտական խմբի առցնաց այցից պարզ դարձավ, որ առանձին հարցումներ ՄԿԾ-ների արդյունավետության վերաբերյալ առկա չեն։ ՄՈՒՀ-ում այլ գործընթացների արդյունավետության վերաբերյալ տեղեկատվության հավաքագրման, վերլուծման, կիրառումը գնահատող գործուն մեխանիզմները ևս առկա չեն։

Ինքնավերլուծությունում նշվում է, որ ՄՈՒՀ-ի կրթական ծրագրերի և շնորհվող որակավորումների մասով տեղեկատվությունը հրապարակվում է ՄՈՒՀ-ի պաշտոնական www.armmed.am կայքում, բացի դա ՄՈՒՀ-ի առօրյան, կատարված միջոցառումները և տարաբնույթ այլ տեղեկատվությունը տարածվում է ֆեյսբուքյան էջի միջոցով, որը նաև կրթական ծրագրերի և շնորհվող որակավորումների որակի մասին քանակական և որակական տեղեկատվության հրապարակումները գնահատող մեխանիզմ է։ Փորձագիտական առցնաց այցը ներառող ժամանակահատվածում ֆեյսբուքյան էջում տեղադրված չէին ՄԿԾ-ները, առկա չէր շրջանավարտների, նրանց հաջողությունների վերաբերյալ տեղեկատվություն։ ՄՈՒՀ-ի կայքէջում ներկայացված են քոլեջում դասավանդվող մասնագիտությունները և յուրաքանչյուր մասնագիտությամբ մասնագետի զբաղմունքները, մասնագիտական պարտականությունները և օրինակելի ուսումնական պլանները։

Դատողություններ: Փորձագիտական խումբը գնահատում է քոլեջի ջանքերն ուղղված կառավարման ու վարչարարության բարելավմանը։ Այդուհանդերձ, դեռևս առկա են հրատապ լուծման ենթակա խնդիրներ։ Մասնավորապես.

Մտահոգիչ է, որ քոլեջի վարչական անձնակազմի բոլոր պարտականությունները կատարում են պրոֆեսորադասախոսական անձնակազմի անդամները, և մեկ մասնագետը միաժամանակ կատարում է մի քանի վարչական պարտականություն, ինչը կարող է հանգեցնել գերծանրաբեռնվածության։ Արդյունքում վտանգվում է կառավարման համակարգի արդյունավետ գործունեությունը։ Անհանգստացնող է, որ ՄՈՒՀ-ի ՌԾ-ով սահմանված որոշ առաջնահերթություններ չունեն պատասխանատուներ, ինչի արդյունքում վտանգվում է դրանց իրականացումը։

Չնայած որ ՄՈՒՀ-ի կազմակերպական կառուցվածքում կատարվել է փոփոխություն, որի հիմքում դրված չեն հստակ տվյալներ, ուստի այս համատեքստում կարող է տուժել որոշումների կայացման անհրաժեշտությունն ու արդյունավետությունը։ Դրական է դիտվում, որ ՄՈՒՀ-ում կառավարչական գործընթացները հիմնվում են էթիկայի սկզբունքների պահպանմամբ, որոնք ներկայացված են ՄՈՒՀ-ի կողմից կազմված էթիկայի կանոնագրքում։

Փորձագիտական խումբը դրական է դիտում, որ ՄՈՒՀ-ի հիմնադիրների խորհուրդը որոշել է մինչև 2020թ. ստացված շահույթը չբաշխել ընկերության մասնակիցների միջև և ուղղել ՄՈՒՀ-ի զարգացմանը, որը կնպաստի ռազմավարական խնդիրների իրագործմանը։ Թեև Բիզնես պլանի «ֆինանսական պլան» բաժնում նախանշված են շահույթի օգտագործման ուղղությունները, այնուամենայնիվ 2013-2020թթ. ընթացքում շահույթի հաշվին կատարված ծախսերի առանձնացումը ավելի հստակ ցույց կտար կատարված որոշման հիմնավորումը և կնպաստեր ֆինանսների բաշխման արդյունավետությանը ըստ ՌԾ նպատակների։ Արդյունքում հիմնավորված չէ կայացված որոշման արդյունավետոթյունը։

Անհանգստացնող է, որ ՄՈՒՀ-ի ֆինանսական ռեսուրսների բաշխվածությունն ամբողջությամբ չի արտահայտում ՌԾ-ի նպատակները։ Մասնավորապես՝ ՌԾ-ի առաջնահերթություններից հետազոտության զարգացմանը տրամադրվող ծախսերը քիչ տեսակարար կշիռ ունեն, իսկ միաջազգայնացման զարգացմանն ուղղված առանձին ֆինանսական միջոցներ չեն տրամադրվում։ Արդյունքում վտանգվում է ֆինանսական քաղաքականութան արդյունավետությունը և քոլեջի զարգացումը։

Փորձագիտական խումբը դրական է համարում, որ ՄՈՒՀ-ում գործում են կարճաժամկետ և երկարաժամկետ պլաններ, սակայն անհանգստացնող է, որ այդ պլանները չունեն կատարման

արդյունքների որակական վերլուծություններ, որը վտանգում է խնդիրների բացայահտմանն ու քոլեջում շարունակական բարելավման մշակույթի ստեղծմանը:
Մտահոգիչ է նաև, որ կարճաժամկետ պլանները չեն բխում երկարաժամկետ պլանից, որը բացասաբար է անդրադառնում գործառնական պլանավորման և մշտադիտարկման մեխանիզմների արդյունավետ գործարկման վրա:

Փորձագիտական խումբը դրական է համարում քոլեջի փորձը աշխատաշուկայի ուսումնասիրության հիման վրա մասնագիտության ներդրումը, միևնույն ժամանակ գտնում է, որ նմանատիպ վերլուծությունները, ինչպես նաև դրանց պարբերաբար իրականացումը և կայուն տվյալների հավաքագրման մեխանիզմների ներդրումը կնպաստի տվյալների վրա հիմնված որոշումների կայացման համակարգի ամրապնդմանը և որոշումները առավել հիմնավորված կդառնան: Քոլեջը նպատակադրվել է հավաքագրել միջազգային ուսանողներ, սակայն ուսումնասիրված չեն քոլեջի հնարավորություններն այս ուղղությամբ, որը կարող է խոչընդոտել առաջիկայում միջազգային ուսանողների համար արդյունավետ կրթության իրականացմանը: Փորձագիտական խումբը բացասական է համարում, որ ՄՈՒՀ-ն իր գործունեության վրա ազդող արտաքին և ներքին գործոնների համապարափակ ուսումնասիրություններ չի իրականացնում, որը վտանգում է որոշումների հիմնավորվածությունը:

Հարկ է նշել, որ ՄՈՒՀ-ում հարցումները կանոնակարգվել և պարբերական բնույթ են կրում 2018-2019 ուս. տարվանից, ուստի ՄԿԾ-ների և այլ գործընթացների արդյունավետության վերաբերյալ տեղեկատվության հավաքագրման, վերլուծման, կիրառումը գնահատող հստակ մեխանիզմները ևս բացակայում են: Արդյունքում ամբողջությամբ վտանգված է ՄՈՒՀ-ի կառավարման համակարգի արդյունավետությունն ու դրա գնահատումը:

Թեև ՄՈՒՀ-ն իր մասնագիտություններիների և նրանց կրթական ծրագրերի, ինչպես նաև այլ գործընթացների որակի ապահովման համար մշակել է որակի ապահովման կենտրոնի կողմից հսկվող որակի ապահովման քաղաքականություն և իրականացման ընթացակարգեր: Այդուհանդերձ, որակի կառավարման սկզբունքը՝ պլանավորում, իրականացում, գնահատում, բարելավում պարբերաշրջանը հստակ ամփոփումներ չունի, գնահատման արդյունքում առկա չեն հստակ առանձնացված խնդիրները և բարելավման ուղիները: Բացի դա ՄԿԾ-ների արդյունավետությունը գնահատված չէ, ինչը խոչընդոտում է ՄԿԾ-ների շարունակական բարելավմանը;

Եզրահանգում: Հաշվի առնելով, որ ՄՈՒՀ-ում առկա է կառավարման համակարգի արդյունավետության և մարդկային ռեսուրսների կառավարման արդյունավետության խնդիր, որոշումների կայացումը չի հիմվում հավաստի տվյալների վրա, ռազմավարական կառավարումն ու պլանավորումը թերի է, հաստատության առաքելությանն ու նպատակներին համապատասխան կարճաժամկետ և երկարաժամկետ պլանավորման իրականացման և մշտադիտարկման մեխանիզմները արդյունավետ չեն, ինչպես նաև առկա չեն ՄԿԾ-երի և այլ գործընթացների արդյունավետության հավաքագրումը, վերլուծությունը և կիրառումը գնահատող հստակ մեխանիզմներ, քաղաքականությունների և ընթացակարգերի վարչարարության իրականացման որակի կառավարման սկզբունքը պլանավորում-իրականացում փուլում է, գնահատման և բարելավման օրինակներ չկան, ինչպես նաև ընդհանուր առմամբ բացակայում են կրթական ծրագրերի և շնորհվող որակավորումների մասին քանակական և որակական տեղեկատվությունը գնահատող մեխանիզմներ, փորձագիտական խումբը գտնում է, որ «Մեհրաբյանի անվան բժշկական ինստիտուտ» ՍՊԸ բժշկական քոլեջը չի բավարարում Չափանիշ 2-ի պահանջներին:

Եզրակացություն: Փորձագիտական խումբը «Մեհրաբյանի անվան բժշկական ինստիտուտ» ՍՊԸ բժշկական քոլեջի ինստիտուցիոնալ կարողությունների համապատասխանությունը ՉԱՓԱՆԻՇ 2-ի պահանջներին գնահատում է **անբավարար:**

III. ՄԱՍՆԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԿՐԹԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐ

ՉԱՓԱՆԻՇ: ՄԿԾ-ները համապատասխանում են հաստատության առաքելությանը, կազմում են հաստատության պլանավորման բաղկացուցիչ մաս և նպաստում են շարժունությանը և միջազգայնացմանը:

Փաստեր

ՄՈՒՀ-ի 2015-20 թթ. ռազմավարական ծրագրում որպես նպատակ նշվում է աշխատաշուկայի պահանջներին համահունչ, ժամանակակից տեխնոլոգիաներով և մեթոդաբանությամբ հագեցած կրթական ծրագրերի ապահովվումը և ուսանողակենտրոն համակարգի ստեղծումը:

Համաձայն ինքնավերլուծության մեջ ներկայացված տվյալների, գործընթացի իրականցման պահին քոլեջում գործում են 6 միջին մասնագիտական կրթական ծրագիր՝ «Քույրական գործ», «Ատամնատեխնիկական գործ», «Դեղագործություն», «Մանկաբարձական գործ», «Բուժական կոսմետոլոգիա» և «Կոսմետիկա և դիմահարդարման արվեստ»: Ինչպես պարզ դարձավ առցնաց այցից, վերջին տարիներին կտրուկ նվազել է «Կոսմետիկա և դիմահարդարման արվեստ» մասնագիտությամբ դիմորդների քանակը և ըստ քոլեջի ԻՎ 2014/2015 ուս.տարվանից այդ մասնագիտությամբ ընդունելություն չի իրականացվել: Առցնաց այցելության ընթացքում պարզաբանվեց նաև, որ ներկա պահին ՄՈՒՀ-ի համար գերակա ուղղություններ են համարվում «Դեղագործություն», «Ատամնատեխնիկական գործ» և «Բուժական կոսմետոլոգիա» մասնագիտությունները, հատկապես հաշվի առնելով օտարերկրյա ուսանողների ներգրավման պլանները:

Ինքնավերլուծության համաձայն, ՄՈՒՀ-ի ՄԿԾ-ները կազմվել են պետական կրթական չափորոշիրներին համապատասխան: Ծրագրերի ուսումնասիրման և պետական կրթական չափորոշիչների հետ համադրման արդյունքում պարզվեց, որ ծրագրերը ընդհանուր առմամբ համապատասխանում են, չնայած, որ որոշ տեղերում կատարված են փոփոխություններ: Դրանք վերաբերվում են առանձին առարկաների ժամերին, և, երբեմն, կիսամյակներում առարկաների տեղափոխությանը: Ինչպես պարզ դարձավ առցնաց այցելության ընթացքում, այդ փոփոխությունները պայմանավորված են մոդուլները դասավանդող դասախոսների ժամային ծանրաբեռնվածության ավելի հարմար բաշխման անհրաժեշտությամբ: Ինչպես նշվեց, առարկաների տեղափոխությունները քննարկվել և հաստատվել են համապատասխան առարկայական ցիկլային հանձնաժողովներում, այնուամենայնիվ դրանց արդյունքում մուտքային պահանջ (պրեռեկվիզիտ) հանդիսացող մոդուլը հայտնվել է մասնագիտական մոդուլի հետ զուգահեռաբար նույն կիսամյակում, օրինակ՝ անալիտիկ քիմիա (մուտքային մոդուլ ըստ պետական կրթական չափորոշիչի պահանջների) և դեղագործական քիմիա մոդուլները քոլեջում դասավանդում են նույն կիսամյակում:

Առցնաց այցելության ընթացքում պազվեց նաև, որ «Բուժական կոսմետոլոգիա» մասնագիտության ՄԿԾ-ում փոփոխություն է կատարվել «Ակադեմիական նկարչության տեսակներ-1» և «Ակադեմիական նկարչության տեսակներ-2» մոդուլները՝ դասավանդող դասախոս չունենալու պատճառով: Նշված մոդուլները փոխարինվել են «Օրգանական քիմիա» և «Կոսմետոլոգիական քիմիա» մոդուլներով (դասավանդում է Դեղագործություն ՄԿԾ-ի մասնագետ՝ քիմիկոս): Նշված մոդուլների ներդրման վերաբերյալ առցնաց այցի ընթացքում հնչել է դրական գնահատական, այդուհանդերձ, մասնագիտական մոդուլների փոփոխության արդյունավետության կամ ռիսկերի գնահատում չի իրականացվել:

Ինչ վերաբերվում է ՄԿԾ-ներում առանձին մոդուլներին, ապա ուսումնասիրության արդյունքում պարզ դարձավ, որ դրանք կազմված են պետական կրթական չափորոշիչներում բերված ձևաչափին համապատասխան և պարունակում են բոլոր անհրաժեշտ

նկարագրությունները: Ինչ վերաբերում է մոդուլների բովանդակությանը, ապա հիմնականում դրանք լիովին համապատասխանում են (երբեմն կրկնում են) պետական կրթական չափորոշչին, սակայն կան որոշ բացառություններ: Այս դեպքում փոփոխությունները վերաբերում են ինչպես ուսումնառության վերջնարդյունքներին և դրանց կատարման չափանիշներին, այնպես էլ մոդուլի նպատակին կամ ուսումնասիրվող թեմաներին (օրինակ՝ դեղագործական քիմիա, հիգիենա և էկոլոգիա, ընդհանուր դեղաբանություն): Առցնաց այցելության ընթացքում պազվեց, որ մոդուլներում կատարվող փոփոխությունները միտված են ծրագրերի բարելավմանը և կատարելագործմանը, սակայն այդ փոփոխությունները չունեն հստակ հիմնավորում (հիմքում չկան կատարված վերլուծություններ), հաճախ դրանք հիմնված են միայն մոդուլը դասավանդող դասախոսի անձնական մասնագիտական փորձի վրա:

ՄՈՒՀ-ում մշակվել է «Կրթական ծրագրերի վերջնարդյունքներին համապատասխան դասավանդման, ուսումնառության և գնահատման մեթոդների ընտրության քաղաքականության կարգ» (հաստատված 27.09.2019 թ.), որի համաձայն ուսումնառության մեթոդների ընտրությունը կատարվում է ըստ վերջնարդյունքների՝ գիտելիք, կարողություն և հմտություն: Դասավանդման, ոսումնառության և գիտելիքների գնահատման մեթոդների ընտրությունը կատարվում է մոդուլների հեղինակների կողմից, քննարկվում է ցիկլային հանձնաժողովներում և հաստատվում է փոխտնօրենի կողմից: Ըստ կարգի, գիտելիք ձևավորող ուսումնառության մեթոդներն են համարվում դասախոսությունները և մասնագիտական գրականության ընթերցումը, ֆիլմերի դիտումը: Կարողությունների ձեռքբերումը իրականացվում է դերային խաղերի և համապատասխան խնդիրների լուծման ճանապարհով, ինչպես նաև իրական կամ պայամանական իրավիճակներում պահանջվող հմտության գործադրմամբ: Օրինակ՝ Բուժքույրական գործ և Մանկաբարձություն ՄԿԾ-ների համար ՄՈՒՀ-ը ունի մուլյաժներով համալրված կաբինետ, որտեղ իրականացվում են գործնական պարապմունքներ, ինչպես նաև ուսանողները որոշ բժշկական մանիպուլյացիաներ են (ճնշման չափում, ներարկում) կատարում իրենց դասընկերներնների օգնությամբ: Կամ, Բուժական կոսմետոլոգիա ՄԿԾ-ի տրամադրության տակ գտնվող կոսմետոլոգիական կաբինետներում ուսանողերը որոշ գործողություններ (օրինակ՝ մերսումներ) ոչ միայն տեսնելու, այլ նաև միմյանց օգնությամբ իրականացնելու հնարավորություն ունեն: Դեղագործություն ՄԿԾ-ի համար ՄՈՒՀ-ը գործնական պարապմունքներ իրականացնելու ավելի սակավ ռեսուրսներ ունի, օրինակ՝ հնարավորություն կա միայն փոշի և հեղուկ դեղաձևեր պատրաստելու համար: Ինչ վերաբերում է կարողությունների ձեռք բերմանը, ապա այն կատարվում է ինքնուրույն ուսումնառության մեթոդների կիրառմամբ՝ տվյալ դեպքում միայն ռեֆերատների միջոցով:

Ըստ կարգի, վերջնարդյունքներին համապատասխան դասավանդումը ենթադրում է ուսանողի ուսումնառության պրոցեսում անընդհատ գտնվելը, այսպես, օրինակ՝ թելադրությամբ դասախոսության տեքստ գրելը համարվում է սույն կարգի խախտում: Փորձագիտական վերլուծություններից պարզ դարձավ, որ գիտելիքների ձևավորումը իրականացվում է դասախոսությունների (հիմնական մասնաբաժին) և, ավելի քիչ, ուսումնական գրականության ուսումնասիրման միջոցով, սակայն դասախոսությունները հիմնականում մատուցվում են թելադրության տեսքով: Առցանց դասերի ժամանակ ցուցադրվում են նաև տեսաձայնագրություններ, դասի ընթացքում իրականացվում է անցած նյութի քննարկում, ուսանողերի կողմից այն վերարտադրելու և հարց ու պատասխանի միջոցով: Կախված մասնագիտական մոդուլի տեսակից, երբեմն իրականացվում են նաև դերային խաղեր, կատարվում է իրավիճակային կամ այլ տիպի խնդիրների լուծում, թեստերի քննարկում: Օրինակ՝ քույրական գործ թերապիայում կիրառվում են իրավիճակային խնդիրներ, թեստեր, կարծր դեղաձևերի տեխնոլոգիայում՝ հաշվարկային խնդիրներ: Որոշ մասնագիտական մոդուլների, օրինակ՝ քույրական գործը թերապիայում (տարբեր մոդուլներ), կարծր դեղաձևերի տեխնոլոգիա, դեղագործական քիմիա, ատամնատեխնիկական գործ մասնագիտության տարբեր տեսակի պրոթեզների պատրաստման մասնագիտական մոդուլներ և այլն,

ուսումնառության ընթացքում (առկա ուսուցման պայմաններում) իրականացվում են գործնական պարապմունքներ, որոնց քանակը և ինտենսիվությունը տարբեր է, կախված ՄԿԾ-ներից և առարկաներից: Եթե որոշ դեպքերում, առկա ռեսուրսների բավարար լինելու պարագայում, գործնական պարապմունքների ընթացքում հնարավոր է բոլոր ուսանողների ակտիվ մասնակցությունը (ատամնատեխնիկական գործ մասնագիտության տարբեր տեսակի պրոթեզների պատրաստման մասնագիտական մոդուլներ), ապա այլ դեպքերում գործնական պարապմունքները սահմանափակվում են միայն դասախոսի կողմից գործնական աշխատանքի ցուցադրությամբ օրինակ՝ քիմիական լաբորատոր փորձերը (անալիտիկ քիմիա, դեղագործական քիմիա): Ուսանողներին պարբերաբար հանձնարարվում են ռեֆերատներ: Դրանք հիմնականում կրկնում են դասի թեմաները (չնայած, կան բացառություններ, օրինակ ցածր կուրսի ուսանողներին հանձնարարվել էր ջրի վերաբերյալ աշխատանքի կատարում) և իրենցից ներկայացնում են տեսական նյութի շարադրում: Ռեֆերատների նկատմամբ պահանջները (էջերի քանակ, գրականության ցանկ, բաժիններ, ձևաչափ) հստակ ներկայացված չեն: Ուսանողների ինքնուրույն աշխատանքների կամ ինտերակտիվ ուսումնառության մեթոդների կիրառման հիմքեր չեն հայտնաբերվել:

2019-2020 ուս.տարվա երկրորդ և 2020-2021 ուս.տարվա առաջին կիսամյուակում, համաճարագային իրավիճակով պայմանավորված, ուսումնական գործընթացը ՄՈՒՀ-ում իրականացվել է հեռավար, առցանց տարբերակով: Այստեղ, հատկապես սկզբնական շրջանում, ծագել են որոշ խնդիրներ (տեխնիկական բնույթի), որոնք, ինչպես պարզվեց առցնաց այցելության ընթացքում, հիմնականում շտքվել են: ՄՈՒՀ-ի համար ավելի լուրջ մարտահրավեր է հանդիսացել գործնական պարապմունքների և պրակտիկայի իրականացման խնդիրը: Չնայած այս խնդրի լուծման համար ձեռնարկվել են որոշ քայլեր, գարնանային կիսամյակի բաց թողնված ժամերը ինչ որ չափով լրացվել են սեպտեմբեր ամսվա ընթացքում, այնուամենայնիվ, նշված իրավիճակի շարունակական լինելու պարագայում ՄՈՒՀ-ը դեռևս չուներ հստակ պլանավորված և մշակված միջոցառումների ցանկ, որի միջոցով կկարողանա ապահովել ուսումնական գործընթացի կայունությունը և լիարժեք իրաանացումը:

Համաձայն ինքնավերլուծության, 2018 թվականից ՄՈՒՀ-ում գործում է գիտելիքի գնահատման բազմագործոնային համակարգ (20 միավոր), բաղադրիչները հետևյալ համամասնությամբ.
ա) Քննությամբ ավարտվող առարկաների համար
1. հաճախումներ և ընդհանուր ակտիվություն - 2 միավոր,
2. անհատական և ինքնուրույն աշխատանքների կատարողականներ - 2 միավոր
3. առաջին և երկրորդ ընթացիկ քննություն - 4-ական միավոր
4. եզրափակիչ քննություն - 8 միավոր:
բ) Ստուգարքով ավարտվող առարկաների համար
1. հաճախումներ և ընդհանուր ակտիվություն - 2 միավոր,
2. անհատական և ինքնուրույն աշխատանքների կատարողականներ- 8 միավոր
3. եզրափակիչ քննություն - 10 միավոր:

Առաջին և երկրորդ ընթացիկ քննություններն ունեն կարգով սահմանված ժամանակացույց և իրականացվում են հարցատոմսերի (բանավոր կամ գրավոր) կամ թեստային եղանակով: Եղանակի ընտրության չափանիշները հստակ ներակայացված չեն, սովորաբար նույն մոդուլի մի միջանկյալը բանավոր է, մյուսը թեստային: Տրամադրված փաստաթղթերի վերլուծության արդյունքում պարզվեց, որ տարբեր մոդուլների ինչպես թեստային առաջադրանքների, այնպես էլ բանավոր հարցատոմսերի ձևաչափերը տարբեր են: Միանման չէ նաև մոդուլներում թեստերի քանակը, օրինակ՝ դեղաձևերի տեխնոլոգիայի քննական տոմսը պարունակում է 10, հիգիենա և էկոլոգիայինը՝ 12 թեստ/առաջադրանք, իսկ ներքին հիվանդություններինը՝ 20: Ընդ որում, թեստերի գնահատման չափանիշները նույնպես տարբեր են՝ տեխնոլոգիայի և ներքին հիվանդությունների դեպքում բոլոր թեստերի համար ուսանոնղը ստանում են նույն միավորը, իսկ հիգիենայի թեստերը տարբերակված են ըստ բարդությունների՝ 3 տեսակի, որոնք,

համապատասխանաբար, գնահատվում են տարբեր միավորներով: Կոսմետիկ թերություններ մոդուլի քննական տոմսերը պարունակում են 9 միջին բարդության և 1 բարդ թեստ: Ավելին, նույն առարկայի տարբերակներում երբեմն խախտված է հարցերի համամասնությունը, օրինակ հաշվարկ պահանջող առաջադրանքների քանակը մեկ տարբերակում ավելի շատ է, քան մյուսում: Ինքնավերլուծությանը կից ներկայացված փաստաթղթերում նշված առաջադրանքների ընտրության չափանիշները արտացոլված չեն: Եզրափակիչ քննության հարցատոմսերը սովորաբար պարունակում են 4 տեսական հարց, սակայն, առարկայից կախված, պարունակում են նաև այլ առաջադրանքներ: Այսպեսով, ատեստավորման թեստայի և բանավոր եղանակները հիմնականում գնահատում են ուսանողների գիտելիքները: Չնայած, որ ձեռք բերված կարողությունների գնահատման որոշ տարրեր այս եղանակներում նույնպես առկա են (հաշվարկային կամ իրավիճակային խնդիրների տեսքով), սակայն հմտությունների գնահատում, որպես կանոն, չի իրականացվում: Մոդուլի ուսումնառության ընթացքում գործնական պարապմունքներին ուսանողների մասնակցությունը չի գնահատվում: 2 միավոր ուսանողը վաստակում է հաճախելու և ընդհանուր ակտիվության (դաս պատասխանելու) համար: Ինքնուրույն աշխատանքների՝ ռեֆերատների, ներկայացումը նույնպես գնահատվում է, առավելագույնը 2 միավոր: Բազմագործոնային համակարգի արդյունավետության գնահատման միջոցառումների իրականացման մասին վկայող հիմքեր չեն հայտնաբերվել:

Կիսամյակի ընթացքում (1-2 օր), ինչպես նաև կիսամյակի վերջում (3-4 շաբաթ տևողությամբ) ծրագրով նախատեսված է պրակտիկա, տարբեր բժշկական հաստատություններում, կոսմետոլոգիական կաբինետներում, դեղատներում և այլ: Ուսանողների մասնակցությունը հսկվում է իրենց կողմից լրացվող և պրակտիկայի ղեկավարի կողմից ստորագրվող օրագրերի միջոցով: Պրակտիկայի ընթացքում ձեռք բերված գիտելիքների, հմտությունների, կարողությունների ստուգման և գնահատման հիմքեր չեն հայտնաբերվել: Առցնաց այցելության ընթացքում պարզվեց, որ պրակտիկան ավելի շատ ենթադրում է ուսանողի դիտորդի կարգավիճակում գտնվելը, չնայած, որ առանձին մասնագիտությունների համար հնարավոր է ուսանողնի կողմից որոշ գործառույթների իրականացում, հատկապես դա բնորոշ է Քույրական գործ մասնագիտության համար: Այս հանգամանքին նպաստում է այն փաստը, որ ՄՈՒՀ-ի որոշ դասախոսներ համատեղությամբ զբաղվում են նաև պրակտիկ գործունեությամբ: Այս առումով, դրական դեր ունի նաև տարբեր գործատուների հետ կնքած պայմանագրերը:

ՄՈՒՀ-ում գործում են «ՄԲԻ» ՍՊԸ բժշկական քոլեջի ուսանողների գնահատման գործընթացի վերահսկման կարգ (հաստատված 05.12.2017 թ.) և «ՄԱԲԻ»-ի ՍՊԸ բժշկական քոլեջի քննությունների բողոքարկման կարգ (հաստատված 02.02.2018 թ.): Այնուամենայնիվ, հաստաման պահից առ այսօր քոլեջում քննական գնահատականի բողոքարկման որևէ դեպք չի գրանցվել:

Ըստ կարգի պետական ամփոփիչ ատեստավորումը իրականացվում է մի քանի մասնագիտական առարկաների միջառարկայական բանավոր քննությամբ: Այնուամենայնիվ, փորձագիտական խմբի առցնաց այցելության ընթացքում պարզվեց, որ ՄՈՒՀ-ը ծրագրում է ամփոփիչ ատեստավորման ձևի փոփոխություն՝ ավելացնելով գործնական բաղադրիչ: Ավելին, ըստ ստացված տվյալների, 2019-20 ուստարվա «Ատամնատեխնիակկան գործ» որակավորման ամփոփիչ ատեստավորմանը ուսանոնղերը ներկայացրել են իրենց կողմից պատրաստված աշխատանքները և այս մոտեցումը կրելու է շարունակական բնույթ (չնայած, կարգում համապատասխան փոփոխությունները դեռ չեն կատարվել): Սակայն, հաշվի առնելով առկա ռեսուրսների և հնարավորությունների սահմանափակ լինելը, մյուս ՄԿԾ-ներում այս մոտեցումը չի գործել:

ՄՈՒՀ-ում մշակվել է բենչմարքինգի իրականացման քաղաքականություն և ընթացակարգ (հաստատման տարեթիվը բացակայում է): Ուսանողների փոխանակային ծրագրերի իրականացման համար (Լատվիայի Դաուգավպիլս քաղաքի բժշկական քոլեջի հետ կնքված համագործակցության պայմանագրի շրջանակներում) կատարվել է «Քույրական գործ»

ՄԿԾ-ի բենչմարքինգ։ Որպես բենչմարքինգի գործընկեր ընտրվել են երեք օտարերկրյա ուսումնական հաստատություններ՝ Դաուգավպիլսի բժշկական քոլեջը, Մինսկի պետական բժշկական քոլեջը, Մոսկվայի № 6 բժշկական քոլեջը։ Ծրագրերի համադրման արդյունքում դուրս են բերվել ուժեղ և թույլ կողմերը։ Որպես թույլ կողմ նշվել է նախադիպլոմային պրակտիկայի ժամերի քիչ լինելը և ամփոփիչ ատեստավորման կերպը։

Ըստ գործող կարգի ՄՈՒՀ-ի ամփոփիչ ատեստավորման հանձնաժողովներում ընդգրկվում են համապատասխան ոլորտի մասնագետներ (որպես նախագահ), որոնք քննություններից հետո ներկայացնում են ամփոփ հաշվետվություն։ Երբեմն, այնտեղ տեղ են գտնում ՄԿԾ-ների վերաբերյալ որոշ դատողություններ, օրինակ՝ ուսումնառության ընթացքում գործնական բաղադրիչի ավելացման վերաբերյալ։ Ինչ վերաբերվում է ՄԿԾ-ների կազմման, բարելավման գործընթացում արտաքին շահակիցների ավելի ակտիվ ներգրավմանը, ապա այս ուղղությամբ ձեռնարկված քայլերից կարելի է նշել գործատուների և շրջանավարտների մասնակցությունը մանկ. խորհրդի նիստերին։ Այնուամենայնիվ, փորձագիտական առցնաց այցի ընթացքում պարզվեց, որ նման շփումները հիմանակնում չեն նպաստում առկա կարիքների բացահայտմանը։

ՄՈՒՀ-ում ստեղծվել է «Առարկայական կրթական ծրագրերի վերանայման, կազմման և մշտադիտարկման ուղեցույց» (հաստատմանը տարեթիվը բացակայում է)։ Քոլեջում մշակվել է նաև «Քոլեջի ծրագրերի ու որակավորումների չափանիշներին համապատասխանության և որակի ապահովման քաղաքականություն» (հաստատված 25.08.2017 թ.), ըստ որի յուրաքանչյուր ուսումնական տարվա սկզբում պետք է իրականացվի ծրագրերի պարբերական ստուգում։ Այնուամենայնիվ, առցնաց այցի ընթացքում նշված միջոցառումների իրականացման մասին վկայող հստակ հիմքեր չեն արձանագրվել։ Բացի այդ, ուսումնասիրության արդյունքում պարզվեց, որ ՀՀ ԿԳՄՆ-ը 2019 թ.-ի սեպտեմբերի 18-ին հաստատվել է նոր՝ «Դեղագործություն» մասնագիտության 0916.01.5 «Դեղագործ» որակավորման պետական կրթական չափորոշիչը, սակայն ՄՈՒՀ-ը դեռ առաջնորդվում է, հին՝ 2012 թ.-ի հրամանով։

Փորձագիտական ուսումնասիրությունների ժամանակ ընդհանուր և հատուկ մասնագիտական մոդուլների ծրագրերում հայտնաբերվեցին որոշ անհամապատասխանություններ (թեմատիկ)։ Առցնաց այցելության ընթացքում պարզվեց, որ ընդհանուր մասնագիտական մոդուլների ծրագրերը հաստավում են այլ ցիկլային հանձնաժողովների կողմից ինչ հատուկ մասնագիտականները։ Արդյունքում, տվյալ ՄԿԾ-ի մասնագետները դրանց հաստատմանը չեն մասնակցում։ Ինչպես պարզ դարձավ առցնաց այցելության ժամանակ, առարկաների թեմաների և բովանդակության փոխհամաձայնեցում գործնականում չի իրականացվում։

Դատողություններ: Փորձագիտական խումբը դրական է համարում, որ քոլեջի ՄԿԾ-ները ընդհանուր առմամբ համապատասխան են ՈԱՇ-ի 5-րդ մակարդակի առանձնահատկություններին։ ՄԿԾ-ները համապատասխանում են նաև պետական կրթական չափորոշիչների պահանջներին, որը կնպաստի մրցունակ կադրերի պատրաստմանը։ Միևնույն ժամանակ փորձագիտական խումբը նշում է, որ ՄԿԾ-ներում կատարվել են որոշակի փոփոխություններ, որոնք սակայն չունեն հիմնավորումներ։ ՄԿԾ-ների փոփոխությունները ըստ մշտադիտարկումների և տարբեր քննարկումների արդյունքում կատարելը կնպաստի աշխատաշուկայի պահանջներին համահունչ մասնագետների պատրաստմանը։ Ինչպես նաև չի գնահատվել այդ փոփոխությունների ազդեցությունը կրթական վերջնարդյունքների ձեռք բերման վրա, ուստի հասկանալի չէ, արդյոք դրանք դրական թե բացասական ազդեցություն են ունեցել։ ՄՈՒՀ-ի կողմից քայլեր են ձեռնարկվում ՄԿԾ-ներում բարեփոխումներ իրականացնելու ուղղությամբ։ Այս իմաստով գովելի է «Քույրական գործ» կրթական ծրագրի բենչմարքինգի իրականացումը արտասահմանյան

քոլեջների հետ: Այնուամենայնիվ, արդյունքում ստացված տվյալների հիման վրա չկան կատարված հստակ փոփոխություններ: Թիրախային բենչմարքինգի իրականացումը և դրա արդյունքում բարելավումների կատարումը կնպաստեն ՄԿԾ-ների համադրելությանը և միջազգային ուսանողների ներգրավմանը:

Ինչ վերաբերվում է ընտրված դասավանդման և ուսումնառության մեթոդների արդյունավետությանը, ապա ՄՈՒՀ-ը ձգտում է համապատասխան վերջնարդյունքների ձեռքբերմանը միտված քաղաքականություն վարել, այդ մեթոդների ընտրության հիմքում դնելով ինչպես գիտելիքների, այնպես էլ հմտությունների և կարողությունների ձևավորումը: Այնուամենայնիվ, նշված մոտեցումների լիարժեք իրականացմանը նպաստող մեխանիզմները ամբողջությամբ ներդրված չեն: Մասնավորապես, դասախոսությունների արդիականացումը (թելադրությունից դեպի ինտերակտիվ դասախոսություն), ուսուցման ինտերակտիվ մեթոդների կիրառումը, ինքնուրույն աշխատանքների հանձնարարականները, կարող են նպաստել ուսումնառության վերջնարդյուքների լիարժեք ձևավորմանը: Գործնական պարապմունքների և պրակտիկայի ընթացքում ուսանողների կարգավիճակի փոփոխությունը՝ դիտորդից դեպի լիարժեք կատարող, պրակտիկայի ընթացքում ձեռք բերած հմտությունների և կարողությունների գնահատումը նույնպես կարող են նպաստել ՄՈՒՀ—ի շրջանավարտների մասնագիտական որակի բարձրացմանը:

Փորձագիտական խումբը դրական է համարում ՄՈՒՀ-ում բազմագործոնային գնահատման համակարգի կիրառումը: Ողջունելի է այն փաստը, որ այսպես փորձ է արվում ուսումնառութնայն բոլոր վերջնարդյունքների՝ գիտելիք, կարողություն, հմտություն, գնահատման համար: Այդուհանդերձ, կիրառվող միջանկյալ և եզրափակիչ քննությունների անցկացման եղանակները՝ թեստային կամ հարցատոմսերի միջոցով (բանավոր կամ գրավոր), որոնց բաժին է ընկնում ընդհանուր գնահատականի 80% հնարավորություն չեն տալիս բոլոր վերջնարդյունքների լիարժեք գնահատման համար: Փաստացի, չվաստակելով մնացյալ երկու բաղադրիչները (հաճախումներ և ընդհանուր ակտիվություն, անհատական և ինքնուրույն աշխատանքների կատարողականներ) ուսանողը հնարավորություն ունի դրական միավոր ստանալու: Սա բացասական ազդեցություն կարող է ունենալ ուսանողների գործնական և լաբորատոր աշխատանքներ կատարելու մոտիվացիայի, ուստի և կարողությունների ու հմտությունների ձևավորման վրա: Փաստացի, հստակ առանձնացված չէ, արդյոք հաճախումներ և ընդհանուր ակտիվություն բաղադրիչը ներառում է գործնական աշխատանքի կատարում թե ոչ: Բացի այդ, ինքնուրույն աշխատանքները իրենցից ներկայացնում են միայն ռեֆերատների պատրաստում (երբեմն անցած նյութի շարադրման տեսքով): Եթե նման մոտեցումը արդարացված է ցածր կուրսի ուսանողների համար, քանի որ այս եղանակով իրենք սովորում են գրականությունից օգտվել և տարբեր աղբյուրներից ինֆորմացիա հավաքագրել, ապա ավարտական կուրսի ուսանողների ինքնուրույն աշխատանքներին ներկայացվող պահանջները պետք է ուղղված լինեն՝ վերլուծություններ, համեմատություններ կատարելուն կատարել և տվյալներ հավաքագրելուն: Բոլոր առարկաներից, այդ թվում և մասնագիտական, միայն ռեֆերատների ներկայացումը կարող է խոչընդոտել ուսանողների մոտ մասնագիտական մտածելակերպի զարգացմանը:

Այս առումով գովելի է քոլեջի կողմից ձեռնարկված քայլերը, «Ատամնատեխնիկական գործ» ՄԿԾ-ի ամփոփիչ ատեստավորման մեջ գործնական բաղադրիչի ներմուծման ուղղությամբ: Սակայն մտահոգիչ է, որ նշված փոփոխությունները տեղայնացված են միայն մեկ ՄԿԾ-ի համար: Այս իմաստով բարեփոխումների անհահամաչափ գործածումը կարող է վտանգել մյուս ՄԿԾ-ներում վերջնարդյունքների ապահովումը, հաշվի առնելով աշխատաշուկայի մարտահրավերները և մեծ մրցակցությունը բժշկական կրթության ոլորտում:

ՄՈՒՀ-ը ձգտում է իրականացնել ՄԿԾ-ների բարելավման գործընթաց, ունի այդ նպատակի համար մշակված ընթացակարգեր և որոշ քայլեր է իրականացրել այս ուղղությամբ (ծրագրերի համապատասխանեցում պետական կրթական չափորոշիչներին, դրանց մշտադիտարկում, բենչմարքինգի իրականացում)։ Սակայն բարելավման այս մեխանիզմները արդյունավետ կլինեն այն դեպքում, երբ կնպաստեն խնդիրների և կարիքների վերհամնանը։ Գործատուների ավելի ակտիվ ներգրավումը ՄԿԾ-ի բարեփոխումների գործընթացում կարող է նպաստել ժամանակակից և մասնագիտության արդի պահանջներին համահունչ ծրագրերի ձևավորմանը։

Եզրահանգում: Հաշվի առնելով, որ ՄՈՒՀ-ի ՄԿԾ-ները հիմնականում համահունչ են Որակավորումների ազգային շրջանակին, պետական կրթական չափորոշիչների պահանջներին, նկարագրված են ըստ շնորհվող որակավորման ակնկալվող արդյունքների, ՄՈՒՀ-ը ձգտում է կատարել բենչմարքինգ այլ նմանատիպ արտասահմանյան քոլեջների հետ, բարելավել են գնահատման համակարգը, առկա է դասավանդման ու ուսումնառության մեթոդների ընտրության քաղաքականություն, առակ են ՄԿԾ-ների բարելավման օրինակներ, փորձագիտական խումբը գտնում է, որ «Մեհրաբյանի անվան բժշկական ինստիտուտ» ՍՊԸ բժշկական քոլեջը համապատասխանում է Չափանիշ 3-ի պահանջներին։

Եզրակացություն:

Փորձագիտական խումբը «Մեհրաբյանի անվան բժշկական ինստիտուտ» ՍՊԸ բժշկական քոլեջի ինստիտուցիոնալ կարողությունների համապատասխանությունը ՉԱՓԱՆԻՇ 3-ի պահանջներին գնահատում է **բավարար**։

IV. ՈՒՍԱՆՈՂՆԵՐ

ՉԱՓԱՆԻՇ: ՄՈՒՀ-ն ուսանողներին տրամադրում է համապատասխան աջակցություն՝ կրթական միջավայրի արդյունավետությունն ապահովելու նպատակով:

Փաստեր

Ինքնավերլուծության ուսումնասիրության արդյունքում պարզ դարձավ, որ ՄՈՒՀ-ում իրականացվում են ուսանողների հավաքագրման մի շարք մեխանիզմներ՝ բուկլետների պատրաստում, սոցցանցերում և ԶԼՄ-երում գովազդում, անվճար նախապատրաստական պարապմունքների անցկացում՝ նապապատրաստական բաժնի կողմից: Սակայն, փորձագիտական առցնաց այցից պարզ դարձավ, որ ուսանողները հիմանակնում քոլեջի մասին տեղեկացել են իրենց ծանոթների խորհրդատվությամբ: Առցնաց այցից պարզ դարձավ նաև, որ նախապարտրաստական բաժինը կազմակերպում է հանդիպումներ դպրոցներից աշակերտներին հավաքագրելու և նախապատրաստական բաժին ընդունելու նպատակով: Քոլեջում ուսանողների ընդունելությունն իրականացվում է ըստ ԿԳՄՍ նախարարության կողմից սահմնված կարգրի: Այդուհանդերձ, գնահատված չէ ուսանողների հավաքագրման մեխանիզմների արդյունավետությունը:

Փորձաքննությունից պարզ դարձավ, որ ուսանողների կարիքների վերհանումն իրականացվում է կուրսղեկների ինստիտուտի /ըստ Քոլեջի կուրսղեկների աշխատանքի կազմակերպման կարգի/, ՄՈՒՀ-ում տեղադրված փակ արկղերի, ՈւԽ-ի կողմից կազմակերպվող հանդիպումների, ՈԱ կենտրոնի կողմից իրականացվեղ հարցումների միջոցով՝ ըստ Քլոեջի ուսանողական հարցման կանոնակարգի: Նաև Մանկավարժական խորհրդի նիստերին իրենց մասնակցությունն ունեն ուսանողները: Առցնաց այցից պարզ դարձավ, որ խորհրդի նիստերում ուսանողներն ակտիվ մասնակցություն չունեն: Փորձաքննության ընթացքում պարզ դարձավ նաև, որ ուսանողների մասնակցությամբ կրթական կարիքների կամ դասավանդման մեթոդների, ինչպես նաև կրթական ռեսուրսների համալրման դեպքեր ՄՈՒՀ-ում առկա չեն: Փորձաքննության արդյունքում պարզ դարձավ, որ իրենց մասնակցության ընթացքում ուսանողներն ունեցել են թենիսի սեղանի վերաբերյալ

բարձրաձայնած խնդիր, որը ստացել է իր լուծումը: Փորձագիտական առցնաց այցից պարզ դարձավ, որ ուսանողների կողմից բարձրաձայնվել է նաև ճաշարանի բացակայության խնդիրը, որը վեր է հանվել ՈՒԽ-ի կողմից:

Ըստ ինքնավերլուծության ուսումնասիրության ՄՈՒՀ-ում անցկացվում են քննությունից առաջ խորհրդատվական պարապմունքներ, ռեֆերատի ղեկավարման համար լրացուցիչ պարապմունքներ, ինչպես նաև ոլորտի մասնագետների կողմից սեմինարներ և վարպետաց դասեր: Սակայն փորձագիտական առցնաց այցից պարզ դարձավ,որ լրացուցիչ պարապմունքներն իրականացվում են յուրաքանչյուր մոդուլով նախատեսված քննություններից առաջ,և ոչ ֆորմալ խորհրդատվություններ՝ դասերի ընթացքում: Առցնաց այցից պարզ դարձավ նաև, որ «Բուժական կոսմետոլոգիա» բաժնում, դասախոսի նախաձեռնությամբ, իրականցվում են լրացուցիչ պարապմունքներ՝ լաբորանտի օգնությամբ, ինչի կապակցությամբ առաջարկվում էր նաև լաբորանտներ ունենալ քոլեջում՝ պրակտիկ աշխատանքներն օժանդակելու համար (առարկա՝ «Վիրաբուժություն,վիրաբուժական կոսմետոլոգիայի հիմունքներ»): Այդուհանդերձ նմանատիպ նախաձեռնություններ այլ առարկաներից չնկատվեցին:

Ըստ ինքնավերլուծության քոլեջի ուսանողերն իրենց խնդիրներն ու առաջարկությունները կարող են վարչական կազմին ներկայացնել կուրսղեկների միջոցով, բարձրաձայնել Մանկավարժական խորհրդում, ուսանողական խորհուրդի կազմակերպած նիստերին՝ տարեկան գումարում է առնվազն 2 նիստ: Նաև ՄՈՒՀ-ում գործում է վարչական անձնակազմի կողմից ուսանողներին ընդունելության հստակ ժամանակացույց, սակայն, փորձագիտական առցնաց այցից պարզ դարձավ, որ այդ ժամերից դուրս ևս ուսանողները հնարավորություն ունեն իրենց դիմելու:Փորձաքննությունից պարզ դարձավ նաև, որ ուսանողները հիմնականում դիմում են անմիջապես դեկանին,այդուհանդերձ օրինակներ առկա չեն:

Ըստ ինքնավերլուծության ուսումնասիրության ուսանողներին կարիերայի ուղղորդման աշխատանքներն իրականացվում է Մեհրաբյանի անվան բժշկական ինստիտուտ ՍՊԸ պրակտիկայի կազմակերպման աշխատանքի տեղավորման և արտաքին կապերի միջազգայնացման կենտրոնի կողմից: Փորձագիտական առցնաց այցից պարզ դարձավ, որ ՄՈՒՀ-ն ունի պայմանագրեր աշխատաքի տեղավորման գործակալությունների հետ, որը նպաստում է շրջանավարտների հետագա աշխատանքի ընդունման գործընթացին: Աշխատանքի տեղավորման գործակալությունների հետ համագործակցության արդյունքում ՄՈՒՀ-ի ուսանողները հնարավորություն են ունենում կազմելու ինքնակենսագրականներ: Փորձաքննությունից նաև պարզ դարձավ, որ ՄՈՒՀ-ի կապը շրջանավարտների հետ նոր է ձևավորվում՝ ՄՈՒՀ-ը սկսել է ստեղծել շրջանավարտների բազա: Դեռևս ունեն վաթսուն ուսանողի բազա և յուրաքանչյուր չորրորդին ՄՈՒՀ-ն օգնել է աշխատանքի տեղավորման հարցում՝ հիմնականում դեղատներում: Փորձագիտական առցնաց այցից պարզ դարձավ, որ զբաղվածության և աշխատանքի տեղավորման գործակալությունների հետ կնքված պայմանգրերի հիման վրա քոլեջում սովորող մի քանի ուսանողների տեղավորել են աշխատանքի:

Ըստ ինքավերլուծության ուսումնասիրության մինչ 2010թ. (որպես ինստիտուտ) ուսանողների հետ համատեղ տպագրվել է 4 հոդված, և 2017թ.-ից հետո՝ արդեն որպես քոլեջ, տպագրվել է ուսանողների մասնակցությամբ 3 հոդված (հիմնականում դեղագործություն ՄԿԾ-երի ուսանողների մասնակցությամբ): Այդուհանդեռձ փորձագիտական առցնաց այցից պարզ դարձավ, որ այցին մասնակից ուսանողները հետազոտական գործունեության մեջ ներգրավված չեն. ուսանողները ներկայացնում են ռեֆերատներ, որոնք, սակայն կրում են տեղեկատվական բնույթ և իրենց մեջ չեն ներառում վերլուծություն: Քոլեջն ունի ռեֆերատներ գրելու տեխնիկական պահանջներ, օրինակ՝ նվազագույնը քանի էջից պետք է բաղկացած լինի և

այլն: Առցնաց այցից պարզ դարձավ նաև, որ որոշ դասախոսների կողմից պահանջվում է պարտադիր ձեռագիր ներկայացնել ռեֆերատները: Փորձագիտական վերլուծությունների, ՄԿԾ-ների տարբեր մոդուլների վերլուծությունների արդյուքնում պարզ դարձավ, որ հանձնարարականները հիմնականում չեն նպաստում ուսանողների շրջանում վերլուծական և ստեղծագործական մտքի զարգացմանը:

Ըստ ինքնավերլուծության ուսումնասիրության ՄՈՒՀ-ում ուսանողների իրավունքների պաշտպանության համար պատասխանատու մարմինն ուսանողական խորհուրդն է՝ ՈՒԽ: ԻՆչպես փորձաքննությունից պարզ դարձավ, որ քոլեջում ՈՒԽ-ի պարտադիր անդամ են դառնում ավագները, որոնց ընտրությունը կատարում են դասախոսները: Ուսանողներն իրենց առնչվող հարցերը՝ խնդիրները, բողոքներն ու առաջարկներն ուսանողական խորհրդի միջոցով ներկայացնում են ՄՈՒՀ-ի ղեկավար մարմիններին՝ ուսանողների իրավունքների խախտման պարագայում ուսանողը դիմում է ՈՒԽ-ի նախագահին, որից հետո ուսումնական մասի ուշադրությանն է ներկայացնում առկա խնդիրը և խնդրին լուծում չտրվելու դեպքում հարցը բարձրացնում է տնօրինության առջև, որից հետո հիմնադիրների խորհուրդ: Սակայն, փորձագիտական առցնաց այցից պարզ դարձավ,որ ուսանողները խնդրի դեպքում հիմնականում անմիջապես դիմում են դեկանին: Ըստ ինքնավերլուծության ՈՒԽ-ն ունի կանոնակարգ, ուսանողի ուղեցույց: Ըստ կանոնակարգի՝ ՈՒԽ-ն կազմակերպում է հանդիպումներ և քննարկումներ ուսանողների հետ առնվազն տարին 2 անգամ, սակայն առցնաց այցից պարզ դարձավ, որ ոչ բոլոր ուսանողներն են տեղիակ ՈՒԽ-ից և ուղեցույցի դրույթներից: Առցնաց այցից պարզ դարձավ նաև, որ հանդիպումների արդյունքում ուսանողները վեր են հանել ճաշարանի բացակայության խնդիր և իրենց տրամադրվել է ընդմիջման սենյակ:

Ըստ ինքնավերլուծության ուսումնասիրության ՄՈՒՀ-ում ուսանողներից տեղեկատվություն վեր է հանվում այնպիսի մեխանիզմներով ինչպիսիք են՝ կուրսղեկների տարեկան հաշվետվությունների վերլուծությունը, ուսանողների շրջանում անցկացված հարցումների վերլուծությունը, ՄՈՒՀ-ի կրթական և այլ ծառայություններից բավարարվածության վերաբերյալ շրջանավարտների կարծիքները՝ արտահայտված մանկավարժական խորհրդի նիստերի ժամանակ և շրջանավարտների շրջանում հարցումները: Փորձագիտական առցնաց այցից և ինքնավերլուծության ուսումնասիրությունից պարզ դարձավ, որ ՈԱ բաժնի կողմից իրականացվող հարցումները հիմնկանում վերաբերում են պրոֆեսորադասախոսական կազմի գնահատմանը, ինչպես քոլեջի ռեսուրսներից ուսանողների բավարարվածությանը, որոնք հիմք չեն դարձել փոփոխությունների համար: Ինչպես նաև հարցումներ բուն մոդուլների արդյունավետության և որակի վերաբերյալ քոլեջում չեն իրականացվել: Հարցումները չեն արտացոլում հստակ կարիքի վերհանում:

Դատողություններ: Փորձագիտական խումբը դրական է գնահատում այն, որ ՄՈՒՀ-ն ունի ուսանողների հավաքագրման մի շարք մեխանիզմներ: Այնուամենայնիվ մտահոգիչ է, որ ՄՈՒՀ-ը չի իրականացնում այդ գործունեության վերաբերյալ գնահատումներ, որոնք հնարավորություն կտան ՄՈՒՀ-ին գտնել ամենաարդյունավետ եղանակը և ավելի շատ ուսանող հավաքագրել: Դրական է համարվում նաև այն, որ ՄՈՒՀ-ում գործում են խնդիրների վեր հանման տարբեր մեխանիզմներ, և առկա են ուսանողների կողմից վեր հանված խնդիրներ՝ ՈՒԽ-ի կազմակերպած հանդիպումների և Մանկավարժական խորհրդի նիստերի ժամանակ: Այնուամենայնիվ կրթական կարիքների վերհանման մեխանիզմների կատարելագործումը կնպաստի ուսումանական գործընթացի շարունակական բարելավմանը:

Դրական է այն, որ ՄՈՒՀ-ն իրականացնում է յուրաքանչյուր մոդուլով նախատեսված քննություններից առաջ խորհրդատվություն,ինչպես նաև ոչ ֆորմալ խորհրդատվություններ

դասերի ընթացքում: Նաև դասախոսի նախաձեռնությամբ անցկացվում են վարպետաց դասեր, սակայն մտահոգելիչ է, որ միայն մեկ առարկայի շրջանակներում է այն իրականացվում, վարպետաց դասերը նորարարությունների կիրառման և գործնական դասերի զարգացման հնարավորություն կարող են ստեղծել և նպաստել ուսանողների առաջընթացին:

Փորձագիտական խումբը դրական է համարում այն, որ ՄՈՒՀ-ում առկա են վարչական կազմին դիմելու ժամանակացույց, ինչպես նաև այն որ ուսանողները ցանկացած հարցի դեպքում կարող են դիմել դեկանին: Նման մոտեցումը նպաստում է ուսանողների կողմից բարձրացված հարցերին թիրախային արձագանքելուն:

Դրական է նաև այն, որ ՄՈՒՀ-ն ունի աշխատանքի տեղավորման գործակալությունների հետ պայմանագրեր, որոնք հնարավորություն են տալիս որոշ ուսանողների աշխատանքի ընդունվել՝ հիմնականում դեղատներում: Դրական է համարվում նաև ՄՈՒՀ-ի շրջանավարտների բազայի ստեղծումը, որը հնավարություն կտա ամրապնդել քոլեջ-շրջանավարտ կապը և հետադարձ կապ ստանալ շրջանավարտներից: Կարիերայի կենտրոնի կողմից գործատուների հետ կապի ամրապնդումը կամրապնդի քոլեջ-գործատու կապը և ուսանողների համար կստեղծի աշխատանքի տեղավորման լայն հնարավորություններ:

Փորձագիտական խմբի կողմից մտահոգիչ է հետազոտական աշխատանքներում ուսանողների ներգրավվածության սակավությունը: Առցնաց այցին մասնակից ուսանողները կատարել են աշխատանքներ միայն ռեֆերատների տեսքով, որոնք զուտ տեղեկատվական են, իրենց մեջ չեն ներառում վերլուծություն և հիմանականում չեն նպաստում ուսանողների վերլուծական, քննադատական մտքի ձևավորմանը:

Փորձագիտական խումբը դրական է համարում այն, որ ՈւԽ-ն ունի հստակ կանոնակարգ և ուսանողի ուղեցույց: Դրական է նաև, որ ՈՒԽ-ի կողմից կազմակերպված հանդիպումների ժամանակ առկա են վեր հանված խնդիրներ: Այդուհանդերձ մտահոգիչ է, որ ոչ բոլորն են տեղիակ ՈՒԽ-ից ու ուղեցույցի դրույթներից:

Մտահոգիչ է նաև, որ ՈՒԽ-ի անդամ են դառնում միայն կուրսերի ավագները՝ պարտադիր կերպով, որոնց ընտրում են դասախոսները, այդ կերպ հնարավորություն չի տրվում մյուս ուսանողներին ևս ՈՒԽ-ի անդամ դառնալու:

Փորձագիտական խումբը մտահոգիչ է համարվում այն, որ ՈԱ-ի կողմից անկացված հարցումները չեն արտացոլում հստակ կարիքի վերհանում: Այս ամենի չհստակեցումը թույլ չի տա անհրաժեշտ արդյունք ապահովել և հստակ խնդիրներ վեր հանել:

Եզրահանգում: Հաշվի առնելով, որ ՄՈՒՀ-ում գործում են ուսանողների ընտրության, հավաքագրման, ընդունելության որոշակի մեխանիզմներ, ուսանողների կրթական կարիքների բացահայտման և լուծման համար, առկա է ՄՈՒՀ-ի վարչակազմին դիմելու և աջակցություն ստանալու հնարավորություններ, ՄՈՒՀ-ն ունի ուսանողների իրավունքների պաշտպանության պատասխանատու մարմին և մի շարք այլ մեխանիզմներ (արկղ, կուրսղեկների ինստիտուտ և այլն),փորձագիտական խումբը գտնում է, որ ՄՈՒՀ-ը բավարարում է չափանիշ 4-ի պահանջներին:

Եզրակացություն: Փորձագիտական խումբը «Մեհրաբյանի անվան բժշկական ինստիտուտ» ՍՊԸ բժշկական քոլեջի ինստիտուցիոնալ կարողությունների համապատասխանությունը **ՉԱՓԱՆԻՇ 4**-ի պահանջներին գնահատում է **բավարար**:

V. ՊՐՈՖԵՍՈՐԱԴԱՍԱԽՈՍԱԿԱՆ ԵՎ ՈՒՍՈՒՄՆԱՕԺԱՆԴԱԿ ԿԱԶՄ

ՉԱՓԱՆԻՇ: ՄՈՒՀ-ի առաքելությանը հասնելու և ՄԿԾ-ների նպատակներն իրականացնելու համար հաստատությունն ապահովված է անհրաժեշտ մասնագիտական որակներ ունեցող պրոֆեսորադասախոսական և ուսումնաօժանդակ կազմով:

Փաստեր

«Մեհրաբյանի անվան բժշկական ինստիտուտ» ՍՊԸ բժշկական քոլեջի 2015-20թթ. ռազմավարական ծրագիրը (կետ 4.3) անդրադառնում է մարդկային ռեսուրսների նպատակային կառավարմանը: Այսպես, համակազմի զարգացման, որակյալ պրոֆեսորադասախոսական կազմի ապահովման և նրանց հարմարավետ աշխատանքային միջավայրի ստեղծման նպատակն իրագործելու համար առաջադրված են մի շարք խնդիրներ, որոնց թվում են պրոֆեսորադասախոսական կազմի վերանայման և, անհրաժեշտության դեպքում, համալրման իրականացումը:

Հաշվետու ժամանակահատվածում ՄՈՒՀ-ում մշակվել և հաստատվել են հետևյալ փաստաթղթերը՝ «ՄԲԻ» ՍՊԸ բշժկական քոլեջի դասախոսի ընտրության կանոնակարգ (հաստատված 04.07.2016 թ.); «ՄԲԻ» ՍՊԸ բժշկական քոլեջի դասախոսների մասնագիտական որակների և աշխատանքի գնահատման ընթացակարգ (հաստատված 25.08.2017 թ.);. «ՄԲԻ» ՍՊԸ բշժկական քոլեջի դասախոսի պաշտոնի անձնագիր (հաստատված 02.02.2018 թ.); «ՄԲԻ» ՍՊԸ բշժկական քոլեջի դասախոսի որակական չափանիշների գնահատման տարբերակված համակարգի կանոնակարգ (հաստատված 24.08.2018 թ.); «ՄԲԻ» ՍՊԸ բշժկական քոլեջի հիմնական դասախոսական կազմի կայունությունը և առաջնրթացն ապահովող քաղաքականություն (հաստաված 27.08.2019թ.); «ՄԲԻ» ՍՊԸ բշժկական քոլեջի սկսնակ դասավանդողների մենթորության քաղաքականությունը (հաստատված 22.02.2018 թ.):

ՄՈՒՀ-ում ստեղծվել է նաև «Ռեզերվային դասախոսների շտեմարան»: Այն իրենից ներկայացնում է թեկնածուների ինքնակենսագրականների ժողովածու, դասավորված ըստ ՄԿԾ-ների կամ առարկաների: Այտուհանդերձ, երբ դասախոսական անձնակազմի համալրման անհրաժեշտություն է առաջացել ՄՈՒՀ-ը փաստացի հայտարարություն է տարածել առցանց հարթակներում (ֆեյսբուքյան էջ): Առցնաց այցի ընթացքում պարզվեց, որ քոլեջի անձնակազմը համալրվել է միայն հանրակրթական առարկաներ (անգլերեն և մաթեմատիկա) դասավանդող երկու նոր մասնագետներով, որոնք արձագանքել էին ՄՈՒՀ-ի ֆեյսբուքյան էջի հայտարարությանը: Թեկնածուների ընտրությունը կատարել է քոլեջի տնօրենը, այնուհետև թեկնածուները ներկայացվել են ցիկլային հանձնաժողովին: Չնայած, համաձայն քոլեջի դասախոսի ընտրության կանոնակարգի, նոր դասախոսների ընտրությունը իրականացվում է ցիկլային հանձնաժողովը, շտեմարանից ընտրված թեկնածուների շրջանակից, քվեարկության արդյունքում, ձայների պարզ մեծամասնությամբ, իսկ թեկնածությունը վերջնական հաստատվում է տնօրենի կողմից: Դասախոսների ընտրության չափանիշները մանրամասն նկարագրված են համապատասխան կանոնակարգերում («ՄԲԻ» ՍՊԸ բշժկական քոլեջի դասախոսի ընտրության կանոնակարգ, «ՄԲԻ» ՍՊԸ բշժկական քոլեջի դասախոսի պաշտոնի անձնագիր), ըստ ներկայացված տվյալների ՄՈՒՀ-ը ընտրության ժամանակ առաջնորդվում է այդ պահանջներով: Դրանցից են օտար լեզուների իմացություն, համակարգչային հմտությունների տիրապետում, երիտասարդ տարիք, աշխատնքային փորձառությունը՝ առնվազն մեկ տարվա հիմնական կամ պայմանական մասնագիտական:

Առցնաց այցի ընթացքում պարզվել է նաև, որ ՄՈՒՀ-ը ունի դասախոսական անձնակազմի համալրման խնդիր: Այսպես, Բուժական կոսմետոլոգիա ՄԿԾ-ի մասնագիտական մոդուլների համար չի գտնվել համապատասխան մասնագետ (չի եղել որևէ թեկնածու), ինչի հետևանքով կրթական ծրագրում կատարվել են հարկադրված փոփոխություններ:

ՄՈՒՀ-ի կողմից մշակված դասախոսի պաշտոնի անձնագիրը ներկայացված է ընդհանուր: Պահանջվող մուտքային տվյալներն են – կրթությունը՝ միջին մասնագիտական կամ բարձրագույն, աշխատանքային փորձառությունը՝ առնվազն մեկ տարվա հիմնական կամ պայմանական մասնագիտական: Այդուհանդերձ, ներկայացված չէ տարբեր ՄԿԾ-ների մասնագիտական մոդուլների դասավանդման համար պահանջվող բազային կրթությունը (միայն հղում է տրված պետական կրթական չափորոշիչի պահանջներին): Ներկայացված տվյալների վերլուծությունը վկայում է առ այն, որ դասախոսներից շատերը դասավանդում են 3-6 (երբեմն նույնիսկ 8) մասնագիտական առարկաներ/մոդուլներ: Որոշ դեպքերում դասախոսները առարկաներ են դասվանդում (այդ թվում մասնագիտական) տարբեր ՄԿԾ-ներում: Ներկայացված փաստաթղթերի վերլուծության արդյունքում պարզ դարձավ նաև, որ երբեմն կա անհամապատասխանություն մասնագիտական առարկա դասավանդողի բազային կրթության և մոդուլի բովանդակության միջև: Օրինակ՝ Դեղագործություն ՄԿԾ-ի «Դեղատնային գործունեություն և էկոնոմիկա» դասավանդող մասնագետը բազային կրթությամբ բժիշկ է՝ մանկաբույժ, և ոչ դեղագործ կամ դեղագետ (կամ տնտեսագետ):

Առցնաց այցելության ընթացքում պարզվեց, որ երբեմն դասախոսների ժամային ծանրաբեռնվածությունը հարմար բաշխելու համար, անհրաժեշտություն է առաջանում ՄԿԾ-ներում կատարել որոշակի փոփոխություններ (առարկաների տեղափոխություն տարբեր կիսամյակներ): Արդյունքում պրե-ռեկվիզիտ (մուտքային պահանջ հաղիսացող) մոդուլը (ըստ պետական կրթական չափորոշչի) չավարտած ուսանողները անցնում են մասնագիտական առարկա:

ՄՈՒՀ-ի դասախոսների մասնագիտական որակների և աշխատանքի գնահատման ընթացակարգի համաձայն, նախատեսվում է իրականացնել տեղեկատվության հավաքագրում, գնահատում և վերլուծություն, ինչպես նաև դասավանդման որակի գնահատում: Միջոցառումների թվում են պարբերաբար կատարվող դասալսումները և հարցումները: Այս նպատակով ՄՈՒՀ-ի ՈԱԿ-ի կողմից մշակվել են տարբեր ձևաթերթեր՝

1. Պրոֆեսորադասախոսական կազմի որակի գնահատման ցուցանիշներ (պետք է լրացվի յուրաքանչյուր դասախոսի կողմից, որի հիման վրա իրականացվում է գործունեության գնահատում և տարբերակված համակարգի կիրառում),

2. Ուսանողների կողմից լրացվող դասախոսների որակական չափանիշների գնահատման հարցաթերթ (հարցաթերթիկ ուսանողների համար),

3. Դասախոսի և դասընթացի գնահատման թերթիկ (հարցաթերթիկ ուսանողների համար),

4. Ուսանողների կողմից լրացվող կրթական գործընթացի գնահատման հարցաթերթ (հարցաթերթիկ ուսանողների համար),

5. Դասավանդման մշտադիտարկման և գնահատման ձևաթերթ (հատուկ թերթիկ, որը լրացվում է դասալսումից հետո):

Համաձայն ինքնավերլուծությանը կից ներկայացված փաստաթղթերի (ՈԱԿ –ի հաշվետվություն) ուսանողների շրջանում իրականացվել են հարցումներ 2018 թ. նոյեմբեր ամսին 2,3,4, հարցաթերթիկների միջոցով: Հարցերի բովանդակությունը ավելի շատ շոշափում է դասախոսների մանկավարժական հմտությունները և անձնական որակները: Մասնագիտական տեսանկյունից դասախոսին կամ դասընթացը բնութագրող հարցադրումներ գրեթե չկան:

1-ին և 5-րդ ձևաթերթերի կիրառման հստակ հիմքեր չեն արձանագրվել: Այդուհանդեձ ՄՈՒՀ-ում իրականացվում են պարբերական դասալսումներ դասախոսների, տնօրինության և

ՈԱԿ մասնագետների կողմից: Այդ մասին տեղեկությունները հաստավեցին նաև առցնաց այցի ընթացքում: Դասալսման արձանագրությունների ուսումնասիրությունը ցույց տվեց, որ վերջիններիս արդյունքում չի դուրսբերվել որևէ խնդիր, դրանց հիման վրա իրականացված փոփոխությունների օրինակներ նույնպես չկան (օրինակ դասավանդման մեթոդի փոփոխություն):

ՄՈՒՀ-ում մշակվել է դասախոսի որակական չափանիշների գնահատման տարբերակված համակարգ, համաձայն որի առանձնացվել են I, II, III կարգերը (վարձատրության տարբերությունը յուրաքանչյուր կարգի համար կազմում է 2000 ՀՀ դրամ): Ըստ կանոնակարգի, դասախոսները կարգը պահպանելու համար յուրաքանչյուր ուսումնական տարվա ավարտին պետք է ներկայացնեն որոշակի կատարած աշխատանք (գիտական հոդված, ուսումնական ձեռնարկ, ռեֆերատի ղեկավարում): Ինչպես պարզ դարձավ փաստաթղթերի ուսումնասիրությունից և առցնաց այցից, տարբերակված համակարգը ՄՈՒՀ-ում ներդրման փուլում է:

Չնայած կարիքների բացահայտման ուղղությամբ իրականացված տարբեր միջոցառումների՝ դասալսումների և հարցումների, այդուհանդերձ դրանցից դուրս բերված խոշոր խնդիրներ կամ կարիքներ չեն հայտնաբերվել:

Ըստ հաստատության ինքնավերլուծության և փորձագիտական առցնաց այցի, ՄՈՒՀ-ում կարիքների բացահայտման առավել գործուն մեխանիզմ են հանդիսանում գործընկերային զրույցները (ինչպես դասախոսների, այնպես էլ ուսանողների շրջանում), որոնց միջոցով հնարավոր է եղել բացահայտել հետևյալ խնդիրները՝ դասախոսների օտար լեզուների (անգլերենի) իմացության և համակարգչային ծրագրերին տիրապետելու կարողության պակաս: Արդյունքում, ՄՈՒՀ-ում 2019 թ. սեպտեմբեր-նոյեմբեր ամիսներին կազմակերպվել են 3 ամիս տևողությամբ (շաբաթական 1 օր, 1 ժամ) օտար լեզվի և համակարգչային օպերատորական գործի վերապատրաստման դասընթացներ: Ինչպես պարզվեց առցնաց այցելության ընթացքում, նշված դաընթացներին մասնակցել են քիչ թվով դասախոսներ՝ 3-ից 4 հոգի, քանի որ մասնակցությունը կամավոր էր: Դասընթացների արդյունավետության գնահատում չի իրականացվել:

Փորձաքննության ընթացքում պարզ դարձավ, որ հաստատությունը նախատեսել էր 2018-19 ուս.տարվա ընթացքում դասավանդողների կատարելագործման միջոցառումների իրականացում ըստ ներկայացված պլանի՝ մեթոդական, մասնագիտական, և բարեփոխումների ուղղվածության: Միջոցառումների ցանկում ընդգրկված էին՝ սկսնակ դասավանդողների հետ ուսումնամեթոդական աշխատանքների իրականացում, ճանաչողական այցեր յուրաքանչյուր մասնագիտությանն առնչվող լավագույն կազմակերպություններ, վերապատրաստումներ ՄՈՒՀ-ի շրջանակներում, վարպետաց դասերի կազմակերպում, օտար լեզվի, համակարգչային դասընթացներ և այլն: Վերոհիշյալ միջոցառումների (բացառությամբ օտար լեզվի և համակարգչային հմտություններին դասընթացների) իրականացումը փաստող հիմքեր չեն հայտնաբերվել:

ՄՈՒՀ-ն ունի «Հիմնական դասախոսական կազմի կայունությունը և առաջընթացն ապահովող քաղաքականություն» (հաստաված 27.08.2019 թ.), որում մասնավորապես ներկայացված են երիտասարդ մասնագետների ընդունումը և ներգարվումը ՄՈՒՀ-ի գիտակրթական գործընթացներում, աշխատակազմի զարգացման հնարավորության և կայունության ապահովումը, դասախոսական կազմի մասնագիտական առաջընթացի ապահովումը:

ՄՈՒՀ-ի ՊԴ կազմը ներակայացված է 26 դասախոսով (9 համատեղությամբ աշխատող, դրանք ոլորտի մասնագետներ են, օրինակ՝ բժիշկներ, ստոմատոլոգներ, կոսմետոլոգներ), նրանց միջին աշխատանքային ստաժը՝ 39,2 տարի (ըստ ներկայացված տվյալների): Ինքնավերլուծությունում, որպես թույլ կողմ նշվում է ՄՈՒՀ-ի դասախոսական անձնակազմի երիտասարդացման դանդաղ տեմպերը, առցնաց այցի ընթացքում նույնպես հաստատվեց, որ պրոֆեսորադասախոսական անձնակազմի շոշափելի երիտասարդացում առայժմ չկա: Բացի դրանից մասնագիտական մոդուլներ դասավանդող դասախոսների զգալի մասը չունի փոխարինող: Նրանց կարճաժամկետ բացակայության հարցը լուծվում է դասացուցակի մեխանիկական վերադասավորման միջոցով (պարզվել է առցնաց այցի ընթացքում):

Առցնաց այցելության ընթացքում պարզվեց, որ դասախոսական անձնակազմի մասնագիտական կատարելագործումը իրականացվում է աշխատակիցների սեփական նախաձեռնությամբ, հիմնականում դա բնորոշ է այն մասնագետներին, որոնք բացի դասավանդման գործընթացից, զվբաղվում են նաև պրակտիկ գործունեությամբ (բժիշկներ, կոսմետոլոգներ, ատամնաբույժներ): Այսպես, որոշ դասախոսներ մասնակցում են տարբեր մասնագիտական միջոցառումների՝ սեմինարներ, վերապատրաստումներ: Այնուամենայնիվ, ՄՈՒՀ-ի կողմից նման միջոցառումների նախաձեռնում, կազմակերպում, կամ դրանց մասնակցության խրախուսում կամ պարտադրում իրականացնելու հիմքեր չեն հայտնաբերվել:

Ըստ «ՄԲԻ» ՍՊԸ բշժկական քոլեջի դասախոսի պաշտոնի անձնագրի, բացի մասնագիտական գիտելիքներից դասխոսից պահանջվում է, օտար լեզուների իմացություն և համակարգչային հմտությունների տիրապետման պատշաճ մակարդակ: Համաձայն նշված փաստաթղի, բացի մանկավարժական գործունեությունից դասախոսը պետք է իրականացնի այլ գործառութներ՝ առարկաների մոդուլների, պլանների կազմում (պետական կրթական չափորոշիչներին համապատասխան), հաշվետվողականության իրականացում, կամ այլ գործառություներ: Բացի այդ դասախոսը պետք է ապահովի իր մասնագիտական գործնեության պատշաճ մակարդակը, համագործակցի գործընկերների հետ՝ փորձի փոխանակման և մասնագիտական գործունեության արդյունավետության բարձրացման նպատակով, հետևողականորեն կատարելագործի իր առարկայական և մասնագիտկան գիտելիքներն ու հմտությունները, իրականացնի ստեղծագործական և հետազոտական աշխատանք: Սակայն, առցնաց այցից պարզ դարձավ, որ այս միջոցառումների զգալի մասը իրականացվում է բացառապես դասախոսի սեփական նախաձեռնությամբ և հետևողական չի վերահսկվում, պլանավորվում և իրականացվում ՄՈՒՀ-ի կողմից: Այս իմաստով, դասախոսի որակական չափանիշների գնահատման տարբերակված համակարգի ներդրումն է ՄՈՒՀ-ի կողմից դիտարկվում որպես մասնագիտական առաջընթացը խրախուսող գործիք, որը դեռևս ներդրման փուլում է:

Ինքնավերլուծությանը կից ներկայացված քոլեջի ուսումնաօժանդակ անձնակազմի նկարագիրը և գործառույթները ներկայացնող փաստաթղթում նկարագրված են միայն գրադարանի գործունեությունը համակարգողի, գլխավոր հաշվապահի և հավաքարարի հաստիքները, ըստ որի, կարելի է եզրակացնել, որ ՄՈՒՀ-ը չի նախատեսում այլ ուսումնաօժանդակ անձնակազմի ներգրավվում: Փաստացի, բացի դասախոսներից ՄՈՒՀ-ը չունի դասավանդման պրոցեսում ներգրավված այլ աշխատակիցներ, օրինակ՝ գործնական, լաբորատոր պարապմունքների համար նախատեսված լաբորանտներ կամ այլ օժանդակ անձնակազմ: Ինչպես պարզվեց առցնաց այցի ընթացքում, նշված գործառույթները ամբողջությամբ իրականացվում են մոդուլը դասավանդող դասախոսի կողմից: Առցնաց այցի ընթացքում պարզ դարձավ, որ ելնելով ՄԿԾ-ներում գործնական և լաբորատոր պարապմունքների առկայությունից, զգացվում է նման մասնագետներով անձնակազմի համալրման անհրաժեշտություն:

ՄՈՒՀ-ի կազմակերպչական կառուցվածքի վերլուծության արդյունքում պարզ դարձավ, որ ուսումնական հաստատությունը չունի առանձին վարչական անձնակազմ, բոլոր պարտականությունները նույնպես կատարում են պրոֆեսորադասախոսական անձնակազմի անդամները:

Դատողություններ: Այսպիսով, հավաքագրված տվյալների վերլուծության արդյունքում փորձագիտական խումբը դրական է գնահատում այն, որ ՄՈՒՀ-ի պրոֆեսորակդասախոսական անձնակազմը համալրված է երկար տարիների մանկավարժական ստաժ ունեցող փորձառու մասնագետներով: Դրական է համարվում նաև, որ դասախոսների մեծ մասը հանդիսանում են հիմնական աշխատողներ: Այնուամենայնիվ, լուրջ մտահոգություն է առաջացնում անձնակազմի սակավաթիվ լինելը, մեկ մասնագետի կողմից բազմաթիվ մոդուլներ դասավանդելու փաստը, երիտասարդ կադրերի պակասը, երբեմն անհրաժեշտ որակավորում ունեցող մասնագետ գտնելու խնդիրը, քանի որ այս ամենը լուրջ վտանգ է ներկայացնում ուսումնական գործընթացի արդյունավետության համար և մեծ ռիսկեր է պարունակում կայունության տեսակետից: Այսպես օրինակ՝ նույնիսկ մեկ դասախոսի երկարատև բացակայությունը (տարբեր պատճառներով) կարող է խափանել ՄԿԾ-ի զգալի հատվածի իրականացումը (փոխարինող մասնագետ չլինելու պատճառով): Խնդրահարույց է նաև, անհրաժեշտության դեպքում նոր, որակյալ կադրերի (այդ թվում օտար լեզուներով դասավանդող) ուսումնական պրոցեսում արագ ներգրավվելու հնարարավորությունը, ինչը կարող է խոչընդոտել ՄՈՒՀ-ի ռազմավարական նպատակների իրականացմանը: Չնայած դասախոսական անձնակազմի համալրման ուղղությամբ վարվող քաղաքականության, մշակված ընթացակարգերի և կանոնակարգերի առկայության, ՄՈՒՀ-ում դեռևս լիարժեք չեն գործում այն մեխանիզմները, որոնք հնարավորություն կտան անհրաժեշտության դեպքում սեղմ ժամկետներում համալրել անձնակազմը անհրաժեշտ մասնագետներով: Բացի այդ, դասախոսական անձնակազմի սակավությամբ պայմանավորված ՄԿԾ-ներում իրականացվող հարկադրված փոփոխությունները նույնպես կարող են բացասական ազդեցություն ունենալ ուսանողների կրթական վերջնարդյունքների ձեռքբերման վրա:

Փորձագիտական խումբը բացասական է համարում նաև պրոֆեսորադասախոսական անձնակազմի զգալի մասի ծանրաբեռնվածության խնդիրը: Մի կողմից վարչական պարտականությունների կատարումը կարելի է դիտարկել որպես կարիերայի առաջնընթացին նպաստող գործիք, սակայն մյուս կողմից բազմաթիվ պարտականությունների կատարումը կարող է վտանգել բոլոր այդ գործառույթների լիարժեք իրականացումը: Բացի այդ, դա կարող է վտանգել դասախոսի մասնագիտական և հետազոտական առաջընթացը, քանի որ մեծ ծանրաբեռնվածության պայմաններում առաջանում է ժամանակի խնդիր: Սա բարենպաստ պայման չի ստեղծում դասախոսական անձնակազմի երիտասարդացման քաղաքականության իրագործման համար:

Չնայած, որ քոլեջում ուսանողների և դասախոսների շրջանում պարբերական հարցումներ և դասալսումներ են կազմակերպվում, այնուամենայնիվ, մտահոգիչ է, որ դրանց իրականացման արդյունքում չի բացահայտվել որևէ լուրջ խնդիր կամ վերհանվել դասախոսական անձնակազմի կարիք: Սա վկայում է այն մասին, որ կա նշված միջոցառումների արդյունավետության բարձրացման խնդիր:

Փորձագիտական խմբի կարծիքով, դասախոսական անձնակազմի կայունության ու որակի ապահովմանն ուղղված ՄՈՒՀ-ի որդեգրած քաղաքականությունը լիարժեք չի ծառայում իր նպատակին: Չնայած քոլեջում կան մշակված ընթացակարգեր, այնուամենայնիվ արձակագրված փաստերը վկայում են վերջիններիս ներդրման և կիրառման խնդիրների մասին: ՄՈՒՀ-ը պարբերաբար չի իրականացնում իր դասախոսական անձնակազմի մանկավարժական և մասնագիտական վերապատարաստումներ և հետևողական չի

վերահսկում այդ գործընթացները: Վերոհիշյալ հանգամանքը կարող է բացասական ազդեցություն ունենալ ռազմավարական նպատակ հանդիսացող ուսանողակենտրոն ուսուցման արդյունավետ ներդրման համար, քանի որ վերջինս ենթադրում է ուսումնառության և դրանց վերջնարդյունքների գնահատման նոր, ժամանակակից մեթոդների ներդնում և կիրառում:

Ուսումնաօժանդակ և վարչական անձնակազմի փաստացի բացակայությունը, վտանգում է ՄՈՒՀ-ում մարդկանային ռեսուրսների արդյունավետ կառավարումը, ինչպես նաև խոչընդոտում է ՊԴ կազմի առաջընթացը:

Եզրահանգում: Հաշվի առնելով, որ ՄՈՒՀ-ում առկա է դասախոսական անձնակազմի երիտասարդացման, նոր կադրերով համալրման, դասախոսների փոխարինելիության խնդիրներ, քոլեջում ուսումնաօժանդակ անձնակազմի գրեթե բոլոր պարտականությունները իրականացնում են դասախոսները, բացի այդ մեծ մասը դասավանդում են 3-ից 6 առարկա (և ավելին) և կատարում են նաև վարչական անձնակազմի պարտականություններ, ՄՈՒՀ-ում գործնականում չեն իրականացվում մանկավարժական վերապատրաստումներ, իսկ մասնագիտական վերապատրաստումները իրականացվում են բացառապես դասախոսների սեփական նախաձեռնությամբ, քոլեջում պարբերաբար իրականացվող դասախոսական անձնակազմի գնահատման միջոցառումները՝ հարցումներ, դասալսումները գործնականում չեն նպաստում կարիքների և խնդիրների վերհանմանը, փորձագիտական խումբը գտնում է, որ «Մեհրաբյանի անվան բժշկական ինստիտուտ» ՍՊԸ բժշկական քոլեջը չի համապատասխանում չափանիշ 5-ի պահանջներին:

Եզրակացություն: Փորձագիտական խումբը «Մեհրաբյանի անվան բժշկական ինստիտուտ» ՍՊԸ բժշկական քոլեջի ինստիտուցիոնալ կարողությունների համապատասխանությունը ՉԱՓԱՆԻՇ 5-ի պահանջներին գնահատում է **անբավարար**:

VI. ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԶԱՐԳԱՑՈՒՄ

ՉԱՓԱՆԻՇ: ՄՈՒՀ-ն ապահովում է հետազոտական գործունեության իրականացումը և կապն ուսումնառության հետ:

Փաստեր

Քոլեջի 2015-2020թթ. ռազմավարական ծրագրի նպատակներից, ինչպես նաև քոլեջի առաջնահերթություններից մեկը հետազոտությունն ու զարգացումն է: Քոլեջը իր ՌԾ-ով ձգտում է ամրապնդել գիտության և կրթության կապը, միջազգայնացնել գիտական գործունեությունը: Մասնավորապես, քոլեջի ՌԾ նպատակներից են. Խթանել ուսանողների մոտ ինքնուրույն գիտահետազոտական գործունեությունը, ձևավորել ընդհանուր և մասնագիտական հմտություններ՝ գիտահետազոտական գործունեության շնորհիվ, բարձրացնել հանրապետական և միջազգային հետազոտական ծրագրերում դասախոսական կազմի ներգրավվածության մակարդակը, Հետազոտական ոլորտում միջազգային գործընկերների հայտնաբերում: Փորձաքննության ընթացքում սակայն պարզ դարձավ, որ փաստացի հաշվետու ժամաանակահատվածում քոլեջի կողմից հստակ քայլեր չեն իրականացվել ուսանողների շրջանում ինքնուրույն գիտահետազոտական գործունեությունը խրախուսող, ինչպես նաև ուսանողների շրջանում առկա չեն գիտահետազոտական գործունեության իրականացումը հավաստող հիմքեր: Ըստ քլոեջի 2015-2020թթ-ի ՌԾ կատարողականի վերջին հինգ տարիների ընթացքում քոլեջում դավանդող դասախոսների կողմից ավելի քան 69 գիտական աշխատանքներ են տպագրվել /Այդ թվում 22 ուսումնական և ուսումնամեթոդական ձեռնարկ/: Այնուամենայնիվ, ձեռնարկների մեծ մասը /ըստ ներկայացված տվյալների/ տպագրվել են 2008-2012 թթ-ի ընթացքում /այս ժամանակահատվածում հաստատությունն իրականացնում էր բարձրագույն կրթություն/[3]:

[3] Տեքստը վերաշարադրվել է հաստատության դիտողությունների և առաջարկությունների

Այդուհանդերձ հստակ չէ, թե քոլեջն ինչպես է նպաստել հետազոտությունների իրականացմանը: Փորձագիտական առցնաց այցից պարզ դարձավ նաև, որ այս աշխատանքների արդյունքների ներդրումը քոլեջի կրթական գործընթացում փաստացի առկա չէ:

Քոլեջի հետազոտական աշխատանքների վերաբերյալ գիտական խորհրդի 03.03.2015թ. №13 արձանագրությունում որոշում է ընդունվել ապահովելու անձնակազմիմասնակցությունը տարբեր հայտային ծրագրերին և հետազոտական աշխատանքներում ընդգրկելու ինչպես դասախոսական կազմին, այնպես էլ ակտիվ ուսանողներին:

Գիտահետազոտական աշխատանքների արդյունքները մասնագիտական լայն հասարակությանն են ներկայացվում ՄՈՒՀ-ի կողմից հրատարակվող միջազգային առողջապահական տեղեկագրի, առանձին գիտական հոդվածների, գրքերի ու տեղեկատվության տարածման այլ միջոցներով: Այդ իսկ նպատակով, ինչպես նաև գիտության և կրթության կապն ամրապնդելու համար, համաձայն Ռազմավարական ծրագրի § 4.7-ի նպատակ 4.7.1-ի թիվ 2 խնդրի իրականացման քայլերի, ՄՈՒՀ-ի մանկավարժական խորհրդի 02.07.2018թ. 2/18 նիստի 2-րդ որոշման, նախատեսվել է 2010 թվականից դադարեցված ՄՈՒՀ-ի միջազգային տեղեկագրի հրատարակումը վերսկսել է 2018 թվականից: Քոլեջի որոշ դասախոսների հրապարակումներ առկա են տեղեկագրում:

Առցնաց այցից պարզ դարձավ, որ քոլեջում հետազոտական բնույթի աշխատանքներ են /հոդվածի կամ ձեռնարկի հեղինակ կամ համահեղինակ/ կատարում քոլեջի 10 դասախոս /դասախոսական անձնակազմի 26 ներկայացուցչներից/ որոնք և հանդիսանում են ոլոտրում առաջատարներ: Քոլեջի դասախոսական կազմի զգալի մասը՝ շուրջ 62%-ը, նմանատիպ հետազոտական բնույթի գործունեություն չի իրականացնում: Այս փաստի մասին են վկայում դասախոսների ամենամյա գնահատման թերթիկներում ներառված տեղեկատվությունը. մեծ մասի մոտ բացակայում են նշումներ կատարած գիտահետազոտական աշխատանքի կամ որևէ ուսանողի հետ ռեֆերատի, հոդվածի կազմման կամ տպագրության վերաբերյալ: Բացի դրանից, ՄՈՒՀ-ում ռեֆերատների կատարման՝ որպես ուսանողների հետազոտական աշխատանքների, հստակ սահմանված պահանջներ առկա չեն: Ավելին որոշ մոդուլներում ռեֆերատների հաստատված ցանկեր առկա չեն[4]:

Փորձաքննության ընթացքում պարզ դարձավ, որ հաստատված հետազոտությունների ուղղությունները /օրինակ՝ Առաջին օգնություն, Շրջական միջավայրի պահպանումն աղտոտումից, Կենցաղային թափոնների վերմշակումը՝ ՀՀ նորարարական տեխնոլոգիաների կիրառմամբ, Մարդուփ առողջ ապրելակերպ/ համահունչ չեն քոլեջում իրականացվող ՄԿԾ-ներին՝ չեն ընդգրկում առկա բոլոր մասնագիտական ուղղությունները /օրինակ՝ բուժական կոսմետոլոգիան, ատամնատեղխնիկական գործը/ : Նույնը պետք է նշել նաև քոլեջի անձնակազմի կողմից փաստացի իրականացվող գիտական հետազոտությունների վերաբերյալ[5]:

ՄՈՒՀ-ի յուրաքանչյուր դասախոս ուսումնական տարվա սկզբում կազմում և ուսումնական մասի հաստատմանն է ներկայացնում տվյալ դասընթացի վերաբերյալ օրացուցային թեմատիկ պլան, որտեղ ներկայացնում է ուսանողների ինքնուրույն աշխատանքների համար նախատեսված թեմաների անվանումները և ժամաքանակը: Փորձագիտական առցնաց այցից

քննարկման արդյունքնում:

[4] Տեքստը վերաշարադրվել է հաստատության դիտողությունների և առաջարկությունների քննարկման արդյունքնում:

[5] Տեքստը վերաշարադրվել է հաստատության դիտողությունների և առաջարկությունների քննարկման արդյունքնում:

պարզ դարձավ, որ ուսանողների մոտ հետազոտական հմտությունների ձևավորման նպատակով ներդրվել են ինքնուրույն աշխատանքները /ռեֆերատները/: Այդուհանդերձ, վերջիններիս թեմաները չեն բխում մասնագիտական հանձնաժողովների տարեկան կամ միջնաժամկետ հետազոտական պլանավորումից կամ գործատուների պահանջից: Դրանք հիմանականում ներկայացվում են դասախոսի կողմից ընտրված թեմաների շուրջ: Ուսանողները ռեֆերատներ կարող են ներկայացնել նաև իրենց նախընտրած թեմաներով: Ռեֆերատների համար առանձնացված չեն բովանդակային պահանջներ: Փորձագիտական առցնաց այցից պարզ դարձավ, որ հաճախ թեմաները կարող են կրկնել նույն առարկայի շրջանակներում ուսումնասիրած դասերը: Քոլեջում առկա չեն դեպքեր, երբ ուսնաողների ռեֆերատների թեմաները ներկայացնեն տվյալ ոլորտի գործատունեի պատվերը /առաջարկը/:

Փորձագիտական առցնաց այցից պարզ դարձավ, որ քոլեջում առկա չեն դասախոսական կազմի կողմից իրականացված հետազոտություններ և հիմքեր, որ այդ հետազոտությունները ներդրվել են և դասավանդվում են մոդուլներում:Քոլեջում առկա չեն նաև դասախոսների շրջանում այլ նմանատիպ հաստատությունների իրականացրած դասավանդման առաջատար փորձի ուսումնասիրություններ և դասավանդման որակը բարելավելու նպատակաով՝ դրանց արդյունքների ներդրման օրինակներ:

ՄՈՒՀ-ն ապահովում է հիմնականում Դեղագործություն և մասամբ նաև Ատամնատեխնիկական գործ մասնագիտության ուսանողների և դասախոսական կազմի հնարավոր մասնակցությունը հետազոտական գործընթացներում:

Ըստ քոլեջի ՌԾ կատարողականի յուրաքանչյուր տարի քոլեջը ավելացրել է հետազոտական աշխատանքներում յոթ ուսանողների ներգրավվածությունը: Սակայն, փորձագիտական առցնաց այցից պարզ դարձավ, որ ուսանողները ներգրավված չեն հետազոտական աշխատանքներում: 2018թ.-ից հրապարակվել է քոլեջի առողջապահական տեղեկագիրը, որում զետեղվել են միջազգային գործընկերների և սեփական գիտահետազոտական աշխատանքները: Հրատարակված հոդվածները հիմնականում գիտական ոլորտի հետազոտություններ են, և քոլեջի ուսումնական գործընթացում ներդրված չեն:

Հետազոտական գործունեության միջազգայնացման գործընթացում բացակայում են միջազգային գործընկերների հետ համատեղ գիտական կամ հետազոտական թեմաների իրականացման ծրագրեր և քաղաքականություն:

Փորձագիտական առցնաց այցից պարզ դարձավ, որ քոլեջն ունի գիտական հետազոտությունների և ուսումնական գործընթացի փոխկապակցման ծրագիր: Ըստ ծրագրի 2020-2021 ուս.տարում յուրաքանչյուր ուսանող պետք է ունենա իր ընտրած գիտական հետազոտությունը՝ զեկուցման կամ ավարտուն ռեֆերատի տեսքով: Ինչպես նաև մինչև շրջանավարտ դառնալը ուսանողը պետք է լինի մեկ հրատարակված գիտական հոդվածի հեղինակ կամ համահեղինակ:

Պետք է նշել, այդուհանդերձ, որ փորձագիտական առցնաց այցի ընթցքում պարզ դարձավ, որ ներկայացված ծրագրի իրականացման համար դեռևս մշակված չէ իրականացման գործողությունների ծրագիր: Փորձագիտական խմբի առցնաց այցի ընթացքում պարզ դարձավ, որ ուսանողները յուրաքանչյուր մոդուլից ներկայացվող ռեֆերատներն ունեն տեղեկատվական բնույթ: Փորձաքննության ժամանակ պարզ դարձավ նաև, որ ռեֆերատներում առկա չէ և ուսանողներին չի ներկայացվում վերլուծական բաղադրիչի պահանջ: Առցնաց այցի ընթացքում պարզ դարձավ նաև, որ տարբեր մոդուլներումռեֆերատները կարող են կրկնել նաև մոդուլով նախատեսված դասերի թեմաները:

Պետք է փաստել, սակայն, որ վերլուծական աշխատանքների օրինակներ են առկա Դեղագործություն մասնագիտության ուսանողների կողմից: Ըստ ԻՎ տվյալների. համաձայն ՀՀ ԳԱԱ Օրգանական և դեղագործական քիմիայի գիտատեխնոլոգիական կենտրոնի և ՄՈՒՀ-ի միջև կնքված պայմանագրի (Հավելված 32), քոլեջի ուսանողներն իրենց լաբորատոր և գործնական պարապմունքներն անց են կացնում կենտրոնի ընդհանուր և անօրգանական

քիմիայի, օրգանական քիմիայի, անալիտիկ քիմիայի, ֆիզկոլոիդ քիմիայի, դեղագործական քիմիայի լաբորատորիաներում, որտեղ տեսական և գործնական գիտելիքների ամրապնդման հետ միասին դասախոսների գիտական կոչում ունեցող կազմի հետ մասնակցում են նաև որոշ գիտական փորձերի:

Դատողություններ: Փորձագիտական խումբը դրական է համարում, որ քոլեջը ջանքեր է գործադրում բարելավելու քոլեջի հետազոտական գործունությունը մշակելով մի շարք փաստթղթային հենք և կարևորում է հետազոտության զարգացումը որպես նպատակ սահմանելով իր ՌԾ-ում: Այնուամենայնիվ, հետազոտական գործունեության զարգացման համար անհրաժեշտ պլանների բացակայությունը կվտանգի ՌԾ-ով սահմանված նպատակների իրականացումը: Հետազոտական ուղղությունների հստակեցումը և հետազոտությամբ զբաղվելու գործուն քաղաքականության մշակումն ու իրագործումը կնպաստեն քոլեջում առավել շատ դասախոսների և ուսանողների ներգրավմանը:

Մտահոգիչ է, որ մասնագիտական հանձնաժողովենրում առկա չեն հետազոտական թեմաներ, որոնց վերաբերյալ քոլեջի դասախոսական անձնակազմն ու ուսանողները կարող են իրականացնել հետազոտություններ: Չնայած, որ մասնագիտական որոշ դասախոսներ, այնուամնայնիվ, ունեն գիտական աստիճան և ունեն հրատարակած հոդվածներ, այդուհանդերձ մտահոգիչ է, որ դա իրականացվում է ՊԴ կազմի անձնական նախաձեռնությամբ և առանց քոլեջի խրախուսման: Պետք է նաև նշել, որ ՊԴ կազմի իրականցրած հետազոտությունները առավել կրում են գիտական բնույթ և միջին մասնագիտական հաստատության կողմից իրականացվող ՄԿԾ-ներին չեն համապատասխանում: Սա խոչընդոտում է այդ հետազոտությունների արդյունքների արդյունավետ ներդրմանը ուսումնական գործընթաց: Մտահոգիչ է այն փաստը, որ քոլեջի դասախոսական կազմի գերակշիռ մասը հետազոտական գործունեություն չի իրականացնում:

Փորձագիտական խումը գնահատում է, որ հաստատությունը փորձել է հետազոտական բաղադրիչը ներդնել ուսումնական պրոցես՝ ներառելով ուսանողների կողմից պարտադիր ռեֆերատներ ներկայացնելու պահանջը: Այդուհանդերձ, մտահոգիչ է այն, որ հաստատության կոմղից չեն սահմանվել հստակ բովանդակային պահանջներ ռեֆերատներ գրելու համար: Պահանջների առկայությունը կնպաստեր ուսանողների շրջանում վերլուծական, քննադատական մտքի ձևավորմանը, որը նաև սահմանված է ՈԱՇ-ի 5-րդ մակարդակով: Մտահոգիչ է, որ ուսանողները ներկայացնում են ռեֆերատներ, որոնք երբեմն կրկնում են րենց կողմից ուսումնասիրած նյութերը: Այսպիսով, ուսանոները պարզապես գրավոր տարբերակով ներկայացնում են արդեն իրենց ծանոթ նյութերը որպես ռեֆերատներ, ինչը խոչընդոտում է ուսանողների շրջանում ինքնուրույն աշխատանք կատարելու կարողությունների ձևավորումը: Այս առումով գործատուների հետ սերտ համագործակցությունը կնպաստի աշխատաշուկայում արդի թեմաների ուսումնասիրմանը և կմեծացնի գործատուների ուսումնական գործընթացում ներգրավմանը:

Քոլեջի հետազոտության զարգացմանը կարող է նպաստել քոլեջի գիտական հոդվածների ժողովածուն, որտեղ նաև տպագրվում են քոլեջի դասախոսները, որոշ դեպքերում նաև ուսանողներ, և համագործակից միջազգային քլոեջներից մասնագետներ: Այդուհանդերձ, մտահոգիչ է, որ ժողովածույում հրապարակված հոդվածները կրում են առավել գիտական ուղղվածություն, իսկ արդյունքները չեն ներառվում ուսումնական գործընթացում:

Եզրահանգում: Հաշվի առնելով, որ Քոլեջն իր ՌԾ-ի զարգացման նպատակ է սահմանել հետազոտութունը՝ առանց հստակեցրելու և սահմանելու հետազոտական ուղղությունները, իրականցված չեն գործուն քայլեր ներգրավելու քոլեջի դասախոսներին, ուսանողներին

հետազոտական գործընացում, ուսանողների շրջանում հետազոտական մտքի զարգացմանն ուղղված քայլեր իրականացված չեն, հետազոտության արդյունքներ ուսուցման գործընթացում ներառված չեն փորձագիտական խումբը գտնում է, որ «Մեհրաբյանի անվան բժշկական ինստիտուտ» ՍՊԸ չի համապատասխանում չափանիշ 6-ի պահանջներին :

Եզրակացություն: Փորձագիտական խումբը «Մեհրաբյանի անվան բժշկական ինստիտուտ» ՍՊԸ բժշկական քոլեջի ինստիտուցիոնալ կարողությունների համապատասխանությունը **ՉԱՓԱՆԻՇ 6-ի** պահանջներին գնահատում է **անբավարար:**

VII. ԵՆԹԱԿԱՌՈՒՑՎԱԾՔ ԵՎ ՌԵՍՈՒՐՍՆԵՐ

ՉԱՓԱՆԻՇ: ՄՈՒՀ-ն ունի անհրաժեշտ ռեսուրսներ՝ ուսումնական միջավայրի ստեղծման և սահմանված առաքելության ու նպատակների արդյունավետ իրականացման համար:

Փաստեր

«ՄԲԻ» ՍՊԸ-ն կրթական գործունեությունն իրականացնում է իր սեփական տարածքներում՝ Հ. Քոչարի 21 և Կոմիտասի 51 հասցեներում: Այդ տարածքներում առկա են ուսումնաօժանդակ անձնակազմի և կառուցվածքային ստորաբաժանումների համար հատկացված սենյակներ (հիմնականում համակցված), նիստերի դահլիճ, գրադարան/գրապահոց, մարզադահլիճ, համակարգչային լսարան՝ 11 համակարգիչներով, ատամնատեխնիկական լաբորատորիա: Կոմիտաս 51 հասցեում գործում է ինտերնետային հասանելի WiFi կապ: ՄՈՒՀ-ում դասընթացները կազմակերպվում են 2 հերթով, լսարանային պարապմունքների համար առկա են 18 լսարան/կաբինետ, որից՝ 6-ը դասախոսությունների համար, 12-ը՝ գործնական և սեմինար պարապմունքների: Ինքնավերլուծությունում նշվում է, որ ուսանողներն իրենց գործնական և լաբորատոր պարապմունքներն անցկացնում են ինչպես ՄՈՒՀ-ի սեփական լաբորատորիաներում ու կաբինետներում, այնպես էլ Երևանի հիվանդանոցներում, ծննդատներում, ստոմատոլոգիական և կոսմետոլոգիական կենտրոններում, դեղատներում /»Սլավմեդ բժշկական կենտրոն» ՍՊԸ, «Օպտիմիա ֆորմա» էսթետիկ բժշկության կենտրոն, «Արսեդենտ» ՍՊԸ ստոմատոլոգիական կենտրոն, «Լիքվոր» դեղագործական ընկերություն, «Տոնուս-լես ռեմեդի» ՍՊԸ դեղատնային ցանց/: Փորձագիտական խմբի առցնաց այցից պարզ դարձավ, ՄՈՒՀ-ն ունի մասնագիտական լսարանների համալրման կարիք:

Չնայած քոլեջի լսարաններում/կաբինետներում առկա են տեսական և գործնական պարապմունքների իրականացման համար անհրաժեշտ պարագաներ՝ դիդակտիկ նյութեր (ցուցապաստառներ, ստենդեր), մուլյաժներ և այլն, այնուամենայնիվ, փորձագիտական վերլուծությունները ցույց տվեցին, որ ՄՈՒՀ-ի ռեսուրսներն ամբողջությամբ չեն բավականացնում բոլոր ՄԿԾ-ներում գործնական բաղադրիչի լիարժեք իրականացման համար, օրինակ՝ ՄՈՒՀ-ում առկա է ատամնատեխնիկական լաբորատորիա, կոսմետոլոգիական կաբինետներ, սակայն դեղաձևերի տեխնոլոգիայի և ֆարմակոգնոզիայի կաբինետում առկա ռեսուրսները չեն բավականացնի բոլոր մասնագիտական մոդուլների լաբորատոր աշխատանքների համար (տարբեր դեղաձևերի պատրաստման հմտություններ): Որոշ ՄԿԾ-ների (Դեղագործություն, Բուժական կոսմետոլոգիա) գործնական պարապմունքների մի մասը, ռեսուրս չլինելու պատճառով, իրականցվում է ՄՈՒՀ-ից դուրս, գործընկեր կազմակերպություններում /Մնջոյանի անվան նուրբ օրգանական քիմիայի ինստիտուտ, N 11 պոլիկլինիկա, «Օպտիմիա ֆորմա» էսթետիկ բժշկական կենտրոն:

ՄՈՒՀ-ի եկամուտները գրեթե ամբողջությամբ ձևավորվում են ուսման վարձերի հաշվին: 2003թ. հիմնվել է «Մեհրաբյան գիտաուսումնական կենտրոն» հասարակական կազմակերպությունը, որի ստեղծումը 2 նպատակ է հետապնել՝ ներգրավվել հասարակական աշխատանքներին, դիվերսիֆիկացնել ՄՈՒՀ-ի եկամուտների աղբյուրները: Քոլեջի կողմից կատարվող ծախսերի հիմքում ընկած են տվյալ ուսումնական տարվա ֆինանսական հնարավորությունները: Բյուջեից ֆինանսական ռեսուրսները բաշխվում են տարեկան

կտրվածքով ըստ ծախսերի նախահաշվի, որը կազմում է ուսումնական մասը և հաշվապահությունը՝ տնօրենի ղեկավարությամբ:
2015-2019թթ.-ին նվազել են ուսանողների ուսման վարձերից մուտքերը՝ պայմանավորված ուսանողների թվաքանակի նվազմամբ: Դրան զուգահեռ, ՄՈՒՀ-ը ուսանողների ուսման վարձերը չի բարձրացրել, չի կրճատել դասախոսներին և նրանց աշխատավարձը, սակայն նախատեսում է 2020-2021 ուս.տարում վերանայել ուսման վարձավճարներն ըստ մասնագիտությունների:

Ֆինանասական լրացուցիչ միջոցներ ներգրավելու նպատակով ՄՈՒՀ-ը մասնակցում է ՀՀ տարբեր դրամաշնորհային ծրագրերի և 2014թ.-ին, համաձայն «Դրամաշնորհի տրամադրման մասին թիվ 34-ԴՄ/2014 պայմանագրի» (10.04.2014 թ.), ուսումնական հաստատությունը մասնակցել է նաև հասարակական նշանակություն ունեցող «Դպրոցականներ, զերծ մնացեք ծխելուց» ծրագրի իրականացմանը: ՄՈՒՀ-ի դասախոսական անձնակազմը հանդիպել է դպրոցների աշակերտներին և իրազեկել ծխելու վնասների մասին:

ՌԾ-ով սահմանված ռազմավարական նպատակ համարվող ֆինանսական կայունության ապահովման խնդիրներից է ՄՈՒՀ-ի ռազմավարական նպատակների, խնդիրների և դրանց ուղղված ֆինանսական պլանավորման համապատասխանեցումը: Փորձագիտական վերլուծությունները ցույց են տալիս, որ ֆինանսական ռեսուրսների բաշխումն ամբողջությամբ չի իրականացվում ըստ ՌԾ-ի առաջնահերթությունների:

ՄՈՒՀ-ն, իր կանոնադրության համաձայն, տնօրինում է իր ֆինանսական միջոցները, ինքնուրույն է որոշում դրանց օգտագործման ուղղությունները: ՄՈՒՀ-ի ֆինանսական քաղաքականության համար հիմք են՝ ՄՈՒՀ-ի կանոնադրությունը, հաշվապահության կանոնադրությունը, «Հաշվապահական հաշվառման մասին» ՀՀ օրենքը, «Կազմակերպությունների ֆինանսատնտեսական գործունեության հաշվապահական հաշվառման հաշվային պլան և դրա կիրառման հրահանգ» ուղեցույցը, «Գնումների մասին» ՀՀ օրենքը:

Ըստ ՄՈՒՀ-ի ֆինանսական ռեսուրսների տարեկան բաշխման ուղղությունների՝ ՄՈՒՀ-ի ուսումնական և տնտեսական նպատակաների համար նախատեսված 16 տոկոս ծախսից գիտության և հետազոտության ծախսերը կազմում են 2 տոկոս, զարգացման ծախսերը՝ 1 տոկոս, միևնույն ժամանակ գովազդի ծախսերը ևս նախատեսված է 2 տոկոս: Փորձագիտական առցնաց առցնաց այցից պարզ դարձավ, որ առանձին ՄԿԾ-ներով գործնական, լաբորատոր պարապմունքների համար անհրաժեշտ ռեսուրսների համալրման համար ֆինանսական ռեսուրսների գնահատում և հավասարաչափ բաշխում չեն իրականացնում, միևնույն ժամանակ նաև պարզվեց, որ «Ատամնատեխնիկական գործ» մասնագիտության համար որոշ հատկացումներ կատարվում են: Փորձագիտական խմբի առցանց այցից պարզ դարձավ, որ որոշ մասնագիտությունների մոդուլային ծրագրերի համար /Բուժական կոսմետոլոգիա, Դեղագործություն/ գործնական պարապմունքների իրականացման համար անհրաժեշտ ռեսուրսներն ամբողջությամբ ապահովում են գործընկերները: Գործընկերների հետ ռեսուրսների համատեղ օգտագործման համար ՄՈՒՀ-ն ունի համագործակցության պայմանագրեր: Քոլեջում նաև դասավանդում են գործընկեր կազմակերպությունների աշխատակիցներ: Առցնաց այցից պարզ դարձավ, որ, ըստ ՌԾ-ի առաջնահերթությունների՝ ՄՈՒՀ-ը պլանավորել է ունենալ միջազգային ուսանողներ, սակայն օտարերկրյա ուսանողների ներգրավման և վերջիններիս համար կրթական միջավայրի լիարժեք ապահովման համար հստակ վերլուծություններ և գնահատականներ առկա չեն:

Ինքնավերլուծությունում նշվում է, որ քոլեջում մշտապես իրականացվում են ընթացիկ և կապիտալ վերանորոգման աշխատանքներ, ձեռք են բերվում տարբեր սարքավորումներ, նորացվում է լսարանի կահավորումը, համալրվում է գրադարանային ֆոնդը, որոնց համար որպես իրավական հիմք են ՈԱ կենտրոնի կողմից ուսանողների և դասախոսների շրջանում ոչ ֆորմալ զրույցները, ռեսուրսներով բավարարվածության վերաբերյալ անցկացվող

հարցումները, որոնք հնարավորություն են տալիս անմիջապես ներքին շահառուների կողմից վերհանել առկա խնդիրները: ՄՈՒՀ-ի 2020-2025 ուս. տարվա բիզնես պլանով ևս նախատեսված է իրականացնել նոր տարածքների ձեռք բերման և վերանորոգման ծախսեր, առցնաց այցից պարզ դարձավ, որ վերանորոգման աշխատանքներ են կատարվել, սակայն նոր տարածքների ձեռք բերման հետ կապված առկա են ֆինանսական խնդիրներ:

ՄՈՒՀ-ում փաստաթղթերի ընդունումը, ձևակերպումն ու շարժը իրականացվում է Տեղեկատվության և փաստաթղթաշրջանառության կառավարման կանոնակարգին համապատասխան և, ըստ Ինքնավերլուծության, աշխատանքներ են տարվում փաստաթղթաշրջանառության կանոնակարգված համակարգի ձևավորման ուղղությամբ, մասնավորապես՝ փաստաթղթաշրջանառության ավտոմատացում, գրադարանային ֆոնդի թվայնացում: ՄՈՒՀ-ում առկա են աշխատակիցների և ուսանողների էլեկտրոնային արխիվային տվյալները ընթացիկ փաստաթղթերը: Փորձագիտական ուսումնասիրությունները ցույց տվեցին, որ ՄՈՒՀ-ում փաստաթղթերը, իր իրականացրած գործունեության ծավալների համեմատ, մեծ թիվ են կազմում, վերնագրերը երբեմն հասկանալի չեն և չեն համապատասխանում փաստաթղթի բովանդակությանը:

Ինքնավերլուծությունում նշվում է, որ ՄՈՒՀ-ի կայքէջում զետեղվում և պահպանվում են կանոնադրությունները, կանոնակարգերը, կարգերը, մասնագիտությունները, ուսումնական պլանները, հայտարարություններ, նորություններ և այլն: Փորձագիտական խմբի ուսումնասիրությունները ցույց տվեցին, որ տեղեկատվության մի մասը ներկայացված է կայքէջում, այդուհանդերձ, առկա են որոշ բացթողումներ:

ՄՈՒՀ-ի մասնաշենքերում հասարակական կարգի, գույքի պահպանության, ներքին կարգապահական կանոնների պահպանման համար առանձին անվտանգության ծառայություն չի գործում, այն իրականացնում են քոլեջի աշխատակիցները՝ ըստ սահմանված հերթապահությունների: Երկու մասնաշենքերում էլ՝ Հ. Քոչար 21 և Կոմիտաս 51, տարածքները հսկվում են տեսախցիկներով, տեղադրված են կրակմարիչներ և փակցված են տարհանման-սխեմա ցուցանակները: Մասնաշենքերից մեկում առանձին գործող բուժկետ առկա չէ: ՄՈՒՀ-ի Հ. Քոչար 21 մասնաշենքը «Նոր Արաբկիր» բ/կ-ի տարածքում է և անհրաժեշտության դեպքում մասնագետները կարող են օգնություն ցուցաբերել: ՄՈՒՀ-ը նաև աշխատանքներ է կատարում իր աշխատակիցների և ուսանողների առողջության պահպանման ուղղությամբ: Փորձագիտական առցնաց այցից ևս պարզվեց, որ շաբաթվա վերջին աշխատանքային օրերին քոլեջի բժիշկ դասախոսները ուսանողներին և նրանց ծնողներին անվճար բուժզննումներ և խորհրդատվություններ են մատուցում:

ՄՈՒՀ-ում ներկայումս հատուկ կարիքներ ունեցող ուսանողներ չկան, Հ. Քոչար 21 հասցեում տեղակայված է թեքահարթակ, Կոմիտաս 51 հասցեում առկա է վերելակ: Ինքնավերլուծությունում նշվում է, որ ՄՈՒՀ-ի միջավայրի ապահովության, առողջության և անվտանգության պահպանման ուղղված ծառայությունների արդյունավետությունը գնահատող հարցումներ առկա չեն:

2019թ. մշակվել է «ՄՈՒՀ-ի կողմից կարևորվող մի շարք չափանիշների առումով դասախոսների և ուսանողների բավարարվածության ընթացակարգ», որով նախատեսվել է պարզել դասախոսների և ուսանողների բավարարվածությունը միջանձնային հարաբերություններից, վարչական անձնակազմի վերաբերմունքից, քոլեջի նյութատեխնիկական ապահովվածությունից և այլն: ՄՈՒՀ-ում իրականցվում են դասավանդողների, շրջանավարտների և ուսանողների ռեսուրսներից բավարարվածության վերաբերյալ հարցումներ: Հարցումների արդյունքներով ՄՈՒՀ-ի նյութատեխնիկական հագեցվածությունից բավարարված են դասախոսների 93 տոկոսը, ուսանողների՝ 92 տոկոսը, իսկ ՄՈՒՀ-ի տեղեկատվական ծառայությունից՝ հարցվող ուսումնառողների 88 տոկոսը: Առցնաց այցից պարզ դարձավ, որ որոշ ՄԿԾ-ների (Դեղագործություն) համար գրադարանային ֆոնդը մասնագիտական գրականության համալրման կարիք ունի:

Ըստ Ինքնավերլուծության՝ հարցման արդյունքում կատարված առաջարկությունները նախատեսվում է քննարկել մանկավարժական խորհրդի նիստերում: Առցնաց այցի ընթացքում պարզվեց, որ այդ քննարկումները դեռևս չեն կայացել: ՄՈՒՀ -ում տեղադրված են արագ արձագանքման արկղեր, որոնց միջոցով ուսումնական մասն ու ՈԱ կենտրոնը կանոնակարգում և քննարկում են ուսանողների բարձրացրած հարցերն ու առաջարկությունները: Առցնաց այցից պարզ դարձավ, որ ուսանողներն արագ արձագանքման արկղերում ունեն իրենց հարցերն ու առաջարկությունները, սակայն տեսանելի չէր բարձրացված հարցերի և առաջարկությունների արդյունքները:

Դատողություններ: Փորձագիտական խումբը գտնում է, որ ներկա պայմաններում <<ՄԲԻ>> ՍՊԸ-ի ռեսուրսները ընդհանուր առմամբ ապահովում են կրթական ծրագրերի իրականացումը: Դրական է համարվում, որ ՄՈՒՀ-ը կրթական գործունեությունը ծավալում է իր սեփական տարածքներում, որտեղ, ընդհանուր առմամբ առկա են համապատասխան մասնագիտական լսարաններ/կաբինետներ, լաբորատորիա, համակարգչային լսարան: Քանի որ ՄՈՒՀ-ում մասնագիտական լսարանների նկատմամբ անհրաժեշտություն է զգացվում, ուստի քոլեջը դասընթացները կազմակերպում է երկու հերթով: Միևնույն ժամանակ ՄԿԾ-ներով սահմանված ՄԾ-ների գործնական և լաբորատոր պարապմունքներն իրականացնելու համար քոլեջն օգտվում է գործընկերների ռեսուրսներից: Ընդ որում՝ «Բուժական կոսմետոլոգիա», «Դեղագործություն» մասնագիտությունների մասնագիտական մոդուլների համար անհրաժեշտ ռեսուրսները հիմնականում ապահովում են գործընկեր կազմակերպությունները: Այս առումով փորձագիտական խումբը մի կողմից դրական է համարում գործընկերների հետ համատեղ ռեսուրսների օգտագործումը, որը կարող է նպաստել ուսանողների մոտ գործնական հմտությունների ձևավորմանը, մյուս կողմից անհանգստացնող է՝ եթե խաթարվեն գործընկերային հարաբերությունները, ապա ՄՈՒՀ-ը չի կարող ամբողջությամբ իրականացնել իր կրթական ծրագրերը և հետազոտությունները, արդյունքում կարող են վտանգվել ՌԾ-ով սահմանված առաջնահերթությունները:

Ողջունելի է, որ ՄՈՒՀ-ն աշխատում է ինքնաֆինանսավորման սկզբունքով՝ եկամուտները գրեթե ամբողջությամբ ձևավորվում են ուսման վարձերից: Բացի այդ, 2003թ. ստեղծված «Մեհրաբյան գիտաուսումնական կենտրոն» ՀԿ-ի միջոցներով կարող են դիվերսիֆիկացնել քոլեջի եկամուտների աղբյուրները՝ նպաստելով ՄՈՒՀ-ի ֆինանսական ռեսուրսների ավելացմանն ու արդյունավետ օգտագործմանը: Թեև 2015-2019թթ. ուսանողների թվի կրճատմամբ պայմանավորված նվազել են ուսանողների ուսման վարձերից մուտքերը, այդուհանդերձ, ՄՈՒՀ-ը ոչ միայն չի կրճատել դասախոսներին ու նրանց աշխատավարձը, այլև չի բարձրացրել ուսանողների ուսման վարձերը: Այդուհանդերձ, 2020-2021 ուստարում նախատեսվել է վերանայել ուսման վարձավճարներն ըստ մասնագիտությունների, ինչը կարող է նպաստել ՄՈՒՀ-ի եկամուտների ավելացմանը:

Փորձագիտական վերլուծությունները վկայում են, որ ՄՈՒՀ-ում ֆինանսական ռեսուրսների բաշխման քաղաքականությունը ամբողջությամբ չի իրականացվում ըստ ՌԾ նպատակների առաջնահերթությունների, մասնավորապես՝ ՄՈՒՀ-ի ռազմավարական առաջնահերթություններից են հետազոտությունն ու միջազգայնացումը, մինչդեռ գիտության և հետազոտության ծախսերը կազմում են 2 տոկոս, զարգացման ծախսերը՝ 1 տոկոս՝ վտանգելով ռազմավարական նպատակների և ֆինանսական ռեսուրսների բաշխման համահունչությունը: Բացի դա, քանի որ առանձին ՄԿԾ-ներով գործնական, լաբորատոր պարապմունքների համար հատկացվելիք անհրաժեշտ ֆինանսական ռեսուրսների բաշխման մեխանիզմները հստակ չեն, ուստի կարող է տուժել նաև ֆինանսական ռեսուրսների արդյունավետ բաշխման քաղաքականությունը:

Քանի որ ՄՈՒՀ-ը պլանավորել է ունենալ միջազգային ուսանողներ, որոնց ներգրավման և կրթական միջավայրի ապահովման նկատառումով վերլուծություններ և գնահատականներ

առկա չեն, ուստի փորձագիտական խմբի կողմից դրական դիտարկում լինելով հանդերձ՝ հիմքում հիմնավոր վերլուծություններ չունենալու պատճառով կարող է խոչընդոտել ռազմավարական նպատակների իրագործմանը:

Քանի որ ՄՈՒՀ-ում ներքին շահակիցների ռեսուրսների նկատմամբ կարիքների վերհանման հիմքում ընկած են ՈԱ կենտրոնի կողմից ուսանողների և դասախոսների շրջանում ոչ ֆորմալ զրույցները, ռեսուրսներով բավարարվածության վերաբերյալ հարցումները, ինչի արդյունքում ուսանողներն ունեն 93 տոկոս, դասախոսները՝ 92 տոկոս բավարարվածություն, ուստի կարող են վտանգվել իրական խնդիրների վերհանման հնարավորությունները:

Քանի որ ՄՈՒՀ-ում քայլեր են ձեռնարկվում փաստաթղթաշրջանառության կանոնակարգված համակարգի ձևավորման ուղղությամբ, հետևաբար փաստաթղթավորման ավտոմատացման արդյունքում կարող են բարելավվել տեղեկատվության և փաստաթղթավորման կառավարման գործընթացները: Մտահոգիչ է, որ ՄՈՒՀ-ում փաստաթղթերը մեծ ծավալ են կազմում, վերնագրերը երբեմն հասկանալի չեն:Փաստաթղթերն ընդհանուր առմամբ կանոնակարգման և թիրախավորման կարիք ունեն: Ողջունելի է, որ ՄՈՒՀ-ը աշխատանքներ է տանում՝ միտված իր աշխատակիցների և ուսանողների առողջության պահպանմանը, մասնավորապես բժիշկ դասախոսները ուսանողներին և նրանց ծնողներին անվճար բուժզննումներ և խորհրդատվություններ են տրամադրում՝ նպաստելով առողջապահական անվտանգ միջավայրի ձևավորմանը և իրենց բժիշկ դասախոսների նկատմամբ վստահության բարձրացմանը:

Փորձագիտական խումբը դրական է համարում, որ մշակվել է ՄՈՒՀ-ի կողմից կարևորվող մի շարք չափանիշների առումով դասախոսների և ուսանողների ընթացակարգ, որը կարող է կանոնակարգել հարցման գործընթացը, ինչպես նաև իրականացվում է դասավանդողների, շրջանավարտների և ուսանողների ռեսուրսներից բավարարվածության վերաբերյալ հարցումներ, սակայն դրանց արդյունքում կատարված առաջարկությունները դեռևս չեն քննարկվել և ներդրվել՝ վտանգելով հարցումների իրականացման արդյունավետությունը:

Եզրահանգում: Հաշվի առնելով, որ «ՄԲԻ» ՍՊԸ-ն իր ՄԿԾ-ների իրականացման համար ապահովում է անհրաժեշտ պայմաններ, ջանքեր է ներդնում առկա ռեսուրսների բարելավման և նոր ռեսուրսների ձեռքբերման ուղղություններով, ՄԿԾ-ների նպատակների իրագործման համար օգտագործում է գործատուների ռեսուրսները, ընդհանուր առմամբ ուսումնական գործընթացի կազմակերպման համար առկա է ապահով և անվտանգ միջավայր, օգտագործում է ֆինանսական ռեսուրսների դիվերսիֆիկացման հնարավորությունները, փորձագիտական խումբը գտնում է, որ ուսումնական միջավայրի ստեղծման և սահմանված առաքելությունների և նպատակների իագործման համար ունի անհրաժեշտ ռեսուրսներ, ուստի բավարարում է Չափանիշ 7-ի պահանջներին:

Եզրակացություն: Փորձագիտական խումբը «Մեհրաբյանի անվան բժշկական ինստիտուտ» ՍՊԸ-ի ինստիտուցիոնալ կարողությունների համապատասխանությունը ՉԱՓԱՆԻՇ 7-ի պահանջներին գնահատում է **բավարար:**

VIII. ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆ

ՉԱՓԱՆԻՇ: ՄՈՒՀ-ն իր տրամադրած կրթության, իրականացրած հետազոտության և օգտագործած ռեսուրսների համար հաշվետու է պետությանը և հասարակությանը:

Փաստեր

«ՄԱԲԻ» ՍՊԸ բժշկական քոլեջի 2015-2020 թթ. ՌԾ-ում (4.8 կետ) հասարակական պատասխանատվության մասով առաջադրված նպատակի իրականացման համար ՄՈՒՀ-ը առանձնացրել է մի շարք խնդիրներ, այդ թվում՝ արտաքին շահակիցների հետ կապերի իրականացում և համագործակցությունների ձևաչափի ընդլայնում, հաշվետվողականության մակարդակի բարձրացում և հասարակության կրթական, գիտական և մշակութային

առաջընթացն ապահովող մեխանիզմների մշակում: Այս նպատակով ՄՈՒՀ-ում մշակվել և հաստատվել է շահակիցների (արտաքին և ներքին) առջև հաշվետվողականության ապահովման ընթացակարգ (հաստված 27.07.2016 թ.): Այս նպատակին ուղղված գործողությունները ներառում են հետևյալ միջոցառումները՝ կառուցվածքային ստորաբաժանումների պարբերական նիստերի իրականացում և արձանագրում, վարչական անձնակազմի կողմից հաշվետվությունների կազմում ու զեկույցների կամ հաշվետվությունների ձևով ներկայացում ներքին և արտաքին շահակիցներին, ինֆորմացիայի տեղադրում ՄՈՒՀ-ի կայք էջում կամ իրազեկում սոց. ցանցերում միջոցով: Արտաքին շահակիցների հետ կապերի ամրապնդման համար նախատեսված քայլերից է վերջիններիս շրջանում հարցումների իրականացումը և գործատուների և շրջանավարտների մասնակցությունը մանկ. խորհրդի նիստերին, ինչն ամրագրված է Թիվ 02/15 (02.01.2015 թ.) հրամանում:

ՄՈՒՀ-ում գործում է հաշվետվությունների ներկայացման քաղաքականություն և ընթացակարգ, ինչի մասին վկայում են ինքնավերլուծությանը կից ներկայացված տնօրենի, տարբեր ստորաբաժանումների տարեկան հաշվետվությունները, մանկ. խորհրդի նիստերի արձանագրությունները և այլն: Այնուամենայնիվ, այդ հաշվետվություններում հստակ արտացոլված չեն ՌԾ-ի համապատասխան կետին վերաբերվող տվյալ օղակում իրականացվող գործողությունների կատարողականները, որի միջոցով հետագայում պետք է ամփոփվի և գնահատվի ամբողջ ՌԾ-ն: Այսպես, օրինակ՝ տնօրենի տարեկան հաշվետվությունները իրենցից ներկայացնում են ընդհանուր տվյալների ամփոփում, ավելի շատ վերաբերվում են ձեռքբերումներին կամ, հակառակը, թերությունների նկարագրմանը, և, դրանցից բխող ապագա քայլերին: Փորձաքննության ժամանակահատվածում տնօրենի հաշվետվությունները կայք էջում տեղադրված չէին (կարգով նախատեսվում է): Ստորաբաժանումների հաշվետվությունների վերլուծություն, դրանց հիման վրա խնդիրների վերհանում և շտկմանն ուղղված միջոցառումների պլանավորում հիմնականում չի իրականացվել:

ՄՈՒՀ-ը իր գործունեության մասին հասարակության ավելի լայն շրջանակներին իրազեկման նպատակով կիրառում է մի շարք մեթոդները: ՄՈՒՀ-ն ունի ֆեյսբուքյան էջ (Yerevan Medical institute after Mehrabyan) և պաշտոնական եռալեզու կայք էջ (http://www.armmed.am), որոնք գտնվում են անմիջապես տնօրենի պատասխանատվության ներքո: Կայք էջի ռուսերեն և անգլերեն տարբերակներում որոշ հատվածներ դեռ թարգմանված չէին: ՄՈՒՀ-ն ունի տպագրված գովազդային բուլետներ (հայերեն, ռուսերեն, անգլերեն): ՄՈՒՀ-ը մասնակցում է ամենամյա կրթական էքսպո ցուցահանդեսներին, ինչպես նաև երբեմն գովազդ է տեղադրում տարբեր հանրային տեղեկատվական հարթակներում: ՄՈՒՀ-ի պաշտոնական կայք էջը որոշ չափով դինամիկ է, հնարավորություն է տալիս հղումներով ավելի մանրամասն տեղեկատվությունհայթհայթել, այնուամենայնիվ, կայք էջում դեռևս տեղ չեն գտել հաշվետվողականության տարրեր, օրինակ, ինչպես պլանավորվում էր, կայք էջում դեռ տեղադրված չեն տնօրենի (կամ այլ ստորաբաժանումների) տարեկան հաշվետվությունները: Փորձաքննության ժամանակահատվածում կայք էջում առկա չէին կանոնակարգերը և ընթացակարգերը, չնայած ՄՈՒՀ-ը պլանավորում է դա իրականացնել մոտ ապագայում շահակիցների առջև հաշվետվողականության ընթացակարգի համաձայն:

Սակայն հարկ է նշել, որ թե առցանցհարթակներում, թե տպագրված նյութերում, թե մասնաշենքերի արտաքին գովազդային պաստառներում գրված է «Մեհրաբյանի անվան բժշկական ինստիտուտ» անվանումը (առանց ՍՊԸ և բժշկական քոլեջ): Ավելին, ֆեյսբուքյան էջում, «Տեղեկատվություն» բաժնի, «Նպատակ» մասում, գրված է, որ ՄՈՒՀ-ը իրականացնում է բարձրագույն կրթություն «Դեղագիտություն» և «Ստոմատոլոգիա» մասնագիտությունների կրթական ծրագրերով: Ինքնավերլուծության սկզբնամասում, ՄՈՒՀ-ի մասին համառոտ տեղեկատվություն բաժնում նշվում է, որ «ՄԱԲԻ»-ը ժամանակին իրականացրել է բարձրագույն

կրթությամբ մասնագետների պատրաստում, սակայն 2015 թ., այս գործառույթը ԿԳ նախարարի հրամանի համաձայն (30.12.2015 2., N1081-Ա/Ք) դադարեցվել է, իսկ ուսումնական հաստատության անվանումը դարձել է «Մեհրաբյանի անվան բժշկական ինստիտուտ» ՍՊԸ բշժկական քոլեջ և այն, առ այսօր, իրականացնում է միայն միջին մասնագիտական կրթության որակավորումներ ունեցող մասնագետների պատրաստում: Առցնաց այցի ընթացքում պարզաբանվեց, որ ՄՈՒՀ-ը մոտ ժամանակներում չի նախատեսում վերսկսել բարձրագույն կրթական ծրագրերի իրականացումը, չնայած, հետագայում նման պլաններ, այնուամենայնիվ, առկա են: Առցնաց այցի ընթացքում պարզ դարձավ, որ ՄՈՒՀ-ի մոտակա պլանները վերաբերվում են ուսումնական հաստատության, որպես քոլեջ զարգացմանը և համապատասխանեցմանը ընդունված չափանիշներին: Ինքնավերլուծությունում բերված ՄՈՒՀ-ի ռեյտինգային ցուցանիշների վերլուծության արդյունքում պարզվեց, որ Academic Rancing of World Universities - European Standart ARES - 2019 Armenia ռեյտինգային կազմակերպությունը ՄՈՒՀ-ին ընգրկել է հայաստանի բարձրագույն հաստատությունների ցանկում:

Ինչ վերաբերվում է առցանցհարթակներին, ապա ՄՈՒՀ-ի պաշտոնական կայք էջում նշված են կազմակերպության կոնտակտային տվյալները, կա հղում ֆեյսբուքյան էջին (միակ օնլայն հարթակը, որը տալիս է հետադարձ կապի հնարավորություն), սակայն անմիջապես կայք էջում հետադարձ կապի հնարավորություն չկա: Կայք էջի «Կարիերայի կենտրոն» բաժնում բերված են համագործակցող կազմակերպությունների (գործատուների և աշխատանքի տեղավորման կենրոնների) անվանումները, սակայն դրանք հղումներով չեն և վերջիններիս տվյալներ չեն պարունակում: Առցնաց այցի ընթացքում պարզվեց նաև, որ մինչև վերջին ժամանակները ՄՈՒՀ-ում չի գործել շրջանավարտների հետ հետադարձ կապը, ինչը, որոշ դժվարություններ է առաջացրել Ինքնավերլուծությունը գրելու ընթացքում, սակայն, ինչպես նշեցին ՄՈՒՀ-ի ներկայացուցիչները, ուսումնական հաստատությունը ձեռնամուխ է եղել շրջանավարտների բազայի ստեղծմանը և այս ուղղությամբ հաստատությունում արդեն իրականացվում են որոշ աշխատանքներ:

Հասարակության հետ կապերի ձևավորմանը նպաստող գործողությունների շրջանակում ՄՈՒՀ-ում հաստատվել է Թիվ 72/16 հրաման (հաստատված 29.12.2016 թ.,) ՝ «ՄԱԲԻ» ՍՊԸ-ում հանրային ատոողջության պահպանման, տարաբնույթ հիվանդությունները ժամանակին հայտնաբերման և կանխարգելման նպատակով յուրաքանչյուր շաբաթվա ուրբաթ օրը, դասերից հետո, քոլեջի համապատասխան մասնագետների կողմից ուսանողների և նրանց ծնողների անվճար բշժկական զննություն և խորհրդատվություն իրականացնելու մասին: Այնուամենայնիվ, փաստաթղթերի ուսումնասիրության, ինչպես նաև առցնաց այցի ընթացքում նշված միջոցառման պարբերական իրականացման հիմքեր չեն արձանագրվել:

ՄՈՒՀ-ում ՀՀ քաղաքացիների համար գործում են անվճար նախապատրաստական դասընթացներ, որոնց մասնակիցները հետագայում կարող են ընդունելիության նպատակով դիմել քոլեջ կամ այլ միջին մասնագիտական ուսումնական հաստատություններ:

Համաձայն ինքնավերլուծությունում ներկայացված տվյալների, քոլեջում և դրանից դուրս (օրինակ դպրոցներում) կազմակերպվում են անվճար առաջին բուժօգնության դաընթացներ: Չնայած, որ կից ներկայացված չէին նման դասընթացների կազմակերպման ժամանակացույցեր, կամ դրանց իրականացման մասին վկայող հաշվետվություններ, այնումենայնիվ, քոլեջի կայքէջում տեղադրված է «Առաջին օգնություն» դասընթացի նկարագրությունը, իր դիդակտիկ նյութերով:

Փորձագիտական առցնաց այցի ընթացքում պարզ դարձավ, որ հասարակությանը գիտելիքների փոխանցման այլ մեխանիզմներ ՄՈՒՀ-ում առկա չեն:

Դատողություններ: Փորձագիտական խումբը դրական է գնահատում ՄՈՒՀ-ի որդեգրած քաղաքականությունը արտաքին և ներքին շահակիցների առջև հաշվետվողականության ապահովման ուղղությամբ: Փորձագիտական խումբը արձանագրում է նաև, որ ՄՈՒՀ-ը ունի հաշվետվությունների ներկայացման մշակված ընթացակարգեր: Քոլեջում պարբերաբար իրականացվում է հաշվետվությունների ներկայացում: Այնուամենայնիվ, ներկայացված հաշվետվությունների ձևաչափի վերանայման կարիք կա, քանի որ այստեղ հիմնականում հստակ չեն ներկայացվում ռազմավարական նպատակների իրականացմանն ուղղված գործողությունների կատարողականները, չկան խորը վերլուծություններ, արդյուքնների մի մասը թվայնացված կամ առարկայական ներկայացված չեն: Սա բացասական ազդեցություն կարող է ունենալ առաջացած խնդիրների լիարժեք գնահատման, կարիքների բացահայտման և դրանց համար նախատեսված միջոցառումների ճիշտ պլանավորման և արդյունավետ իրագործման համար:

Փորձագիտական խումբը դրական է գնահատում ՄՈՒՀ-ի հասարակության լայն շրջանակներին իր մասին տեղեկատվություն տրամադրելու միջոցառումները՝ կայքէջի, ֆեյսբուքյան էջի առկայություն, բուկլետների տպագրում և այլն: Դրական է նաև հասարակական նշանակություն ունեցող միջոցառումներին մասնակցությունը և դասընթացների, հանդիպումների կազմակերպումը, հանրապետական և միջազգային տարբեր գործընկերների հետ պայմանագրերի կապումը և այլն: Այնուամենայնիվ, փորձագիտական խմբի համար մտահոգիչ է այն հանգամանքը, որ արտաքին շահակիցների շրջանում ուսումնական հաստատության կողմից իրականացվող գործառությունների վերաբերյալ կարող է առաջանալ թյուրըմբռնում: Նշված խնդիրը կապված է ուսումնական հաստատության անվանման հետ: Այսպես, կայք էջում (եռալեզու), ֆեյսբուքյն էջում, գովազդային նյութերում, տեղեկագրում և, նույնիսկ, որոշ պայմանագրերում նշված է միայն Մեհրաբյանի անվան բժշկական ինստիտուտ անվանումը (առանց ՍՊԸ բժշկական քոլեջ), ինչը ուսումնական արտաքին շահակիցների համար (ապագա դիմորդ, միջազգային գործընկերներ) թյուր տպավորություն կարող է ստեղծել, որ ՄՈՒՀ-ը իրականացնում է բարձրագույն կրթություն: Վերջինիս վառ ապացույցն է Academic Rancing of World Universities - European Standart ARES - 2019 Armenia ռեյտինգային կազմակերպության կողմից ՀՀ ԲՈՒՀ-երի շարքում ՄՈՒՀ-ի ընդգրկման փաստը: Այս հանգամանքը կարող է խոչընդոտել ՄՈՒՀ-ի արտաքին շահակիցներին հետ թափանցիկ փոխհարաբերությունների հստատմանը և վնասել ՄՈՒՀ-ին՝ միջազգային նոր գործընկերներ ձերք բերելու և նրանց հետ արդյունավետ համագործակցելու առումով:

Չնայած, որ ընթացակարգով նախատեսվում է ՄՈՒՀ-ի կայք էջում տնօրեի և ստորաբաժանումների հաշվետվությունների հրապարակային ներկայացում, այնուամենայնիվ դա դեռևս չի իրականացվել, ինչը չի նպաստում ՄՈՒՀ-ի գործունեության թափանցիկությանը:

Դրական է, որ ՄՈՒՀ-ի նախաձեռնել է Առաջին բուժ. օգնության դասընթացների կազմակերպումը, այնուամենայնիվ փորձագիտական խումբը մտահոգիչ է համարում այն, որ քոլեջում չեն գործում հասարակության գիտելիքների շարունակական փոխանցման հստակ մեխանիզմներ, ինչը խոչընդոտում է հասարակության հետ կապերի ձևավորմանը և ամրապնդմանը:

Եզրահանգում: Հաշվի առնելով, որ ՄՈՒՀ-ն ունի հաշվետվողականության սահմանված կարգ և մշակված քաղաքականություն: ՄՈՒՀ-ի արտաքին և ներքին շահակիցները ներգրավված են հաշվետվողականության ներկայացման հարթակներում, թափանցիկության ապահովման համար գործում է ՄՈՒՀ-ի կայք էջն ու ֆեյբուքյան էջը, առակ են հետադարձ կապի ապահովման որոշակի մեխանիզմներ, հասրակաությանը ծառայությունների մատուցման որոշակի մեխազնիմներ, փորձագիտական խումբը գտնում է, որ «Մեհրաբյանի անվան

բժշկական ինստիտուտ» ՍՊԸ բժշկական քոլեջը համապատասխանում է չափանիշ 8-ի պահանջներին:

Եզրակացություն: Փորձագիտական խումբը «Մեհրաբյանի անվան բժշկական ինստիտուտ» ՍՊԸ բժշկական քոլեջի ինստիտուցիոնալ կարողությունների համապատասխանությունը ՉԱՓԱՆԻՇ 8-ի պահանջներին գնահատում է **բավարար:**

IX. ԱՐՏԱՔԻՆ ԿԱՊԵՐ ԵՎ ՄԻՋԱԶԳԱՅՆԱՑՈՒՄ

ՉԱՓԱՆԻՇ: Արտաքին կապերի միջոցով ՄՈՒՀ-ը խրախուսում է փորձի փոխանակումը և զարգացումը՝ նպաստելով հաստատության միջազգայնացմանը:

Փաստեր

Քոլեջի ռազմավարական ծրագրի 4.6-րդ կետի նպատակն է միջազգային և արտաքին գործունեության ընդլայնումը՝ խնդիրներ դնելով բարձրացնել քոլեջի ճանաչելիությունը, ընդլայնել համագործակցությունների ձևաչափը՝ ունենալով օտարերկրյա ուսանողներ, նպաստելով ուսանողների և դասախոսական կազմի շարժունությանը, խթանելով շահակիցների մասնակցությունը միջազգային ծրագրերին:

Քոլեջի պրակտիկայի կազմակերպման, աշխատանքի տեղավորման և արտաքին կապերի միջազգայնացման բաժինն ունի կանոնադրություն, կարճաժամկետ ռազմավարական ծրագիր՝ տարեկան աշխատանքային պլանի տեսքով: Արտաքին կապերի հաստատումը խրախուսող քաղաքականություն ու ընթացակարգեր որպես այդպիսիք ինքնավերլուծության մեջ և հավելվածներում քոլեջի կողմից չեն ներկայացվել:

Ըստ հաստատության գործող ՌԾ-ի միջազգայնացումը քոլեջի առաջնահերթություններից է: Հաստատությունը նախատեսում է օտարերկրյա ուսանողներ ներգրավել: Առցնաց այցի ընթացքում պարզ դարձավ, որ միջազգային ուսանողների քանակը, յուրաքանչյուր մասնագիտության համար քոլեջը պլանավորում է ներգրավել 25 ուսանող: Իսկ ընդհանուր միջազգային ուսանողների թիվը կկազմի շուրջ 50-75 ուսանող: Հաստատությունը միջազգային ուսանողների ավելացմամբ դեռևս չի ուսումնասիրել տարածքի, ՊԴ կազմի և նյութական ռեսուրսների, ֆինանսական հնարավորությունների կարիքը: Փորձաքննության ընթացքում քոլեջում ուսանում էին առաջին կուրսի մի քանի օտարերկրյա ուսանողներ՝ ազգությամբ հայ:

Հաստատությունը արտասահմանյան ուսանողների հոսքն ապահովելու նպատակով ստեղծել են եռալեզու կայք էջ, որն ապահովելու է միջազգայնացումը և թափանցիկությունը հասարակության առջև:

ՄՈՒՀ-ի զարգացմանը և միջազգայնացմանը նպաստող միջավայր ստեղծելու նպատակով ՄՈՒՀ-ում գործում է Պրակտիկայի կազմակերպման, աշխատանքի տեղավորման և արտաքին կապերի միջազգայնացման բաժին: Ներկայացված է բաժնի կանոնադրությունը, կարճաժամկետ ռազմավարական ծրագիրը՝ տարեկան աշխատանքային պլանի տեսքով: Կանոնադրության մեջ մասնավորապես նշվում են բաժնի խնդիրները և գործառույթները:

Այս գործառույթների իրականացման համար պատասխանատու է մեկ անձ, ով բացի միջազգայնացման, արտաքին կապերի համակարգման հարցերով զբաղվելուց, պատասխանատու է նաև քոլեջի ուսանողների պրակտիկաների կազմակերպման և վերահսկողության, բազաների հետ պայմանագրերի կնքման, շրջանավարտների աշխատանքի տեղավորման, քոլեջի կայքի ձևավորման, տեղեկատվության թարմացման և այլ հարցերով:

Բաժնի համակարգողի կողմից ներկայացված 2019/2020, 2020/2021ուս.տարիների աշխատանքային պլաններում /միջնաժամկետ ռազմավարական ծրագրեր/, կրկնվում են նույն

գործողությունները /նույնիսկ 2019թ. չեն փոխել 2020թ.-ով/: Առկա է 2019/2020ուս. տարվա հաշվետվությունը բաժնի կատարած աշխատանքների վերաբերյալ, որում բացակայում է իրականացված աշխատանքների վերլուծությունը, գնահատումը ներկա մարտահրավերների պայմաններում, բացակայում են վերապատրաստումների ամփոփումը, դասախոսական կազմի և ուսանողության շարժունությունը և շարունակականությունն ապահովող ծրագրեր, բենչմարքինգին վերաբերող վերլուծական տեղեկատվություն: Ինչպես նշված է ԻՎ -ում՝ աշխատանքներ են տարվում նաև Լիտվայի Ուտենայի համալսարանի քոլեջում գործող "Beauty cosmetology" մասնագիտական կրթական ծրագրի բենչմարքինգի ուղղությամբ:

Քոլեջի կողմից կնքված են համագործակցության պայմանագրեր տեղական և միջազգային հաստատությունների և կառույցների հետ: Տեղական համագործակից կազմակերպություններից են. Հ. Բունիաթյանի անվան կենսաքիմիայի ինստիտուտ, «Լիքվոր» դեղագործական ընկերություն, «Արսեդենտ» ստոմատոլոգիական կենտրոն, «ՀՀ ԳԱԱ Օրգանական և դեղագործական քիմիայի գիտատեխնոլոգիական կենտրոն», «ՏՈՆՈՒՍ ԼԵՍ» դեղատնային ցանց, «ՍԼԱՎ ՄԵԴ» Բժշկական կենտրոն, Արաբկիր տարածքային զբաղվածության կենտրոն, «ԱՔՍԵՊՏ» զբաղվածության կենտրոն, «ՏԱՆԳԵՐ» աշխատաքնի տեղավորման կենտրոն: Տեղական կառույցները հիմնականում ծառայում են որպես գործնական պարապմունքների և պրակտիկաների անցկացման բազաներ, գրադարաններ են, ինչպես նաև զբաղվածության գործակալություններ: Այս կազմակերպություններից աշխատակիցներից նաև դասավանդում են քոլեջում: Փորձագիտական առցանց այցի ընթացքում պարզ դարձավ, որ զբաղվածության գործակալության հետ համագործակցության արդյունքում քոլեջի որոշ շրջանավարտների տեղավորել են աշխատանքի:

Քոլեջը միջազգային համագործակցության նպատակով կնքել է պայմանագրեր տարբեր արտասահմանյան հաստատությունների հետ.

Կնքված պայմանագրերի շրջանակներում քոլեջը արձանագրել է հետևյալ արդյունքները.

- Լատվիայի Դաուգավպիլս քաղաքի բժշկական քոլեջի 2 ուսանողներ 3 ամիս իրենց ուսումը շարունակել են Մեհրաբյանի անվան բժշկական քոլեջում, իսկ նրանց քոլեջի դասախոսները և տնօրենը Երևանում, փորձի փոխանակման նպատակով, ծանոթացել են ՄՈՒՀ-ի գործունեությանը: Նույն գործընթացը կատարվել է քոլեջի 2 ուսանողների ու 2 աշխատակիցների կողմից Դաուգավպիլս քաղաքի բժշկական քոլեջում 2017, 2018թթ

Պետք է փաստել սակայն, որ ուսանողների և դասախոսների փոխայցելությունները այսքանով կանգ են առել և շարունակական չեն:

- Առաջարկություն է եղել «Բուժական կոսմետոլոգիա», «Դայակների պատրաստում» մասնագիտությունների ներդրման նպատակով փոխանակվել ուսումնական պլաններով և մոդուլային ծրագրերով՝ Լատվիայի Դաուգավպիլս քաղաքի բժշկական քոլեջի հետ առցանց այցի ժամանակ: Այդուհանդերձ, Դայակների պատրաստում կրթական ծրագիրը չի ներդրվել քոլեջում: Առցանց այցից պարզ դարձավ, «Բուժական կոսմետոլոգիա» ՄԿԾ-ի շրջանակներում ուս. պլանների և մոդուլային ծրագրերի փոխանակումներ ևս տեղի չեն ունեցել:
- 2006 թվականից հրատարակվել է Մեհրաբյանի անվան բժշկական ինստիտուտի միջազգային բժշկական տեղեկագիրը: Նրանում տեղ են գտնում քոլեջի, ինչպես նաև համգործակից քոլեջների դասախոսների հոդվածները: Հրատարակումը, 2010թ. դադարից հետո, վերսկսվել է 2018թ.-ին:

  Քոլեջի դասախոսական կազմի և ուսանողների համահեղինակությամբ հոդվածներ են տպագրվել ինչպես Մեհրաբյանի անվան բժշկական ինստիտուտի միջազգային բժշկական տեղեկագրում, այնպես էլ ՌԴ-ի թիվ 6 բժշկական քոլեջի, Դաուգավպիլս քաղաքի բժշկական քոլեջի գիտաբժշկական ժողովածուներում: Փորձագիտական առցանց այցից պարզ դարձավ նաև, որ այս գործընթացը չի կրում պարբերական բնույթ:

- Կատարվել է «Ատամնատեխնիկական գործ» մասնագիտության բենչմարքինգ Ուտենայի բժշկական քոլեջի և Մեհրաբյանի անվան բժշկական քոլեջի միջև: Ուտենայի բժշկական քոլեջից ստացել են մասնագիտության ծրագիրը: Համեմատության արդյունքում ամփոփիչ ատեստավորման մեջ ներդրվել է գործնական բաղադրիչը և ուսանողը քննությանը ներկայացնում է իր իրականացրած աշխատանքները: Իրականացվել է «Քույրական գործ» մասնագիտության բենչմարքինգ 3 տարբեր քոլեջների հետ, որի արդյունքում գրանցվել են որոշակի տարբերություններ մոդուլների ժամաքանակների և նախաավարտական պրակտիկայի տևողության մեջ: Այդ առումով, սակայն որևէ փոփոխություն «Քույրական գործ» մասնագիտության ուսումնական պլանում և մոդուլային ծրագրերում չեն առաջարկվել:

Ներկայումս հրամայական է դարձել կրեդիտային համակարգի ներդրումը քոլեջի ուսումնական գործընթացում, քանի որ բենչմարքինգի իրականացման համար այն դառնում է պարտադիր միջազգային գործընկերների հետ համագործակցության շրջանակներում և նախատեսվում են աշխատանքներ այդ ուղղությամբ:

Քոլեջն ունի նախապատրաստական բաժին, որտեղ կարող են ընդունվել ինչպես ՀՀ քաղաքացիներ, այնպես էլ օտարերկրյա քաղաքացիներ: Այս ուսումնական տարում դեռևս ուսանողներ չունեն՝ կապված կորոնավիրուսային վարակի և տարբեր ոլորտներում առկա սահմանափակումների հետ: Օտարերկրյա ուսանողների համար քոլեջում կազմակերպվում են նախապատրաստական կուրսեր, որտեղ նրանց ուսուցանում են հայոց լեզու:

Փորձագիտական առցանց այցից պարզ դարձավ, որ քոլեջի ուսանողների շրջանում օտար լեզվի /անգլերեն/ իմացությունը բավականին ցածր է: Այս մասին է փաստում այն, որ ուսանողները չեն օգտվում օտարալեզու գրականությունից, օտար լեզվի /անգլերեն/ չիմացության պատճառով: Փորձագիտական առցանց այցի ժամանակ պարզ դարձավ նաև, որ դասախոսական անձնակազմի օտար լեզվի /անգլերեն/ իմացությաան մակարդակը ևս բարձր չէ. Դասվանդել օտար լեզվով մասնագիտական առարկաները դասխոսները չեն կարողանա:

Միևնույն ժամանակ քոլեջում իրականացվել են անգլերեն լեզվի բազային գիտելիքների ուսուցման որոշակի վերապատրաստումներ: Այդուհանդերձ, վերապատրաստումներից առաջ ՊԴ կազմի անգելերի իմացության մակարդակը չի գնահատվել և վերապատրաստումներին դասախոսների մասնակցությունը եղել է կամավոր: Վերապատրաստմանը մասնակցել են քոլեջի ՊԴ կազմից 2 դասախոս:

Առցանց այցի ընթացքում պարզվեց, որ բացի քոլեջում դասավանդվող անգլերեն և ռուսաց լեզուների պարտադիր ժամաքանակներից, լրացուցիչ պարապմունքներ օտար լեզուներից ուսանողների համար չեն կազմակերպում:

Դատողություններ: Փորձագիտական խումբը դրական է համարում քոլեջի ջանքերն ուղղված միջազգայնացման հիմքերի ստեղծմանը ու արտաքին կապերի զարգացմանը: Քոլեջի ռազմավարական ծրագրով նպատակադրվել է ընդլայնել միջազգային և արտաքին գործունեությունը՝ խնդիրներ դնելով բարձրացնել քոլեջի ճանաչելիությունը, ընդլայնել համագործակցությունների ձևաչափը՝ ունենալով օտարերկրյա ուսանողներ, նպաստելով ուսանողների և դասախոսական կազմի շարժունությանը, խթանելով շահակիցների մասնակցությունը միջազգային ծրագրերին: Այս նպատակների իրագործման համար քոլեջը մշակել է կանոնակորգող փաստաթղթեր, նշանակել է պատասխանատու ստորաբաժանում, պայմանագրեր է կնքել միջազգային գործընկերների հետ, քայլեր է ձեռնարկում միջազգային ուսանողների ներգրավման ուղղությամբ: Այս աշխատանքների լիարժեք ու հստակ պլանավորված իրականացումը, մարտահրավերների պարբերաբար արձագանքումը կնպաստեն սահմանված նպատակների իրագործմանը:

Դրական է համարվում քոլեջի կողմից կնքված համագործակցության պայմանագրերի առկայությունը տեղական և միջազգային հաստատությունների և կառույցների հետ: Տեղական կառույցները հիմնականում ծառայում են որպես գործնական պարապմունքների

և պրակտիկաների անցկացման բազաներ, գրադարաններ են, ինչպես նաև զբաղվածության գործակալություններ, որոնք նպաստում են ՄՈՒՀ-ի շրջանավարտներին իրենց մասնագիտությամբ աշխատանքի տեղավորման խնդրի լուծմանը: Այդուհանդերձ, փորձագիտական խումբը գտնում է, որ աշխատաշուկայի պահանջներին համապատասխան մասնագետներ պատրաստելու համար քոլեջը կարիք ունի ամրապնդել և ընդլայնել համագործակցության շրջանակը գործատուների հետ: Ինչը դրականորեն կանդրադառնա մատուցվող կրթության շարունակական բարելավման վրա:

Կարևորվում է Մեհրաբյանի անվան բժշկական ինստիտուտի միջազգային բժշկական տեղեկագրի վերահրատարակումը, որտեղ տեղ են գտնում ինչպես միջազգային և տեղական հեղինակների, այնպես էլ քոլեջի դասախոսների կողմից ուսանողների ներգրավմամբ հոդվածներ, որը կարող է նպաստել միջազգային հանրության հետ սերտ համագործակցությանը և քոլեջի տեսանելիության բարձրացմանը:

Փորձագիտական խումբը դրական է գնահատում քոլեջի բենչմարքինգի իրականացման փորձը, որոնք որոշ դեպքերում դրական արդյունք են տվել, սակայն այդ գործընթացն առավել նպատակային իրականացնելու դեպքում հնարավորություն կստեղծվի դասախոսների ու ուսանողների շարժունության համար:

Փորձագիտական խումբը մտահոգիչ է համարում դրված նպատակների հետ մակտեղ դասախոսական անձնակազմի և ուսանողների մոտ օտար լեզվի իմացության ցածր մակարդակը, որը կխոչընդոտի միջազգայնացմանն ուղղված քոլեջի դրված նպատակների իրագործմանը: Անգլերեն լեզվի իմացության բարձրացումը կնպաստի ինչպես ուսանողների կողմից օտարալեզու արդի գրականության ուսումնասիրմանը, այնպես էլ դասախոսների և ուսանողների միջազգայնացման գործընթացում ներգրավվածության ավելացմանը, շարժունության ակտիվացմանը, դասախոսների կողմից լավ փորձի ուսումնասիրմանը:

Դա կապահովի ֆինանսական լրացուցիչ ներհոսք և կնպաստի քոլեջի զարգացման ծրագրերի և այլ նպատակների իրականացմանը:

Եզրահանգում: Հաշվի առնելով, որ ՄՈՒՀ-ն ունի միջազգայնացմանն ուղղված ձգտումներ, մշակված որոշակի կանոնակարգող փաստաթղթեր, միջազգային աշխատանքների և արտաքին կապերի աշխատանքների համակարգման համար պատասխանատու անձ, կնքվել են որոշակի պայմանագրեր տեղական ու միջազգային կազմակերպությունների հետ, առակ է բենչմարքինգի իրականացման փորձ, փորձագիտական խումբը գտնում է, որ «Մեհրաբյանի անվան բժշկական ինստիտուտ» ՍՊԸ բժշկական քոլեջը համապատասխանում է չափանիշ 9-ի պահանջներին:

Եզրակացություն: Փորձագիտական խումբը «Մեհրաբյանի անվան բժշկական ինստիտուտ» ՍՊԸ բժշկական քոլեջի ինստիտուցիոնալ կարողություններ համապատասխանությունը ՉԱՓԱՆԻՇ 9-ի պահանջներին գնահատում է **բավարար:**

X. ՈՐԱԿԻ ՆԵՐՔԻՆ ԱՊԱՀՈՎՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳ

ՉԱՓԱՆԻՇ: ՄՈՒՀ-ն ունի որակի ապահովման ներքին համակարգ, որը նպաստում է հաստատության բոլոր գործընթացների շարունակական բարելավմանը և որակի մշակույթի ձևավորմանը:

Փաստեր

«ՄԲԻ» ՍՊԸ-ն իր ՄԿԾ-ների որակի և չափանիշների ապահովման համար մշակել է որակի ապահովման քաղաքականություն և դրան համապատասխան ընթացակարգեր: Վերջիններս՝ ըստ Ինքնավերլուծության, ուղղված են ՄՈՒՀ-ի առաքելության և ՌԾ-ով սահմանված նպատակների և խնդիրների իրականացմանը: Քաղաքականության նպատակն է. բարձրացնել ուսումնական, հետազոտական և կառավարման գործընթացների որակը և արդյունավետությունը: Նաև ՄՈՒՀ-ի 2015-2020թթ. ՌԾ-ի զարգացման ռազմավարական խնդիրներից է որակի ապահովման ներքին համակարգի գործունեության արդյունավետության բարձրացումը, որտեղ նախանշված են կատարվելիք քայլերը, սպասվող արդյունքները: Մասնավորապես՝ կարևորվում են ՄՈՒՀ-ի գործունեության հիմնական ոլորտների ինքնագնահատման չափանիշների մշակումը, ՄՈՒՀ-ի կրթական գործունեության մշտադիտարկման և որակի ապահովման համակարգերի կատարելագործումը, պրոֆեսորադասախոսական կազմի մասնագիտական կարողությունները և հմտությունները գնահատող համակարգերի մշակումը, ուսանողների օբյեկտիվ գնահատման չափանիշների, բողոքարկման համակարգի բարելավումը, որակի արտաքին գնահատման և հավատարմագրման գործընթացներին նախապատրաստելը:

Փորձագիտական վերլուծությունները ցույց տվեցին, որ «ՄԲԻ» ՍՊԸ-ի որակի ապահովման գործընթացները սահմանված են ՄՈՒՀ-ի մի շարք փաստաթղթերում («ՄԲԻ» ՍՊԸ որակի ներքին ապահովման համակարգի վերանայման քաղաքականություն, ՄՈՒՀ-ի որակի ապահովման քաղաքականության ձեռնարկ, բենչմարքինգի իրականացման քաղաքականություն և ընթացակարգ): Այդուհանդերձ, վերոնշյալ գործընթացները՝ ըստ ՌԾ-ի կատարողականի գանահատման հիման վրա ներկայացված վելուծության, լիարժեք իրականացված չեն:

Ըստ ինքնավերլուծության՝ ներկայումս ՄՈՒՀ-ը խնդիր է դրել բարելավել որակի ապահովման գործող մեխանիզմներն և գործիքները, մասնավորապես՝ սոցիոլոգիական հարցումները, որակի ապահովման գործընթացների առաջավոր փորձի բենչմարքինգը, դասալսումների գործընթացը: Փորձագիտական խմբի առցանց այցից պարզ դարձավ, որ ուսանողների շրջանում հարցումների անցկացման ընթացակարգը կանոնակարգվել է 2018թ.-ից, և ուսանողների հարցումներից դուրս բերվող խնդիրները ընդամենը վերաբերում են ՄՈՒՀ-ում վերանորոգման աշխատանքների անհրաժեշտությանը, սակայն ուսումնական գործընթացին վերաբերող խնդիրներ դուրս չեն բերվել: Դասախոսների շրջանում անցկացվող հարցումները դեռևս կանոնակարգված չեն, բացի դա՝ խնդիրները փորձում են վեր հանել զրույցների միջոցով և վերհանված խնդիրների վերլուծությունների օրինակներ էլ առկա չեն: ՈԱ գործընթացների բենչմարքինգի օրինակները տեսանելի չեն: Կազմակերպված դասալսումների արդյունքում վերհանված խնդիրները չեն վերլուծվել և չեն դրվել ՄԿԾ-ների բարելավման հիմքում: Բացի դա, ամփոփիչ ատեստավորման հանձնաժողովների կարծիքների պարտադիր և կանոնակարգված քննարկման դեպքեր առկա չեն:

ՄՈՒՀ-ում ՈԱ համակարգը ներդրվել է 2018թ.-ից, որակի շրջափուլերից քոլեջը գտնվում է անցումային շրջանի ավարտման փուլում՝ դեռևս պլանավորում-իրականացում փուլն է /ՄՈՒՀ-գործատու համագործակցության որակի փոխադարձ գնահատման համակարգի ներդրում, հարցումների իրականացում արտաքին շահակիցների հետ, ՄՈՒՀ-ի կրթական գործունեության մշտադիտարկման և ՈԱ համակարգի կատարելագործում, հարցումներ

ուսանողների և դասախոսների շրջանում, արտաքին գնահատում/ գնահատման և բարելավման գործընթացները չեն մեկնարկել: ՄՈՒՀ-ն ունի ՈԱ կենտրոնի համակարգման աշխատանքների 2019-2020 ուս. տարիների կարճաժամկետ ռազմավարական պլան, ուր ներկայացված է աշխատանքի բովանդակությունը, ժամկետը, պատասխանատուները: Բարելավման ենթակա գործընթացներն առանձնացված չեն և առկա չէ դրանց պլանավորումը: Փորձագիտական խմբի առցանց այցից պարզ դարձավ, որ ՄՈՒՀ-ի փաստաթղթերում ՈԱ գործընթացները չեն առաջնորդվում ՊԻԲԳ շրջափուլով:

ՄՈՒՀ-ի ՈԱ կենտրոնը ստեղծվել է 2014թ.-ին: Սկզբում այն գործել է «Պրակտիկայի կազմակերպման, կարիերայի և արտաքին կապերի միջազգայնացման կենտրոն» ստորաբաժանման մեջ: Այնուհետև, որպես ՈԱ կենտրոն, 2018թ.-ից գործում է առանձին: Ըստ ՄՈՒՀ-ի կազմակերպական կառուցվածքի՝ ՈԱ կենտրոնն իր գործառույթներով պատասխանատու է Հիմնադիրների խորհրդին, մինչ այդ պատասխանատու է եղել ՄՈՒՀ-ի տնօրենին: Այստեղ հարկ է նշել, որ տնօրենը ևս Հիմնադիրների խորհրդի անդամ է: Ըստ ՄՈՒՀ-ի Որակի ապահովման ձեռնարկի՝ ՄՈՒՀ-ի տարեկան հաշվետվության շրջանակներում Հիմնադիրների խորհուրդը քննարկում է ՈԱ գործընթացների արդյունքները և առաջադրում է բարելավման խնդիրներ: Առցանց այցից պարզ դարձավ, սակայն, որ վերոնշյալ գործընթացների արդյունքների օրինակներ արձանագրված չեն:

ՄՈՒՀ-ում գործում է ՈԱ ներքին կենտրոն երկու պատասխանատուներով՝ ՈԱ կենտրոնի ղեկավար և աշխատակից, որոնք նաև քոլեջի դասախոսական կազմի ներկայացուցիչներ են և դասավանդում են քոլեջում: Ստորաբաժանման աշխատանքներին աջակցում են նաև որակի ապահովման համակարգի մեջ ընդգրկված կառույցներն ու ստորաբաժանումները /Պրակտիկայի կազմակերպման, աշխատանքի տեղավորման և արտաքին կապերի, միջազգայնացման կենտրոն, ցիկլային հանձնաժողովների նախագահներ, ցիկլային հանձնաժողովներ, կուրսղեկներ, ՌԻԽ/: 2019-2020 ուս. տարվա սեպտեմբերից բարձրացվել են ՈԱ կենտրոնի աշխատակիցների աշխատավարձը, նաև երկու դասախոսներ, որոնք անմիջականորեն օգնում են կենտրոնի աշխատանքներին, ստանում են խրախուսման վճար: 2018թ.-ից ՈԱ կենտրոնի աշխատանքներին մասնակցում են կամավորներ /տարբեր ուսումնական հաստատություններից ուսանողներ/: Աշխատակիցների համար որակի կենտրոնն ունի առանձին աշխատասենյակ՝ կահավորմամբ և տեխնիկայով: Փորձագիտական խմբի առցանց այցից պարզ դարձավ, որ ՈԱ կենտրոնի պատասխանատուն վերապատրաստուն է անցել ՈԱԱԿ-ում:

ՈԱ գործընթացներում ներքին շահակիցներից ներգրավված են Ինքնավերլուծություն իրականացրած թիմը: Փորձագիտական խմբի առցանց այցից պարզ դարձավ՝ դասախոսներն ու ուսանողները մասնակցում են հարցումներին և հարցազրույցներին, սակայն հարցումների մշակմանը նրանք չեն ներգարվվում: Ըստ քոլեջի ինքնավերլուծության, ՄՈՒՀ-ը պարբերաբար հանդես է գալիս հաշվետվությամբ Մնջոյանի անվան նուրբ օրգանական քիմիայի և Հ. Բունիաթյանի անվան կենսաքիմիայի ինստիտուտի, «Լիքվոր» դեղագործական ընկերության, «Արսեդենտ» ստոմատոլոգիական կենտրոնի և այլ գործընկեր կազմակերպություններից հրավիրված մասնագետների, ինչպես նաև ՄՈՒՀ-ի կոլեկտիվի ու հրավիրված շրջանավարտների առջև /տնօրենի տարեկան հաշվետվությունների տեսքով/: Այդուհանդերձ, քոլեջում ՈԱ գործընթացներում արտաքին շահակիցների ներգրավվածությունը, ինչպես նաև ներգրավվածության արդյունքների մասին հավաստող փաստեր առկա չեն:

ՈԱ կենտրոնի կողմից ուսանողների հարցումների միջոցով իրականացվել է դասախոսի և դասընթացի գնահատում, կրթական ռեսուրսների և կրթական միջավայրի գնահատում: Փորձագիտական վերլուծությունները ցույց տվեցին, որ ուսանողների կողմից կրթական գործընթացի գնահատման հարցաթերթիկներից մեկը պարունակում է ընդամենը 10

հարց, մյուսը՝ 5 հարց։ Այդ հարցերը ընդհանրական են, չեն վերաբերում դասախոսի մասնագիտական որակներին, դասընթացի արդյունավետությանը և խնդիրներ բացահայտող չեն։ Ինչ վերաբերում է գնահատականներին, ապա դրանք նույնական բարձր են, ուր խնդիրները երևան չեն գալիս։ Այդուհանդերձ, առցանց այցից պարզ դարձավ, ՈԱ կենտրոնը դեռևս չի պլանավորել վերափոխել հարցերի բնույթն ու բովանդակությունը, բացի այդ էլ՝ հարցումների արդյունքներով փոփոխություններ դեռևս չեն կատարվել։ «ՄԲԻ» ՍՊԸ –ն սահմանված ինստիտուցիոնալ հավատարմագրման չափանիշներով ներկայացրել է Ինքնավերլուծություն և փորձել է ապահովել համապատասխան հիմքեր որակի ապահովման արտաքին գնահատման գործընթացների համար։ Ինքնավերլուծությունը կատարվել է 10 չափանիշներով, լրացվել է ՈԱԱԿ-ի էլեկտրոնային հարցաշարը։ Փորձագիտական խմբի առցանց այցից պարզվեց՝ Ինքնավերլուծության խմբի աշխատանքների պատասխանատվությունների բաշխումը հստակ համակարգված չէր։ Փորձագիտական վերլուծությունները փաստում են, որ Ինքնավերլուծությունը հիմնականում նկարագրողական է, վերլուծությունները հիմնավորված չեն հստակ տվյալներով, այդուհանդերձ պարունակում են որոշ վերլուծական տարրեր։

Ըստ Ինքնավերլուծության՝ ՄՈՒՀ-ի որակի ապահովման ներքին համակարգն ապահովում է ՄՈՒՀ-ի գործունեության հրապարակայնությունն ու թափանցիկությունը հետևյալ միջոցներով՝ գործընկեր կազմակերպությունների ներկայացուցիչների մասնակցությունը մանակավարժական խորհրդի նիստերին, շրջանավարտների, դասախոսական կազմի և ուսանողության հետ հանդիպումներ և քննարկումներ, հեռուստատեսությամբ, ռադիոյով ՄՈՒՀ-ի սեփական գովազդային նյութերի հրապարակումը, ՄՈՒՀ-ի ֆեյսբուքյան էջում ներքին և արտաքին շահակիցների կարծիքն ու առաջարկությունը արտահայտելու հնարավորություն և այլն։ Փորձագիտական խմբի առցանց այցից պարզ դարձավ, որ կառավարչական որոշումների կայացմանը ներքին և արտաքին շահակիցների գործուն մասնակցությունն առկա չէ, փորձագիտական առցանց այցը ներառող ժամանակահատվածում կայքէջում ներկայացված են առանձին ՄԿԾ-ների բնութագրերը, սակայն կրթական ծրագրերի բովանդակությունը ներկայացված չէ, առկա չէ տեղեկատվություն շրջանավարտների վերաբերյալ, քոլեջի համապատասխան հաշվետվությունները ևս առկա չեն։ Բացի դա, կայքէջում առկա չեն ՈԱ փաստաթղթերը, անցկացված հարցումների վերլուծությունները, բարելավման օրինակները։

Դատողություններ: Փորձագիտական խումբը դրական է համարում, որ ՄՈՒՀ-ը հիմքեր է ստեղծում որակի ապահովման գործընթացների համար, որը կարող է նպաստել որակի մշակույթի ստեղծման ու տարածման համար։ Թեև ՄՈՒՀ-ի որակի ապահովման քաղաքականությունը սահմանված է ՄՈՒՀ-ի մի շարք փաստաթղթերում, այդուհանդերձ, հիմնարար և բավարար տվյալների բացակայության պատճառով խնդիրները բացահայտելու արդյունավետ մեխանիզմները չեն գործում, ինչը կարող է խոչընդոտել ընդհանուր խնդիրների վերհանմանն ու համարժեք լուծումների առաջադրմանը։ Մտահոգիչ է, որ ըստ ՌԾ-ի գնահատման ցուցիչների հիման վրա ներկայացված վերլուծության, լիարժեք չեն իրականացվել ՌԾ-ով սահմանված ՈԱ ներքին համակարգի գործունեության արդյունավետության բարձրացման գործընթացները՝ վտանգելով ՈԱ գործընթացի արդյունավետությունը։

Չնայած ՄՈՒՀ-ը խնդիր է դրել բարելավել հարցումները, դասալսումների գործընթացը, իրականացնել որակի ապահովման գործընթացների առաջավոր փորձի բենչմարքինգ, այդուհանդերձ, մտահոգիչ է, որ ուսանողների շրջանում դուրս բերվող խնդիրները բովանդակային առումով չեն վերաբերում կրթական գործընթացներին, դասախոսների շրջանում խնդիրները փորձում են վեր հանել զրույցների միջոցով և վերհանված խնդիրների օրինակներ էլ առկա չեն։ Քանի որ ՈԱ գործընթացների բենչմարքինգի օրինակներ առկա չեն, դասալսումների արդյունքում վերհանված խնդիրները համարժեք լուծումներով չեն դրվել

ՄԿԾ-ների բարելավման հիմքում, ՄՈՒՀ-ի ՌԾ-ով առաջադրված ՈԱ ներքին համակարգի գործունեության արդյունավետության բարձրացման քայլերից սպասվող արդյունքների վերաբերյալ ամփոփումներ և գնահատականներ ևս առկա չեն, ուստի վտանգվում է ՄՈՒՀ-ի ՈԱ քաղաքականության արդյունավետությունը: ՈԱ գործընթացների հստակ պլանավորումները կնպաստեն սահմանված նպատակների իրագործմանը:

Քանի որ ՄՈՒՀ-ում որակի ապահովման համակարգը ներդրվել է 2018թ.-ից, ՈԱ մշակույթի զարգացման գործընթացները քոլեջում գտնվում են անցումային փուլում՝ ներառելով պլանավորման և իրականացման փուլերը և այս առումով շրջափուլն ավարտված չէ, ուստի համապատասխան գնահատականներն ու դրանց հիման վրա կազմված բարելավումները հստակ տեսանելի չեն: Բացի դա, արդեն իսկ կատարված գործընթացների առումով չկան վերլուծություններ, բարելավման նախնական մոտեցումներ: Արդյունքում որակի ապահովման համակարգի մշտադիտարկման մեխանիզմները չեն գործում՝ խոչընդոտելով ՈԱ կառավարման գործընթացի արդյունավետությունը:

Չնայած ՈԱ կենտրոնի գործունեությունը առավել թափանցիկ և անկախ դարձնելու նպատակով ՄՈՒՀ-ի կազմակերպական կառուցվածքում կատարվել է փոփոխություն և ՈԱ կենտրոնը ներկայումս տնօրենի փոխարեն իր գործառույթներով պատասխանատու է Հիմնադիրների խորհրդին, սակայն մտահոգիչ է, որ տնօրենը ևս Հիմնադիրների խորհրդի անդամ է: Հիմնադիրների խորհրդի անդամ են նաև ՄՈՒՀ-ի վարչական աշխատակիցները: ՈԱ կենտրոնի հաշվետվությունները, որ պետք է ներկայացվեն Հիմնադիրների խորհրդին, վերաբերում են հենց իրենց ղեկավարած ստորաբաժանումներին: Արդյունքում կարող են վտանգվել ինչպես իրականացված կառուցվածքային փոփոխության արդյունավետությունը, այնպես էլ իրական խնդիրների վերհանման և լուծման գործընթացները:

Թեև ՄՈՒՀ-ի ներքին և արտաքին շահակիցները որոշակի առումներով ներգրավված են ՈԱ գործընթացներում, այդուհանդերձ, տեսանելի չեն նրանց կողմից կատարված գործնական առաջարկությունները, հետևաբար, նաև առկա չեն այդ առաջարկությունների կիրառումը և դրանց գնահատականները: Այն խոչընդոտում է ՄՈՒՀ-ի առաջընթացին և կրթական գործընթացներին արտաքին ու ներքին շահակիցների մասնակցությանը :

Չնայած որ ՄՈՒՀ-ում իրականացվում են հարցումներ, այդուհանդերձ հարցումներով ամփոփված նույնական գնահատականները թույլ չեն տալիս խնդիրներ դուրս բերել: Այդքանով հանդերձ, ՈԱ կենտրոնը դեռևս չի պլանավորում վերափոխել հարցերի բովանդակությունը: Բացի դա, հարցումների արդյունքները հիմք չեն որոշումների կայացման համար, ինչը բացասաբար է անդրադառնում ՈԱ գործընթացների և վարչարարության արդյունավետության վրա:

Թեև արտաքին գնահատման գործընթացների համար ՄՈՒՀ-ն իրականացրել է ինքնավերլուծություն, առկա են համապատասխան հիմքերը, սակայն փորձագիտական ուսումնասիրությունները ցույց տվեցին, որ, ընդհանուր առմամբ ինքնավերլուծությունը նկարագրական բնույթ է կրում և բացակայում են խնդիրների վեր հանման և գնահատման պատճառահետևանքային կապերը: Քանի որ փորձագիտական առցանց այցի ընթացքում պարզվեց, որ ԻՎ խմբի աշխատանքների պատասխանատվությունների բաշխումը հստակ համակարգված չէր, ուստի ՄՈՒՀ-ի որակի ապահովման ներքին համակարգն արդյունավետորեն չի աշխատել արտաքին գնահատման համատեքստում: Վերոնշյալը կարող է վտանգել ՄՈՒՀ-ում հետագա ներքին և արտաքին գնահատումների արդյունավետությանը և տվյալների հավաքագրումը:

Փորձաքննությունը ցույց տվեց, որ ՄՈՒՀ-ի գործընկեր կազմակերպությունների ներկայացուցիչները մասնակցում են մանկավարժական խորհրդի նիստերին, շրջանավարտների, դասախոսական կազմի և ուսանողության հետ կազմակերպում է հանդիպումներ և քննարկումներ, այդուհանդերձ ՈԱ գործընթացներում ներդրված չեն ներքին և արտաքին շահակիցների կարծիքներն ու առաջարկությունները, դրանք միայն պլանավորման փուլում են: Բացի դա, կայքէջում ներկայացված չէ կրթական ծրագրերի բովանդակությունը, բացակայում են քոլեջի հաշվետվությունները, վերլուծության արդյունքները և տեղեկատվությունը շրջանավարտների վերաբերյալ: Արդյունքում վտանգված են ՈԱ քաղաքականության արդյունավետությունը և ՄՈՒՀ-ի գործունեության թափանցիկությունը:

Եզրահանգում: Հաշվի առնելով, որ «ՄԲԻ» ՍՊԸ-ում ՈԱ գործընթացները ներդրման փուլում են, ներքին և արտաքին շահակիցները ներկայումս չունեն իրենց գործուն մասնակցությունը ՈԱ գործընթացներում, իրենց կողմից տրված առաջարկությունները դեռևս պլանավորման փուլում են, ՈԱ ապահովման համակարգի վերանայման մեխանիզմները հստակ չեն գործում, ամփոփված գնահատականներ առկա չեն, որակական վերլուծությունները բացակայում են, բարելավման ուղիները հստակ առանձնացված չեն, տվյալների հավաքագրման մեխանիզմները թերի են, փորձագիտական խումբը գտնում է, որ «Մեհրաբյանի անվան բժշկական ինստիտուտ» ՍՊԸ բժշկական քոլեջը չի համապատասխանում Չափանիշ 10-ի պահանջներին:

Եզրակացություն: Փորձագիտական խումբը «Մեհրաբյանի անվան բժշկական ինստիտուտ» ՍՊԸ բժշկական քոլեջի ինստիտուցիոնալ կարողությունների համապատասխանությունը ՉԱՓԱՆԻՇ 10-ի պահանջներին գնահատում է **անբավարար:**

ԳՆԱՀԱՏԱԿԱՆՆԵՐԸ ԸՍՏ ՀԱՎԱՏԱՐՄԱԳՐՄԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐԻ

ՉԱՓԱՆԻՇ	*ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ*
1. Առաքելություն և նպատակներ	Բավարարում է
2. Կառավարում և վարչարարություն	Չի բավարարում
3.Մասնագիտության կրթական ծրագրեր	Բավարարում է
4. Ուսանողներ	Բավարարում է
5.Պրոֆեսորադասախոսական և ուսումնաօժանդակ կազմ	Չի բավարարում
6. Հետազոտություն և զարգացում	Չի բավարարում
7. Ենթակառուցվածք և ռեսուրսներ	Բավարարում է
8.Հասարակական պատասխանատվություն	Բավարարում է
9. Արտաքին կապեր և միջազգայնացում	Բավարարում է
10. Որակի ներքին ապահովման համակարգ	Չի բավարարում

Արմենուհի Մհերյան

12 փետրվար 2021թ.

ՀԱՎԵԼՎԱԾՆԵՐ

ՀԱՎԵԼՎԱԾ 1. ՓՈՐՁԱԳԻՏԱԿԱՆ ԽՄԲԻ ԱՆԴԱՄՆԵՐԻ ԻՆՔՆԱԿԵՆՍԱԳՐԱԿԱՆՆԵՐ

Արմենուհի Միերյան. 2000թ. ավարտել է Երևանի պետական տնտեսագիտական ինստիտուտի ֆինանսահաշվային ֆակուլտետի «ֆինանսներ և վարկ» բաժինը, 2000-2004թթ. «Ֆինանսներ և վարկ» ամբիոնի ասպիրանտուրա: 2006թ.-ից Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարանի «Ֆինանսներ» ամբիոնի դասախոս, տնտեսագիտության թեկնածու, դոցենտ: 2006թ. պաշտպանել է ատենախոսությունը՝ «Գործառնական ֆինանսական կառավարումը արտադրական առևտրային կազմակերպություններում/ՀՀ մշակող արդյունաբերության նյութերով/» թեմայով: Մասնակցել է հետևյալ վերապատրաստումներին, դասընթացներին և ծրագրերին՝ 2019թ. Կրթական հետազոտությունների և խորհրդատվությունների կենտրոն՝ Տվյալների մշակումը, վիճակագրական վերլուծությունը և ներկայացումը SPSS վիճակագրական փաթեթի միջոցով. 2019թ. ICARE-Application of Econometrik Models Using STATA for Addressing Economik Questions. 2016թ.Training on capacity building for implementing bologna reforms. 2016թ. ՀՊՏՀ՝ «Տեղեկատվական համակարգերի տիրապետում և կատարելագործում», «Ֆինանսական հաշվառում, վերլուծություն և աուդիտ», «Տնտեսամաթեմատիկական մեթոդների և մոդելների յուրացում և կիրառում», դասընթացներ. 2009թ. ՀՊՏՀ՝ ՀՊՏՀ դասախոսների վերապատրաստման դասընթաց:

Շուշանիկ Աֆրիկյան. 2001թ-ի ավարտել է ԵՊԲՀ դեղագիտական ֆակուլտետ ԵՊԲՀ ինտերնատուրա: 2012 թ-ից Դեղագիտական ֆակուլտետի մագիստրատուրայի և բակալավրիատի ամփոփիչ ատեստավորման հանձնաժողովի անդամ է: 2017-առ այսօր ԵՊԲՀ Համակարգչային քննությունների կազմակերպման բաժնի պետ է (ներքին համատեղությամբ): 2015թ. Նոյեմբերին ներկայացրել է հետևյալ գիտական աշխատանքը «Նոոպեպտի ազդեցությունը ուղեղային արյան շրջանառության և իշեմիկ խանգարումների հետևանքով զարգացող վարքային փոփոխությունների վրա» թեմայով թեկնածուական ատենախոսություն պաշպանություն: 2016թ. Փետրվարին ստացել է դեղագործական գիտությունների թեկնածուի գիտական աստիճան: 2007 առ այսօր տպագրված աշխատանքների թիվը 13 է, այդ թվում ՝ 6 թեզիս, 5 հոդված, 2 ուսումնամեթոդական ձեռնարկ:

Վարդուհի Ավետիսյան. 1982 թվականին ավարտել է Երևանի պետական բժշկական ինստիտուտի Բուժական գործ ֆակուլտետը՝ ստացել Բուժեղ բժշկի որակավորում: 1974-1976թթ-ին աշխատել է Երևանի պետական բժշկական ինստիտուտում, որպես՝ բիոքիմիայի ամբիոնի լաբարնտ, 1983թվականին Երևանի Հանրապետական կլինիկական հիվանդանոցի Ինտերնատուրան ավարտելով ստացել է թերապևտի որակավորում: Մինչ 1993թվականն աշխատել է Երևանի №8 բուժ. միավորման դեռահասների կաբինետի բժիշկ-թերապևտ: Աշխատել է Երևանի Էրեբունի¦ պետական բժշկական քոլեջում՝ Դասավանդել համատեղության կարգով, որպես Ֆարմակոլոգիա առարկայի դասատու: 2002թ.սեպտեմբերից աշխատել է որպես ուսումնամեթոդական աշխատանքների գծով փոխտնօրեն Վերակակազմավորված Երևանի հայ-ամերիկյան §Էրեբունի¦պետական բժշկական քոլեջ¦ՊՈԱԿ-ում: 2015թ.առ այսօր աշխատում է ՀՀ ԿԳՄՄՆ Երևանի հայ-ամերիկյան §Էրեբունի¦պետական բժշկական քոլեջ ՊՈԱԿ-ում որպես ուսումնական աշխատանքների գծով տնօրենի տեղակալ:

Լիլիթ Մկրտչյան. 2017 թվականին ավարտել է Երևանի պետական Հումանիտար քոլեջի Թարգմանություն և գործավարություն կրթական ծրագիրը: Նույն տարում ընդունվել է Հայաստանի ֆիզիկական կուլտուրայի և սպորտի պետական ինսիտուտի Սպորտային մանկավարժություն և կառավարում (Գեղարվեստական մարմնամարզություն) բաժին:

ՀԱՎԵԼՎԱԾ 2. ՓՈՐՁԱԳԻՏԱԿԱՆ ԱՌՑԱՆՑ ԱՅՑԻ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑԸ

09.11.2020թ.-12.11.2020թ.

	09.11.2020թ	*Մեկնարկ*	*Ավարտ*	*Տևողություն*	*Մուտքային տվյալներ*
1.	Հանդիպում քոլեջի տնօրենի հետ	9:30	10:30	60 րոպե	**Meeting ID:** 827 2940 0189 **Password:** 585821
2.	Հանդիպում քոլեջի փոխտնօրենի հետ	11:00	11:50	50 րոպե	**Meeting ID:** 899 4724 3864 **Password:** 537543
3.	Հանդիպում ինքնավերլուծությունն իրականացրած աշխատանքային խմբի հետ	12:35	13:25	50 րոպե	**Meeting ID:** 834 0177 4051 **Password:** 606323
4.	Ընդմիջում, փորձագիտական խմբի քննարկումներ	13:45	14:45	60 րոպե	**Meeting ID:**875 4500 7712 **Password:** 792209
5.	Հանդիպում քոլեջի շրջանավարտների ներկայացուցիչների հետ (8-10 հոգի)	15:00	16:00	60 րոպե	**Meeting ID:** 856 9480 9117 **Password:**953019
6.	Փաստաթղթերի ուսումնասիրություն, փորձագիտական խմբի փակ հանդիպում	16:30	18:30	120 րոպե	**Meeting ID:** 864 7966 9845 **Password:** 888043

	10.11.2020թ	*Մեկնարկ*	*Ավարտ*	*Տևողություն*	*Մուտքային տվյալներ*
1.	Հանդիպում ցիկլային-առարկայական հանձնաժողովների նախագահների հետ /ներառյալ ինքնավերլուծությունում ներկայացված երեք ՄԿԾ-ներ պատասխանատուները/	9:30	10:30	60 րոպե	**Meeting ID:** 847 8209 7054 **Password:**912600
2.	Հանդիպում գործատուների ներկայացուցիչների հետ (8-10 հոգի)	11:00	12:00	60 րոպե	**Meeting ID:**830 3095 8921 **Password:** 917902
3.	Ընդմիջում, փորձագիտական խմբի քննարկումներ	12:30	13:30	60 րոպե	**Meeting ID:**818 5292 0768

					Password:030785
4.	Հանդիպում դասախոսական կազմի ներկայացուցիչների հետ (ներառյալ 3 ՄԿԾ-ները)	13:45	14:45	60 րոպե	**Meeting ID:** 827 3902 6323 **Password:** 962108
5.	Հանդիպում ուսանողական խորհրդի անդամների հետ	15:00	15:40	40 րոպե	**Meeting ID:**843 6605 1201 **Password:** 733733
6.	Հանդիպում ուսանողների ներկայացուցիչների հետ (10-12 հոգի)	16:25	17:25	60 րոպե	**Meeting ID:**833 8862 8475 **Password:** 000903
7.	Փաստաթղթերի ուսումնասիրություն, փորձագիտական խմբի փակ հանդիպում	18:00	19:00	60 րոպե	**Meeting ID:** 843 4818 1244 **Password:** 891541

	11.11.2020թ.			*Մեկնարկ*	*Ավարտ*	*Տևողություն*	
1.	Հանդիպում հաստատության ստորաբաժանումների ներկայացուցիչների հետ			9:30	10:30	60 րոպե	**Meeting ID:** 849 5017 8534 **Password:** 384450
2.	Զուգահեռ հանդիպում. Դեղագործություն ՄԿԾ պատասխանատուների հետ,	Քույրական գործ ՄԿԾ պատասխանատուների հետ,	Բուժական կոսմետոլոգիա ՄԿԾ պատասխանատուների հետ,	11:15	12:35	50 րոպե	**Meeting ID:** 879 7590 3382 **Password:** 226041
3.	Ընդմիջում, փորձագիտական խմբի քննարկումներ			13:00	14:00	60 րոպե	**Meeting ID:**895 1606 3691 **Password:**138428
4.	Զուգահեռ հանդիպում. Դեղագործություն ՄԿԾ դասախոսների ներկայացուցիչների հետ (8-10 հոգի)	Քույրական գործ ՄԿԾ դասախոսների ներկայացուցիչների հետ (8-10 հոգի)	Բուժական կոսմետոլոգիա ՄԿԾ դասախոսների ներկայացուցիչների հետ (8-10 հոգի)	14:15	15:15	60 րոպե	**Meeting ID:** 894 9376 5852 **Password:** 449620

5.	Զուգահեռ հանդիպում. ՄԿԾ ուսանողների հետ (8-10 հոգի)	Քույրական գործ ՄԿԾ ուսանողների հետ (8-10 հոգի)	Բուժական կոսմետոլոգիա ՄԿԾ ուսանողների հետ (8-10 հոգի)	16:00	17:00	60 րոպե	**Meeting ID:** 845 3331 7707 **Password:** 443085
6.	Փորձագիտական խմբի փակ հանդիպում և փաստաթղթերի ուսումնասիրություն			17:45	19:00	75 րոպե	**Meeting ID:** 895 6483 6565 **Password:** 808274

	12.11.2020թ.	*Մեկնարկ*	*Ավարտ*	*Տևողություն*	
1.	Հանդիպում որակի ապահովման պատասխանատուների հետ	9:30	10:30	60 րոպե	**Meeting ID:** 822 2290 1367 **Password:** 392497
2.	Բաց հանդիպում փորձագիտական խմբի հետ	11:00	11:40	40 րոպե	**Meeting ID:** 849 0600 1614 **Password:** 961261
3	Հանդիպում փորձագիտական խմբի կողմից ընտրված կազմի հետ	12:20	13:20	60 րոպե	**Meeting ID:** 835 8951 7065 **Password:** 087560
4.	Ընդմիջում, փորձագիտական խմբի քննարկումներ	13:30	14:30	60 րոպե	**Meeting ID:** 811 9590 0285 **Password:** 375661
5.	Հանդիպում փորձագիտական խմբի կողմից ընտրված կազմի հետ	15:00	16:00	60 րոպե	**Meeting ID:** 851 7262 5299 **Password:** 580661
6.	Փորձագիտական խմբի փակ հանդիպում	15: 30	17: 00	90 րոպե	**Meeting ID:** 828 6955 4021 **Password:** 722619
7.	Հանդիպում ՄՈՒՀ-ի ղեկավար կազմի հետ	17:30	18:00	30 րոպե	**Meeting ID:** 844 0879 6935 **Password:** 047230

ՀԱՎԵԼՎԱԾ 3. ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՎԱԾ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԻ ՑԱՆԿ

N	ՓԱՍՏԱԹՂԹԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ	ՉԱՓԱՆԻՇ/ՉԱՓՈՐՈՇԻՉ
1.	2015-2020 Ռազմավարական պլանի կատարողականի ցուցիչներ	1
2.	2015-2020 Ռազմավարական պլանի իրականացման հաշվետվություն/վերլուծություն	1
3.	Ամբողջ քոլջի տարեկան հաշվետվություններ կամ տնօրենի տարեկան հաշվետվություններ/վերջին հինգ տարների/	2
4.	«Ատամնատեխնիկական գործ», «Մանկաբարձական գործ», «Կոսմետիկա դիմահարդարման արվեստ» ՄԿԾ նկարագրերը	3
5.	Որակի կենտրոնի կողմից տնօրինվող գրանցամատյան, որտեղ գրանցվում է բենչմարկինգի գործընթացը	10
6.	“Ընդհանուր և անօրգանական քիմիա” “Դեղագործական քիմիա” և “Անալիտիկ քիմիա” , «Ընդհանուր դեղաբանություն» «Մասնավոր դեղաբանություն» «Պաթոլոգիայի հիմունքներ» մոդուլները	3
7.	Առարկաների, մոդուլների բովանդակության վերաբերյալ որևէ հարցման տվյալներ ուսանողների շրջանում:	3
8.	Մոդուլը ավարտելուց հետո, մնացորդային գիտելիքների գնահատման իրականացմանը վերաբերվող որևէ փաստաթուղթ:	3
9.	Բողոքարկման հանձնաժողովի որևէ արձանագրություն,	3
10	հաշվետվություն (տարվա կտրվածքով իրականացրած բողոքարկումների և նրանց արդյունքների վերաբերյալ) Կարգը գործում է 18 թվականի փետրվարից:	2
11	Ռեֆերատներ, որոնք դարձել են հետազոտություն մանկաբարձական գործ, դեղագործություն	3
12	Ռեֆերատ, որը դարձել է հետազոտություն /քույրական գործ ՄԿԾ/	6
13	Խորհրդատվական ծառայությունների իրականացման ժամանակացույց	4
14	Կուրսղեկների պլաններ/ժամանակացույցը, Չափորոշչում ներկայացված թվային տվյալները պարունակող հիմքեր	4; 5
15	Կուրսղեկների աշխատանքների կատարման վերաբերյալ հաշվետվություններ	5
16	«Ատամնատեխնիկական գործ», «Մանկաբարձական գործ» ամփոփիչ ատեստավորման քննությունների նախագահների հաշվետվություններ	3
17	ՈՒանողների ռեֆերատների օրինակներ /դեղագործություն, քույրական գործ, կոսմետոլոգիա մասնագիտություններով/	3

18	Ինքնավերլուծությունում նշվում է, որ յուրաքանչյուր տարի դասախոսների կողմից ներկայացվող օրացույցային պլաններում տեղ են գտնում նաև հետազոտությունների , մասնագիտական աճի և որակավորման բարձրացման ուղղությամբ իր կողմից պլանավորվող աշխատանքներ, ցանկալի կլիներ ստանալ նման փաստաթղթերի օրինակներ: Հնարավորության դեպքում նաև դրանց կատարողականին վերաբերվող փաստաթղթեր	3; 5
19	Դասախոսներին շնորհված գիտական և հետազոտական բնույթի այլ պատվոգրեր	5
20	Դասախոսների ուսումնամեթոդական և գիտամանկավարժական գործունեության արդյունավետության գնահատման ցուցանիշների համակարգ՝ այն ընդունելով որպես հիմք պրոֆեսորադասախոսական անձնակազմի տարբեր կարգի առաջընթացի և **անհատականացված աշխատավարձի վճարման համար:**	5
21	Մանկավարժական խորհրդի կողմից հետազոտությունների զարգացման վերաբերյալ **ընդունված ելային փաստաթուղթ՝** յուրաքանչյուր ուսումնական տարվա համար:	5
22	Կարճաժամկետ ռազմավարական ծրագրում նշված միջոցառումների իրականացման վերաբերյալ հաշվետվություններ	2
23	Գովազդային բուկլետների օրինակներ /բացի ԻՎ-ում ներկայացված մեկ օրինակը/	8
24	Առաջին բուժ. օգնության անվճար դասընթացների անցկացմանը վերաբերվող փաստաթղթեր **ժամանակացույց, կամ պլանավորմանը, իրականացմանը վերաբերվող փաստաթղթեր** (ըստ էության կայք էջում տեղադրվածը «դասընթաց» չէ որպես այդպիսին, այլ դասընթացի տեսական նյութն է, համեմված դիդակտին նյութերով՝ նկարներով)	8
25	Ռեզերվայի դասախոսների գրանցման շտեմարան	5
26	Բարոյական և խրախուսման համակարգի մեջ ներառված կադրերի ցուցակը	5
27	Մատյաններ տարբեր կուրսերի երեք ՄԿԾ-ների՝ ուսանողների գնահատականները	3
28	Դասալսումների մատյան՝ դիտողությունները ներառյալ	5
29	Խորհրդատուի կազմած ժամանակացույցը իր կատարած աշխատանքների վերբաերյալ	5
30	Դայակ ՄԿԾ-ի փաթեթը	3
31	Բոլոր ցիկլային հանձնաժողովների կարգերը, տարեկան պլաններ,	3

32	Ցիկլային հանձնաժողովների հաշվետվություններ	3

ՀԱՎԵԼՎԱԾ 4. ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՎԱԾ ՌԵՍՈՒՐՍՆԵՐ

- Լսարաններ, Կաբինետներ
- Գործնական պարապմունքների, պրակտիկաների կաբինետներ,
- Մնջոյանի անվան նուրբ օրգանական քիմիայի ինստիտուտի լաբորատորիա
- Գրադարան, ընթերցասրահ
- Բուժկետ,
- Համագործակից Պոլիկլինիկայի կաբինետներ
- Ստորաբաժանումների համար նախատեսված գրասենյակներ

ՀԱՎԵԼՎԱԾ 5. ՄՈՒՀ-Ի ԿԱԶՄԱԿԵՐՊԱԿԱՆ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ